Խմբագրական

«Պուրճ Համուտը՝ բոլորիս բոյնը», կ՚ըսէ վերջին տարիներուն լայն տարածում գտած ու ռափ ոճի մեղեդիի մը վրայ գրուած երգը: «Գաղթակայան», պիտի ըսէր Կ. Շահինեան, որուն ամէն մէկ քարին տակ վերապրողի մը արիւնն ու քրտինքը կայ, ուր մանկութիւն չունեցող որբը տուն շինեց եւ օրուան հացին համար կեանք մաշեցուց, ընտանիք կազմեց ու սերունդներ տուաւ ազգի վարժարաններուն: Պուրճ Համուտը՝ հնոց, որ իր հայախօսութեամբ վարակեց գաղթականութեան բոլոր օճախները՝ արեւելքէն մինչեւ արեւմուտք, ու մաքառման ոգիով դարձաւ բազկերակը մինչեւ հիւսիսային արուարձաններ, բայց նաեւ ծովէն ու ովկիանոսէն անդին ապաստանած հայորդիներուն:

Ի՞նչ կը տանի մարդ իր հետ երբ այսպիսի խտութեամբ ապրուած վայր մը կը ձգէ ետին ու կը մեկնի նոր գաղթականութեան: Ի՞նչ կը գտնէ ան երբ կը վերադառնայ տասնամեակներ ետք զինուած տեսախցիկի մը ոսպնեակով: Ահաւասիկ մարտահրաւէրը արուեստագէտին, որ կը ներկայանայ մեզի Արա Մածունեանի լուսանկարներով: Արուեստագէտի ձեռքին մէջ ոսպնեակը ի մի կը բերէ՝ աչք, սիրտ ու յիշողութիւն, տեսանելի դարձնելով բան մը, որ օրն ի բուն մեր առջեւը կը գտնուի բայց չենք տեսներ: Պուրճ Համուտն է, զոր տեսանելի կը դարձնէ իր բնակիչներուն ու արհեստաւորներուն ընդմէջէն, Պուրճ Համուտը ո՛չ թէ որպէս չնաշխարհիկ վայր, այլ՝ տուն: Ճիշդ այդ տունն է, որ մէկէն կը զարնուի մեր տեսողութեան, կը սթափեցնէ մեզ մեր ապրած վայրերուն հանդէպ մեր ունեցած ապերախտ մոռացկոտութենէն: Անոր բնակիչներու անմիջական նիստ ու կացէն մեզի հասնողը կապ մըն է, մեզ կապող անցեալին ու ներկային, որովհետեւ Արա Մածունեանի ոսպնեակէն՝ մենք մեզ է որ կը տեսնենք, սկիզբէն մինչեւ այսօր: Այդ է տարաշխարհիկ հմայքը Մածունեանի լուսանկարներուն, որոնց առջեւ կը բանանք «Բագին»ի այս թիւին էջերը:

Բագին

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 ԾԷ. ՏԱՐԻ, ԹԻՒ.4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յովնան Մեծատուն
թատրերգութիւն չորս արարով | ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆ 5

Դերենիկ Դեմիրճեանի
Յովնան Մեծատուն թատրերգութիւնը՝
մէկդարեայ առեղծուածի միջով | ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ 27

Բանաստեղծութիւններ | ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ......................36

Բանաստեղծութիւններ | ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ...................................41

Բանաստեղծութիւններ | ՍԱՄՈՒԷԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ.......................43

Խմբագիր | Սոնիա Քիլէճեան-Աճէմեան
Խմբագրի օգնական-վարչական պատասխանատու | Արին Չէքիճեան
Էջադրում | Արին Չէքիճեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մարուշ Երամեան
Վիգէն Թիւֆէնքճեան
Յակոբ Կիւլլիւճեան
Աւետիս Հաճեան
Վարդան Մատթէոսեան
Ծաղիկ Մկրտիչեան
Արքմենիկ Նիկողոսեան
Արամ Պաչեան
Սեւան Տէյիրմենճեան
Միրնա Տուզճեան
Յարութիւն Քիւրքճեան

«ԲԱԳԻՆ»

Կողքի լուսանկարը՝ Արա Մածունեանի
«Մար Մարուն, նոր Ամանոս թաղամաս»

Քանի մը տողով (Դ)
կարճ, աւելի կարճ
եւ մանր պատմուածքներ | ԽԱՉԻԿ ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ..................45

Նամականի Կոստան Զարեանի
եւ Կարա-Դարվիշի | ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ....................................50

Կրթական եւ մշակութային հարցադրումները
հայ գրողների 1918-1920 թուականների
նամակագրութեան մէջ | ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ 61

Ոսպնեակէն դիտուած
Յարցազրոյց Արա Մածունեանի հետ | ՅՐԱՅՐ ԱՆՄԱՀՈՒՆԻ....68

Նոր հրատարակութիւններ 86

Հրատարակութիւն՝ Համազգայինի Կեդրոնական վարչութեան

Հասցէ՝
Պուրճ Համուտ
Ծաղզոյեան կեդրոն, Բ. յարկ
E-mail: pakin@hamazkayin.com
Հեռ. 00961 1 241072

Տպագրութիւն՝
Համազգայինի
«Վահէ Սէթեան» տպարանի

Ցրուումի կեդրոն՝
Համազգայինի Գրատարած,
Ծաղզոյեան կեդրոն,
Պուրճ Համուտ

Հեռ. (01) 241263/4
Ֆաքս. (01) 260329
Փոստարկղ. 80 1096 Պուրճ Համուտ
E-mail: print@hamazkayin.com

Դերենիկ Դեմիրճեան
© Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարան

ՅՈՎՆԱՆ ՄԵԾԱՏՈՒՆ
ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՉՈՐՍ ԱՐԱՐՈՎ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆ

Գործող անձինք

ՅՈՎՆԱՆ – *մեծահարուստ հայ*
ՆԱԶԷ – *Յովնանի կինը*
ՄԱՐԷ – *Յովնանի մայրը*
ԽՈՐԷՆ – *Յովնանի որդին*
ՆՈՒՆՈՒՖԱՐ – *Յովնանի հարսը*
ՀԵՐԻՔ – *Յովնանի աղջիկը*
ՀԱՅԿ – *Յովնանի թոռը*
ՍԱՀԱԿ – *Նունուֆարի հայրը*
ՀԱՍԱՆ ՊԷՅ - *թուրք բարձրաստիճան փինուորական*
ԹԱԼԱԼ - *մունետիկ*
ՎԱԼԻ ՓԱՇԱ – *թուրք բարձրաստիճան պաշտօնեայ*
ՖԱՅԻԿ – *թուրք փինուորական պաշտօնեայ*
ԱԲՐՕ – *Խորէնի հարսանիքի հիւրերից, ընչազուրկ հայ*
ՁԱՐԴԱՐ - *Խորէնի եւ Նունուֆարի հարսանիքի քաւորը*
ԵՂՕ - *Խորէնի հարսանիքի հիւրերից*
ՁՆԴՕ - *Խորէնի հարսանիքի հիւրերից*
ՉԱՒՈՒՇ – *Հասան պէյի ծառան*
Ա. ԶԱՊԹԻԷՀ - *թուրք ոստիկան*
Բ. ԶԱՊԹԻԷՀ - *թուրք ոստիկան*
ՀԻՒՐԵՐ
ԾԱՌԱՅ
ԵՐԷՑ
ՀԻՒԱՆԴ ԿԻՆ
ՊԱՇՏՕՆԵԱՅ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Ա. արար

Յովնան Մեծատունի սենեակը՝ փոքրապահական ճաշակով կարդարուած: Դիմացի եւ ձախ պատերի տակ սաքուներ են՝ մինտարներով եւ մութաքաներով: Պատերին ու յատակին գորգեր ու կարպետներ են, դիմացի եւ ձախ պատերին՝ մի-մի երկաթավանդակ պատուհան՝ գոյնըզգոյն ապակիներով: Դիմացի եւ ձախ պատերի անկիւնում մի դուռ է, որը զըլխաւոր մուտքն է: Ձախ պատի մէջ եւս մի դուռ կայ, որ կանանց բաժինն է: Սաքուները քառակուսի սիւներ ունեն, որոնց գլուխների խոյակները միանում են իրար՝ կանապան ծակոտկեն քանդակներով ոճաւորուած: Երեկոյ է: Պատերին ճրագներ են վառած: Յարսանիքի հիւրերը ներս են մտնում: Նունուֆարին եւ Խորէնին՝ իբրեւ պսակուած կոյզի՝ շրջապատել են քաւորը՝ Զարդարը, ջահել տղաներ: Յետեւից գալիս են Սահակը, Զնդօն, Եղօն եւ այլ հիւրեր:

ՀԻՒՐԵՐ (Բացագանչում են) – *Հայ-հայ, շնորհաւո՜ր, շնորհաւո՜ր, շա՜տ-շատ ապրեն, ոտքերը բարի՜:*

Բոլորը մտնում են ներս եւ բոլորւում շուրջանակի. դիմացը կանգնում է պսակուող զոյգը, որոնց դիմաց Յովնանն է, Նազէն եւ Սահակը: Ձախ դռնից, ձեռքը բռնած, դուրս են բերում պառաւ Մարէին, որ կոյր է եւ կորաքամակ: Երբ ամէնքը բոլորւում են հարսի շուրջը, նուագը դադարում է:

ՅՈՎՆԱՆ (Մարէին) – *Մարէ՜:* (Մարէն չի լսում): *Մարէ՜:*
ՄԱՐԷ (Խուլ, պառաւ ձայնով, կոյր աչքերը տարածութեան մէջ) – *Ո՞վ է:*
ՀԻՒՐԵՐ – *Տղան է, Յովնանը, Մարէ՜, քեզ բան է ասում:*
ՅՈՎՆԱՆ (Մարէի ականջն ի վար, բարձր) – *Մարէ՜, օրհնէ՜ թոռիդ ու հարսիդ ժամից եկան, պսակուեցին:*
ՀԻՒՐԵՐ – *Օրհնէ՜, օրհնէ՜:* (Պսակուած զոյգին) *Խորէ՜ն, Նունուֆա՜ր, առա՜ջ եկէք, չոքեցէ՜ք:*

Խորէնն ու Նունուֆարը չոքում են Մարէի դիմաց եւ ձեռը համբուրում:

ՄԱՐԷ (Գլխի ընկնելով) – *Հա՜, հա՜... դո՞ւք էք: Ապրիք, բալանե՜րս, պսակով ծերանաք: Ծլիք, ծաղկիք, ջրի պէս յորդորիք: Յովնա՜ն, սեղանդ հայր Աբրահամու սեղան ըլի: Աստուած Մարէիդ հոգին առջեւդ առնէ:*
ՀԻՒՐԵՐ – *Ամէ՜ն, ամէ՜ն: Հոգո՜վ կշտանաս, Մարէ՜, Աստուած անուշ մահ տայ քեզ:*
ՍԱՀԱԿ (Առաջ գալով) – *Յովնա՜ն, աղջիկս չէ՜, թէ տղիդ եմ տալիս, տղա՜ն եմ աղջկադ տալիս: Նրանց յոյսն ու սիւնը դու ես: Էլ ես չկամ:* (Համբուրելով

զոյգին) *Շէն սրտով մնաք, ցամաք աչքով, բալանէրս:*

ՀԻՒՐԵՐ – *Ամէն, ամէն:* (Նունուֆարը մէկ-մէկ համբուրում է Մարէի, Յովնանի, Նազէի եւ ապա աւելի պատուաւոր ու հասակաւոր հիւրերի ձեռքերը):

ՅՈՎՆԱՆ – *Դէ, փառք քեզ, Աստուած:* (Մօտենում է Մարէին եւ, բռնելով նրա թեւից, տանում նստեցնում է սաքուին: Հիւրերը ժպտալից դիտում են այս տեսարանը): *Էհ, համեցէք, էֆէնտինէր, նստեցէք:*

Հիւրերը նստում են: Մէջտեղում նստած է Մարէն, աջ եւ ձախ կողքերին՝ Սահակը, Ջնդօն, Զարդարը, Եղօն եւ այլ պատուելի մեծեր: Աւելի առջեւում՝ ձախակողմը, կանայք են, հասակաւորները՝ սաքուին, ջահելները՝ յատակին, ծալապատիկ: Աջ կողմում՝ դրան մօտ, ջահել տղաներ են եւ սպասաւորներ: Ձախ անկիւնում կանգնած են հարսն ու փեսան: Հարսը՝ ձեռքերը բարեւ բռնած, երեսին թափանցիկ քող ունի: Փեսան կանգնած է նրա աջ կողքին՝ անշարժ եւ ջերմեռանդ:

ՅՈՎՆԱՆ (Որ բարեւ բռնած՝ կանգնել էր Մարէի առջեւ, ծափ է խփում աջ ձեռով ձախ ափին, որ ծառան ներս գայ): – *Էյ, տղայ:*

ԾԱՌԱՅ (Ձախ դռնից մտնում, բարեւ բռնած կանգնում է Յովնանի դիմաց): – *Էֆէնտիմ...*

ՅՈՎՆԱՆ – *Դուրան ինչ բանի են:*

ԾԱՌԱՅ – *Հացը գցենք:*

ՅՈՎՆԱՆ – *Կեցիր: Տուիր աղքատների բաժինը:*

ԾԱՌԱՅ (Զուարթ ու ճարտար) – *Էֆէնտի, գելը կերաւ, ծիտը ժողուեց, մուկը կրեց, ոտները մաշեց:*

ՀԻՒՐԵՐ (Ծիծաղում են) – *Մեկ բան չեն թողել:*

ՅՈՎՆԱՆ – *Լաւ: Ճամբորդներին, հիւանդներին...*

ԾԱՌԱՅ – *Աշխարհք լիացաւ, էֆէնտի:*

ՅՈՎՆԱՆ – *Աբրօն ինչու չեկաւ:*

ԾԱՌԱՅ – *Աբրօն էլ՝ միւս աղքատների հետ, ստացաւ իր բաժինը:*

ՅՈՎՆԱՆ – *Չէ, ուրախութիւն է, միասին անենք. ով որ դրանը կանգնել է, կանչիր ներս գան:*

Ծառան գնում է:

ԵՐԷՑ – *Վարձքդ կատար, Յովնան:*

ՀԻՒՐԵՐ – *Հայր Աբրահամու փայն ուտես:*

Ներս են մտնում Աբրօն եւ այլ աղքատներ: Հիւրերը ետ-ետ են քաշւում ձախակողմը եւ դրան մօտ տեղ են բաց անում նրանց համար:

ՅՈՎՆԱՆ (Աղքատներին) – *Անուշ արէք, նստեցէք:*
ԱԲՐՕ – *Աստուած քեզ մէկին հազար տայ, Յովնան պատուելի, նեղութիւն մի՛ քաշի, մենք...*

Նստում է դրան մօտ, միւս աղքատները հետեւում են նրան: Ծառան ուրիշ ծառաների օգնութեամբ ներս է բերում կերակուրներ, միրգ, գինի, ծաղիկներ եւ դնում հիւրերի առջեւ՝ փոքրիկ խոնչաներով:

ՅՈՎՆԱՆ (Ծառաներին ցոյց է տալիս աղքատների կողմը): – *Այն կողմն էլ:*

Ծառաները սարքում են նաեւ աղքատների սեղանը:

ՀԻՒՐԵՐ (Յովնանին) – *Դէ՛ նստիր, Յովնան էֆէնտի:*
ԶԱՐԴԱՐ.- *Թո՛ւ... Յովնանի ձեւերը չվերջացան...*
ՅՈՎՆԱՆ (Մօտենալով Մարէին՝ մի պահ լռում է եւ արձանացած նայում նրան. կարծես մտքում խօսում է մէկի հետ: Յետոյ բարձրաձայն՝ Մարէին) – *Մարէ՛, յիշենք հներին, անցեալներին:* (Մարէն ուշադրութիւնը լարում է): *Պապուկներ, մամուկներ, հին նախնիներ... ձեր շուքերը հիմի նստած են այս յարկի տակ: Առաքել պապուկ, Բաղդասար պապուկ... մամուկ Հերքօ...*
ՄԱՐԷ (Մի տեսակ միսթիկ ոգեւորութեամբ կցելով) – *Ղունկիանոս ապուպապ, Մերկէր ապուպապ, Ղեւոնդ, Մագթա՛ղ...*
ՅՈՎՆԱՆ – *Հին ապուպապեր, ձեր շուքը իմ օճախի վրայ:* (Նազէին) *Նազէ՛, արի Մարէի աջն առ:* (Հերիքին) *Հերի՛ք, Հայկին բեր:* (Հերիքը հիւրերի միջից առաջ է բերում փոքրիկ Հայկին): *Հա՛յկ, տղա՛ս, արի մամումամիդ ձեռքը համբուրիր:* (Նազէն եւ Հայկը համբուրում են Մարէի ձեռքը): *Մարէ՛, աջդ տուր:* (Մարէն մեկնում է աջը Յովնանին: Սա չոքում է, համբուրում, ապա վեր կենում): *Նազէ՛, գնա գործիդ: Հա՛յկ, արի Մարէի գիրկը:*

Մարէն նստում է, Յովնանը Հայկին տալիս է Մարէի գիրկը:

ԶԱՐԴԱՐ (Որ հիացքով դիտում էր այս տեսարանը): – *Օրհնուի՛ սովորութքդ, Յովնան, որ ամէն բանի բարակները գիտես: Երեւում է, թէ ծերին յարգելը ինչ անուշ խորհուրդ է:*
ՅՈՎՆԱՆ (Ցոյց տալով Մարէին) – *Նախնիներս սրա կոյր աչքերի միջից ինձ են մտիկ տալիս:*
ՀԻՒՐԵՐ – *Նախնինե՜րդ...*
ՅՈՎՆԱՆ – *Սրա չորս բոլորը նրանց շուքերն են նստած, եւ գիշերները նրանց փսփսոցը լսում եմ:* (Հիւրերը մի ակամայ ակնածանք են զգում): *Է՜հ, առաջ քան խնճոյք՝ յիշենք Աստուած:*

ԵՐԷՑ – *Օրհնեալ է անունն Աստծոյ:* (Ցածրաձայն կարճ աղօթք է մրմնջում, որից յետոյ վերցնում է գինով լի գուռը): *Է՜հ, արդար Յովնանի աչքը ամէնքին տեսաւ, Աստուած հաճեցաւ: Կենդանութիւն, հրամմն է ձեզ, քէֆ արէք:*
ՀԻՒՐԵՐ (Գինի եւ օղի լցնելով գաւաթները՝ խմում են).- *Յովնան պատուելի, տղադ ու հարսդ ապրեն:*
ՅՈՎՆԱՆ – *Անուշ:*
ՀԻՒՐԵՐ – *Ջանդ անուշ:*
ԶԱՐԴԱՐ (Մտածկոտ) – *Աւէք թէ բախտաւոր հարսանիք լինէր, մենք էլ էս պատերազմի փորձանքներից ազատուէինք:*
ՅՈՎՆԱՆ – *Փորձանքն էլ, փրկութիւնն էլ Աստծու ձեռին է:*
ԶԱՐԴԱՐ – *Փորձանքը որ գայ, ուրիշ բան կը խօսես:*
ԵՂՕ – *Մարդ Աստծոյ, թողէք մեր քէֆն անենք:*
ԶԱՐԴԱՐ – *Չէ՛, կեցիր, ես Յովնանին պիտի կպչեմ: Թէ նա ժողովարանի փիլիսոփան է, ես էլ դրսի փիլիսոփան եմ:*
ՍԱՀԱԿ – *Հայ-հո՜յ, խնամուս կպչե՜ս: Դու որ ուսումնարան էիր գնում, խնամիս ուսումնարանից գալիս էր:*

Հիւրերը ծիծաղում են:

ԵՂՕ – *Ջանո՛մ, Յովնանն էլ, դուք էլ ինչ կ՚ուզէք, խօսէք: Շուկան ուրիշ բաներ են ասում:*
ՀԻՒՐԵՐ (Անհանգիստ) – *Ի՞նչ, նորէ՞ն լուր ունես:*
ԵՂՕ – *Ջարդ պիտի լինի:*
ՀԻՒՐԵՐ – *Ջա՜րդ…*

Բոլորը նայում են Յովնանին:

ՅՈՎՆԱՆ – *Ջա՜րդ…* (Քմծիծաղով) *Խելքդ ո՞ւր է: Պատերազմը սահմանի վրայ, մենք՝ ներսերը, քաշուած մէկ անկիւնը: Ջա՜րդ… Սահմանի վրայ՝ գուցէ: Բայց մեր քաղաքում… մտքէդ չանցնիս:*
ԵՂՕ – *Սահմանի վրայ ջարդել են, էստեղ էլ կը ջարդեն:*
ՅՈՎՆԱՆ – *Ասածդ հասկանո՞ւմ ես: Կարելի՞ բան է՝ հանգիստ ժողովուրդը ջարդել: Ապստամբ ենք, թէ՞ աւազակ… Ջարդը ուրիշների համար է:*
ԵՂՕ – *Ամմեղ ենք, բայց պիտի ջարդեն:*
ՅՈՎՆԱՆ (Սրտնեղ) – *Է՜հ, օրէնք չկա՞յ:*
ԵՂՕ – *Չգիտեմ, բայց պիտի ջարդեն:*
ՅՈՎՆԱՆ – *Աստուա՞ծ ուր է:*
ԵՂՕ – *Աստուա՜ծ… Աստուած ո՞ւր էր հին ջարդերի ժամանակ:*
ՅՈՎՆԱՆ (Մռայլուելով) – *Հին ջարդե՜րը…* (Կարծես ինքն իրեն) *Հա՛, դաժան*

բաներ էին… (Մի փոքր նշանակալից) *Հին ջարդերը, սիրելի՛ք, դաժան բաներ էին, խօսք չկայ: Բայց ես ձեզ ուրիշ բան ասեմ: Ահա ամէնքդ էլ գիտէք՝ համարեա կառավարական բարձր պաշտօնեայ եմ…*

ՍԱՀԱԿ (Լրացնելով) – *Ազգապետ…*

ՅՈՎՆԱՆ (Ընդհատելով) – *Այդ ոչինչ: Դեռ օրէնագէտ էլ եմ եղած: Օրէնքի գրքեր եմ շարադրել: Այդ էլ ոչինչ: Շատ ազգերի օրինագրքեր եմ կարդացել: Բայց կարծում էք՝ իմ յոյսը դա՞ է: Ոչ մի բան իմ սրտին այնքան նեցուկ չէ՝ անձի օրէնք, պետութեան օրէնք, որքան մի բան, որ միշտ աշխարհիս տակին նկատել եմ: Տեսէք՝ ժողովրդին կոտորում են, ոչնչացնում, նեղում: Բայց ժողովրդի արմատին ձեռ չեն տալիս, չեն կարողանում: Չի լինում: Չի եղել: Ձեզ բան ասեմ. շատ եմ մէջս կշռել ու տեսել եմ, որ մէկ վերջնական արդարութիւն կայ Աստծոյ տնտեսութեան մէջ:*

ԵՐԵՑ (Երեսը խաչակնքելով) – *Փառք իր զօրութեան:*

ՀԻՒՐԵՐ (Նոյնպէս խաչակնքելով երեսները) – *Աստուած մեծ է:*

ՅՈՎՆԱՆ – *Այնպէս որ, ճիշդ է՝ ապստամբներին կը պատժեն, մի քիչ էլ բնակչութեանը կը նեղեն: Բայց որ ժողովրդի՞ն ձեռ տան, երբե՛ք: Մեր մասին որ խօսք չկայ. մենք անվտանգ ենք:* (Զուարթանալով) *Օղի վերցրէք, էֆենտինե՛ր, Աստուած է օրհնել մեր ուրախութիւնը:*Հիւրերը զուարթանում են: Յովնանը վերցնում է օղին, միւսները հետեւում են նրան:

ԶԱՐԴԱՐ – *Կեցէ՛ք, կեցէ՛ք: Յովնա՛ն, մէկ էն ոտանաւորդ ասա, էն որ ժողովարանը կարդացիր. ի՞նչ էր անունը՝ «Արարչական արդարութի՞ւն»: Հը՞: Ասա՛, ոտքդ պագնեմ:*

ՀԻՒՐԵՐԻՑ ՄԷԿԸ – *Ծօ՛, էս ինչ վէճի ու կռուի քաղաք է եղել ձերը: Մա՛րդ Աստծոյ, թողէք մի քէֆ անենք, է՛…*

ՍԱՀԱԿ – *Մեր քաղաքի բերքն ի՞նչ է՝ կռօնի վէճ:*

ՅՈՎՆԱՆ (Ուզում է օղի վերցնել: Հիւրերին) – *Է՛, կենդանութի՛ւն, ո՛ղջ լինէք:*

ՆԱԶԷ (Մօտենալով Յովնանին, կէս լուրջ, կէս կատակ) – *Դու մի քիչ օղուց հեռու. վերցնողներից չես:*

ՅՈՎՆԱՆ (Զուարթ) – *Կնի՛կ, ափսոս քեզ, որ այս երեկոյի ուրախութեան խորհուրդը չես հասկանում: Տղայ եմ պսակում: Դեռ ինչե՞ր պիտի անենք այս գիշեր:* (Խմում է օղին): *Ա՛յ քեզ օղուց հեռու:*

ՀԻՒՐԵՐ (Ծիծաղում են): – *Տեսա՞ք:*

ՆԱԶԷ (Հեռանալով, հիւրերին՝ կէս կատակ) – *Խելքը պիտի կորցնի ուրախութիւնից: Սրա ուրախութիւնը մի քիչ փորձանքով է:*

ՅՈՎՆԱՆ – *Քէֆիդ նայիր. կեանքը ուրախութիւն է:*

ԶԱՐԴԱՐ – *Օհօ՛, էդ դո՞ւ ես ասում: Ժողովարանը բարակ աստուածաբանութիւն ես անում, հա՞:*

ՅՈՎՆԱՆ – *Գետնի վրա՞յ ես, դէ՛ քէֆ արա, որ տակը չես:*

ՍԱՀԱԿ – *Կեցա՛ր: Ծօ՛, քո վարպետը խնամուս աշակերտն է:*

ՅՈՎՆԱՆ – *Զգէ՛, ձգէ՛:* (Աշուղներին) *Դէ՛, աշուղնե՛ր, պարկէք տեսնեմ: Աշուղները նուագում են մի շուրջպար:*
ՍԱՀԱԿ (Հիւրերին) – *Դէ՛, ելէ՛ք:*
ՀԻՒՐԵՐ (Վեր կենալով) – *Օհօ՜, ծերերը ջահելացել են: Շուրջպար են բռնում: Մի երկու շրջան պարելուց յետոյ հները նստում են, նորերն են առաջ գալիս:*
ՍԱՀԱԿ – *Կեցէ՛ք, կեցէ՛ք: Իմ աղջիկն էս անգամ կարգէ դուրս պիտի խաղայ:* (Մօտենալով Նունուֆարին) *Դէ՛, աղջի՛կս, քե՛վ տեսնեմ:*

Մէջ է քաշում Նունուֆարին: Աշուղները նուագում են կենտապար, եւ Նունուֆարը սկսում է պարել:

ՅՈՎՆԱՆ (Որ արդէն մի քիչ գինով է, յանկարծ վեր է թռչում զուարթ): – *Կեցէ՛ք, կեցէ՛ք:*

Աշուղները լռում են, հիւրերը սպասում են նրան:

ՍԱՀԱԿ – *Հը՛, նախանձեցի՞ր:*
ՅՈՎՆԱՆ – *Կեցէ՛ք:* (Սահակին) *Դու աղջկանդ արժէքը այդպէ՞ս իմացար: Ոսկիների վրայ պիտի խաղացնեմ:*
ՀԻՒՐԵՐ – *Ոսկիների վրա՞յ:*
ՅՈՎՆԱՆ – *Իսկակա՛ն ոսկիների վրայ: Աստուած ինձ բախտ է տուել, ես նրան ուրախութիւն չեմ ցոյց տուել: Հիմի պէտք է ցոյց տամ:* (Գնում է դէպի ձախ սենեակը եւ դուրս բերելով մի արկղիկ, հանելով միջից մի փոքրիկ պարկ՝ գալիս է մէջտեղ): *Իմ հարսս այն հարսներից չէ, որ ոտը գետնին դիպչի:* (Հանում է ոսկիները եւ բռով տալիս ծառային): *Ծօ՛, ա՛ռ, շա՛ղ տուր: Փռի՛ր, փռի՛ր:*
ԶԱՐԴԱՐ – *Ամէն բանի մէջ ուրի՛շ համ կը գտնի:*
ՅՈՎՆԱՆ (Ծառային) – *Վախվխելով մի փռիր, շաղ տուր: Ուրախութիւնից թանկ բան չէ՛: Հէ՛րն եմ անիծել: Ունեմ-չունեմ չկա՛յ: Փռի՛ր: Դաւիթ Մարգարէի պէս պիտի խաղամ:* (Ծառան չոքած փռում է ոսկին: Աշուղներին) *Զարկեցէ՛ք:* (Աշուղները սկսում են նոր կենտապար: Նունուֆարին) *Դէ՛, հարսնացո՛ւ, քե՛վ տեսնեմ, առա՛ջ արի:*
ՆԱԶԷ – *Կեցէ՛ք, ջանը՛մ, ի՞նչ է անում:*
ՅՈՎՆԱՆ (Հիւրերին) – *Դէ ծա՛փ պարկեցէք:* (Հիւրերը գայթակղուած նայում են ոսկիներին եւ յափշտակուած ծափ տալիս: Յովնանը՝ մոլեգնած, անհասկանալի յափշտակութեամբ, նոյնպէս ծափ է տալիս: Նազէն սարսափած նայում է Յովնանին եւ ուզում է մի բանով արգելել, բայց կաշկանդուած է նուագի եւ ծափերի ձայներով): *Ապրե՛ս, հարսնացու:*
ՀԻՒՐԵՐ – *Ջա՛ն:*

Յովնանը մէջ է ընկնում եւ ինքն էլ պարում Նունուֆարի դիմաց: Նա մոլեգնած է, իրեն կորցրած: Ամէնքը մի տեսակ կատաղութեան մէջ են, բոլորի ծափերի, ձայների մէջ զգացւում է եւ գայթակղութիւն, եւ նախանձ, եւ խելագար ուրախութիւն:

ՆԱԶԷ (Սարսափած՝ Յովնանին) – *Կեցի՛ր, Մա՛րդ Աստծոյ, կեցի՛ր: Ձայները լռում են:*
ՅՈՎՆԱՆ – *Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ:*
ՆԱԶԷ – *Կեցի՛ր, արածդ քեզ չի վայելում: Յաւակնո՛ւմ ես: Կեցի՛ր, մի փորձանք կը բերես:*
ՅՈՎՆԱՆ (Գինով, զուարթութեամբ) – *Կնի՛կ, Աստուա՛ծ հետս պարում է եւ հրամայում է՝ պարեմ. ի՞նչ փորձանք:*
ՆԱԶԷ – *Աստծոյ ուրախութիւն չէ, Աստծուց վախեցի՛ր:*
ՅՈՎՆԱՆ – *Ես արդար եմ եւ Աստուած հետս է. աղքատներին տուի, հիւանդներին ղրկեցի. ի՞նչ մեղք ունեմ, որ վախենամ Աստծուց: Քէֆի՛դ նայիր: Աստծո՛ղ ինչ է: Աստուած այնպէս է օճախս հաստատել, որ էլ բան չի դիպչի ինձ:*
ՆԱԶԷ – *Լռի՛ր, դու գինով ես…* (Երեսը խաչակնքելով՝ անցնում է ձախակողմեան սենեակը): *Աստուա՛ծ, չհանես ահը սրտիցս:*
ՅՈՎՆԱՆ – *Յիմար խօսեցիր եւ պարը աւրեցիր:* (Աշուղներին) *Մեր գործին անցնենք: Դէ՛ կարկէ՛ք:*

Աշուղները շարունակում են նուագել:

ՅՈՎՆԱՆ (Նունուֆարին) – *Հա՛րս, առա՛ջ արի:*

Հիւրերը բացագանչում են, եւ Յովնանն ու Նունուֆարը սկսում են պարել: Ներս է մտնում Հասան պէյը: Դռների մօտ հիւրերը յետ են քաշւում, յարգանքով բարեւում, կանայք խմբւում են ձախ անկիւնում եւ երեսները ծածկում: Տղամարդիկ մի քիչ շփոթւում են: Ոմանք ուզում են Յովնանին իմաց տալ Հասան պէյի գալը, բայց նա ձեռքով հասկացնում է, որ թողլ տան Յովնանին պարել: Նա ժպտում է այս տեսարանի դիմաց: Բայց յանկարծ դիտելով Նունուֆարի գեղեցկութիւնը՝ սկսում է շլանալ: Մինչ նա քարացած նայում է Նունուֆարին, հիւրերն անհանգստանում են. նրանք մէ՛կ ուզում են Յովնանին կանգնեցնել, մէ՛կ էլ կարկամում են:

ՆԱԶԷ (Ներս գալով ձախ սենեակից եւ յանկարծ նկատելով Հասան պէյին՝ սարսափած յարձակւում է Յովնանի վրայ): *Կեցի՛ր, ի՞նչ ես անում:*
ՅՈՎՆԱՆ (Յովնան կանգնում է): – *Ի՞նչ եղաւ նորէն: Նունուֆարը, նկատելով*

Հասան պէյին, փախչում է անկիւնը:

ՀԱՍԱՆ ՊԷՅ (Ժպտալով Յովնանին) – *Ես եմ, Յովնան էֆէնտի… Պարի՛ր, պարի՛ր:*

ՅՈՎՆԱՆ – *Համեցիր, Հասա՛ն պէյ, բարի եկար:* (Հիւրերին, կանանց) *Ոչ մէկդ մի՛ քաշուէք, դուրս ելնելու հրաման չկայ: Հասան պէյը տանու բարեկամ է, իմ եղբայրը: Այսօր մի ուրախութիւն է ինձ համար, որ էդ կարգն ու սովորոյթը տեղ չունենն իմ տանը:* (Կանայք դեռ խմբուած ու պահուած են անկիւնում): *Առա՛ջ եկէք, Յովնան ու Հասան պէյ միեւնոյն բանն են այս գիշեր: Դէ՛:* (Կանայք սկզբում անհամարձակ, բայց յետոյ կամաց-կամաց առաջ են գալիս: Նունուֆարին) *Առաջ կանգնիր:*

Նունուֆարը միամիտ եւ անդիմադարձ կատարում է Յովնանի հրամանը: Հիւրերից ոմանք՝ դժգոհ, ոմանք՝ զարմացած, մի մասն էլ զուարճացած նայում են այս բոլորին:

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ներիր, որ տարաժամ ներս մտայ… Անակնկալ է, գիտեմ… Կ'ուզէի քեզ դուրս կանչել, բայց…*

ՅՈՎՆԱՆ – *Առաջ մէկ համեցէք նստիր, Հասա՛ն պէյ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ (Նստած է, աչքը՝ Նունուֆարին): – *Գործով եկայ, եւ քո ու քո հիւրերի ներողամտութիւնն եմ խնդրում յատուկ:*

ՅՈՎՆԱՆ – *Ի՞նչ ես ասում, Հասա՛ն պէյ, չէի իմանում, թէ քաղաք ես եկել, եթէ ոչ՝ ամենապատուաւոր հիւրս էիր այս գիշեր:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Քո ազնուութիւնն է այդ:* (Մի կողմ քաշելով Յովնանին եւ ցած ձայնով) *Աստուած չէր կամեցել, որ քեզ այս գիշեր, քո պատուին ու արտին յարմար հաճելի խօսք ասէի. շա՛տ եմ ցաւում: Մենակ՝ բարեկամի պարտք կատարած լինելու համար քեզ մի բան պիտի ասեմ, որ մի քիչ այս ուրախութեանը չի յարմարւում: Արդէն իսկ իմացած կը լինես եւ ժամանակն էլ սուղ էր, որ ուշացնէի… Տեղահանութիւն պիտի լինի:*

ՅՈՎՆԱՆ – *Տեղահանութի՜ւն: Միայն կը լինի, պէ՛յ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Այո՛, տեղահանութիւն, դէպի ներսերը:*

ՅՈՎՆԱՆ – *Անշուշտ արդարութիւնը պաշտպանուած է, եւ յանցաւոր տարրերը պիտի տեղահանուեն:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Բոլոր քաղաքները, գիւղերը, ժողովուրդը՝ ամէնքը պիտի տեղահանուեն:*

ՅՈՎՆԱՆ (Սթափուելով) – *Ժողովո՜ւրդը… Ժողովուրդը ամբո՜ղջ…*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ամէնքը, ամէնքը:*

ՅՈՎՆԱՆ – *Սպասի՛ր, պէ՛յ, ամէնքը որ ասում ես, նաեւ… ես է՞լ…*

ՀԱՍԱՆ ՊԷՅ (Ժպտալով) – *Դո՛ւ էլ , Յովնա՛ն էֆէնտի:*

ՅՈՎՆԱՆ – *Ես է՞լ…* (Լռութիւն) *Մեր քաղա՞քը, ժողովո՞ւրդը, ևս… յանցաւո՞ր: Չէ՛,*

անշուշտ թիւրիմացութիւն կայ: Թէ չէ՝ ինչպէ՞ս կարելի է, որ նա էլ:

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Սուլթանական իրատէ եկած է:* (Նայում է Նունուֆարին: Նազէն, նկատելով Հասան պէյի հայեացքը, անհանգստանում է: Կարճ, խռովեալ լռութիւն: Նազէն, ինչ-որ չար բան գուշակելով, յանկարծ մօտենում է Նունուֆարին եւ յետ է մղում դէպի անկիւնը): *Յովնա՛ն էֆէնտի, հարստ շա՛տ գեղեցիկ է եւ վտանգաւո՛ր գեղեցիկ...*

ՅՈՎՆԱՆ (Խայթուած) – *Գեղեցի՞կ...* (Առաջուայ մտքին դառնալով) *Օրէ՛նք կայ, արդարութի՛ւն կայ. ինչպէ՞ս չէ...*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Յովնա՛ն էֆէնտի, կ՚ուզե՛ս վաղը մտածենք այս մասին: Հարսդ շա՛տ գեղեցիկ է...*

ՅՈՎՆԱՆ – *Վաղը մտածե՞նք...*

ՀԱՍԱՆ ՊԷՅ (Նունուֆարով յափշտակուած՝ պատասխանը ուշացնում է): – *Այո՛:* (Սթափուելով) *Յատուկ ներողութիւն եմ խնդրում, ուրախութիւնդ խանգարեցի. եթէ իրաւունք կը տաս, կը մեկնեմ:* (Վեր է կենում): *Պաշտօնական գործեր ունեմ: Մնաս բարեաւ:* (Ներս մտնող հիւրերին բարեւում է): *Համեցէ՛ք:*

ՅՈՎՆԱՆ *(Տխուր)* – *Գնաս բարեաւ, Հասա՛ն պէյ:*

ՀԻՒՐԵՐ (Ճամբու զցելով Հասան պէյին) – *Հասա՛ն պէյ, օրէնք կայ, Աստուած կայ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ճակատագիր է:*

Հասան պէյը դուրս է ելնում: Նրա գնալուց յետոյ հիւրերը, զգալով դժբախտութիւնը, շփոթուած նայում են Յովնանին:

ՀԻՒՐԵՐ (Յովնանին) – *Յովնա՛ն էֆէնտի, ի՞նչ է եղել:*

ՅՈՎՆԱՆ – *Մե՛ծ դժբախտութիւն...*

ԵՂՕ – *Ես ասում էի...*

ԱԲՐՕ (Որ դուրսն էր այդ ժամանակ՝ ներս ընկնելով): – *Տնաւերնե՛ր, ձեր տունը չաւերի, ի՞նչ բանի էք:*

ՀԻՒՐԵՐ – *Ջանը՛մ, մի ասէք իմանանք, ի՞նչ բան է...*

ԱԲՐՕ (Ընկնելով Յովնանի ոտները) – *Ամմա՛ն, աքմա՛ն, կուլո՛ւմ է, անձդ ապատէ...*

ՀԻՒՐԵՐ – *Զա՞րդ է...*

ԱԲՐՕ – *Խո՞ւլ էք, չէ՞ք իմանայ կուլումի ձէնը...*

Յովնանը միացել է տեղնուտեղը քարացած: Հիւրերը շարժւում են դէպի դուռն ու պատուհանները: Ոմանք աւելի առաջանում են դէպի Յովնանը եւ կուչ գալիս: Ճնշուած, անհանգիստ լռութիւն: Մի չարագոյժ ձայն է լսւում փողոցից՝ ժանգոտ եւ կերկերուն, որ դեռ հեռուից ձգւում է իբրեւ ձայն, բայց երբ մօտենում է, արդէն վերածւում է պարզ բառերի:

ՆԱԶԷ – *Ամա՜ն, ի՞նչ է ասում…*
ՁԱՅՆԸ (Մօտենալով) – *Պատրաստուեցէ՛ք…*
Ա. ՀԻՒՐ – *Թալա՜ն է…*
ԱԲՐՕ – *Թալա՜ն է… գիւղում, մեր կմանուկ պիտի ուրանայ…* (Մօտենալով Հայկին) *Երթանք, տղա՛ս:* (Դուրս է տանում Հայկին աջ կողմից): *Երթանք քիր:*
ՁԱՅՆԸ (Որ մօտ է դրանը) – *Պատրաստուեցէ՛ք… երեք օր ժամանա՛կ… հրամա՛ն է… պիտի երթանք Արա՛բիա… մնացողը ար՜ կ՚անցնի…* (Հեռանում է): *Պատրաստուեցէ՛ք…*
ՆԱԶԷ – *Ամա՜ն, ամա՜ն…* (Ծնկներն է ծեծում): *Աստուած պատիժներս տուեց:*

Ձայնը հեռանում է եւ կտրւում: Յովնանը եւ հիւրերը մէջտեղ են գալիս, արձանանում: Ամէնքը սարսափած են:

ՄԱՐԷ (Խուլ ու խռպոտ) – *Յովնա՜ն…*
ՅՈՎՆԱՆ (Հազիւ զսպելով իրեն) – *Ի՞նչ է, Մարէ:*
ՄԱՐԷ – *Հարսնիքը ինչո՞ւ կտրեց:*

Ճնշող լռութիւն: Ամէնքը վախեցած նայում են Մարէին, որ մի գերբնական ոգու պէս կոյր աչքերը տարածութեան մէջ չռած՝ աշխատում է որսալ ձայները: Ամէնքը վախենում են կարծես, որ Մարէն կ՚իմանայ դժբախտութիւնը՝ համարելով դա մի սարսափելի աղէտ:

ՄԱՐԷ (Որ անհանգստանում է լռութիւնից, գերեզմանային ձայնով) – *Մարդ չկա՞յ… Յովնա՜ն…* (Լռութիւն): *Հարսնիքը վերջացա՞ւ…*
ՅՈՎՆԱՆ – *Հարսնիքն սկսուե՛ց, Մարէ՛…*
ՆԱԶԷ (Չոքելով Մարէի առջեւ՝ գրկում է նրա ոտները): – *Հարսնիքը վերջացա՛ւ, Մարէ՛…*
ՄԱՐԷ (Զարագոյժ ձայնով, անհանգիստ) – *Վերջացա՞ւ… Ի՞նչ եղաւ…*
ՆԱԶԷ – *Տներս քանդուեց, Մարէ՛, սուլթանը մեզ քշում է Արաբիա:*
ՄԱՐԷ – *Քշո՞ւմ է, Արաբիա՞, ինչո՞ւ …*
ՆԱԶԷ – *Չգիտեմ, պիտի երթանք, Մարէ՛… Ողջ քաղաքը տնով-տեղով քշում է…*
ՄԱՐԷ (Վեր է կենում տեղից, բուի պէս մէջտեղ գալով, բռունցքը սեղմած, սպառնալից հայեացքը սեւեռած՝ սկսում է պար գալ): – *Էհէ՜յ… հարսանի՜ք է, պա՛ր բռնեցէք, քեմանի կարկեցէք, ծափ տուէք, հող լցրէք գլխիս, տղիս հարսանի՜քն է… տեսա՞ք… տեսա՞ք… Թագաւորնե՛ր, հարսնիք արէք, արէք տեսէք գիւղումի թագաւորին… Ամա՜ն, ամա՜ն…*

Մարէն կանգնում է, լռութիւն:

ԹԱԼԱԼ (Հեռուից) – *Պատրաստուեցէք... Զայնը գնալով խլանում է եւ կորչում:*
ՀԻՒՐԵՐ (Ցանկարծ սթափուելով) – *Եկէք, եկէք երթանք տներս...*
ԶԱՐԴԱՐ – *Ո՞ւր երթանք, գնալով ի՞նչ կը լինի: Մեծ ունենք էստեղ, կացէք մի ճամբայ հարցնենք:* (Յովնանին) *Յովնա՛ն էֆէնտի, ի՞նչ անենք:*

Բոլորը կանգնում են:

ՅՈՎՆԱՆ (Խորասոյզ, անճանաչելի, ոչ մարդկային ձայնով) – *Գէշ տեղը մըթնեց... Խախտւում է հաստատութեան հիմը... Գալիս է մարդու զայլանը:* (Լռութիւն): – *Աստուա՛ծ հասնի...*

Հիւրերը երկիւղած խաչակնքում են:

ԵՐԷՑ (Խաչակնքելով) – *Տէրն Մեր Յիսուս, Խաչեցեալն Ամենափրկիչ չօրաւ մեզ:*
ՅՈՎՆԱՆ – *Ժողովրդի արմատն է պոկւում: Հի՛ն ուրուականները վեր կացան գերեզմաններից:* (Լռութիւն): *Չէ՛, այսպէս կարելի չէ. օրէնք կայ, Աստուած կայ...*
ԶԱՐԴԱՐ – *Ի՞նչ անենք, Յովնա՛ն էֆէնտի:*
ՅՈՎՆԱՆ – *Ես կը դիմեմ օրէնքին եւ արդարութեանը:*
ՀԻՒՐԵՐ – *Աստուա՛ծ օգնական:*
ՅՈՎՆԱՆ – *Եկէք ձեզնից վաղը մի քանի մարդ էլ. ես ժողովրդի կողմից կ՛երթամ կառավարութեան դուռը, կը խօսեմ: Արդարութիւն կը պահանջեմ:*
ՀԻՒՐԵՐ – *Հա՛, եղա՛ւ, էդպէս էլ արէք: Սահակ, Ջնդօ, Եղօ, Զարդար էֆէնտիներ, գնացէք:*
ՍԱՀԱԿ, ՋՆԴՕ, ԵՂՕ, ԶԱՐԴԱՐ – *Կ՛երթանք Յովնանի հետ:*
ՅՈՎՆԱՆ (Դուռը ծեծելով) – *Հարսանիքը վերջացա՛ւ, գնաք բարով...*

Հիւրերը ցրւում են շփոթուած. կանայք՝ գլխիկոր, հեծկլտալով:

ԵՐԷՑ – *Տէրն Մեր Յիսուս Քրիստոս Ինքն հասնի, Աստուածածի՛նը բարեխօս:*

Խաչակնքում է եւ հեռանում: Մնացել են Յովնանը, Նազէն, Հերիքը, Նունուֆարը, Սահակը եւ Մարէն: Նունուֆարը՝ գունատ արձանի պէս, Խորէնը՝ գլխիկոր, կանգնած են մէջտեղում: Նազէն չոքած է գետնին՝ ոսկիների վրայ, եւ լուռ ծնկներն է ծեծում: Նունուֆարը, Խորէնը եւ Հերիքն անցնում են ձախ սենեակը: Նրանց հետեւում է Սահակը:

ՅՈՎՆԱՆ – *Հա՛... Աշխարհիքս հաստատուն չէր եղել: Մրջիւնի պէս ճամբի*

մէջտեղ բուն էինք շինել, կարծում էինք, թէ ապահով ենք… Հիմի ոտնէր են եկել մեկ կոխկռտելու:

Լռութիւն:

ՆԱԶԷ – *Ի՞նչ ասաւ Հասան պէյը:*
ՅՈՎՆԱՆ – *Էլ չգիտեմ: Կարծեմ Նունուֆարին գէշ նայեց:*
ՆԱԶԷ (Խորամիտ) – *Չէ՞… Ես էլ նկատեցի: Ուրիշ, ի՞նչ ասաւ…*
ՅՈՎՆԱՆ – *Չգիտեմ, գէշ բան:*
ՆԱԶԷ – *Գէշ բա՞ն… ի՞նչ… ասա՛, Աստծո՛ւ սիրուն:*
ՅՈՎՆԱՆ – *Հասկացրեց, որ… Նունուֆարին հաւանում է…*
ՆԱԶԷ (Վեր թռչելով) – *Ամա՜ն, տնէ-օջախէ հեռու: Է՜ս ինչ կուլում էր…*
ՅՈՎՆԱՆ – *Մեծ կուլում:*

Լռութիւն:

ՆԱԶԷ (Զգաստացած) – *Կեցի՛ր: Կեցի՛ր: Վնաս չունի: Դրա համար քեզ մի՛ կորցնի: Կեցի՛ր:* (Մօտենում է ձախ դրանը): *Խնամի՛:* (Ներս են մտնում Սահակը, Նունուֆարը, Հերիքը եւ Խորէնը): *Խնամի՛, Նունուֆարին տար ձեր տունը:*
ՍԱՀԱԿ – *Աստծու կապածը մարդ չի քանդի, խնամի՛: Եղածը եղած է:*
ՆԱԶԷ – *Դրա ժամանակը չէ: Տա՛ր:*
ՅՈՎՆԱՆ – *Ինչե՞ր ես ասում, ո՞ւր պիտի տանի: Նունուֆարը մեր հարսն է:*
ՍԱՀԱԿ – *Ա՛խ, Յովնան խնամիս էլ չի ուզում: Ո՞ւր տանեմ, կին չունեմ, մարդ չունեմ տանը:* (Յովնանին) *Աչքիս լոյսի պէս եմ պահել աղջկաս: Քեզ եմ հաւատում միայն… Խորէնս ջահել է…* (Լցուելով) *Ճամբան… Յովնան խընամի… ի՞նչ պիտի անես Նունուֆարիս…* (Յովնան լուռ է): *Յոյսս դո՛ւ ես… թէ չէ՝ աղջիկս կորած է…* (Արցունքները կուլ է տալիս: Նունուֆարին) *Արի…* (Գրկում է Նունուֆարին, որ հեծկլտում է հօր գրկում)*: Աստուած էսպէս ուզեց, որ հարսանիքդ սեւ լինէր, աղջի՛կս… Է՜հ, Աստծուն աղօթեցէք՝ ճամբուն տղան ու աղջիկը անփորձ մնան: Յովնան, էլ ես ու դու կորանք…* (Լաց է լինում)*: Է՜հ, երթամ դատարկ տունս նայեմ: Յովնա՛ն, պաւակս՝ քեզ, քեզ էլ Աստծուն եմ յանձնում: Բարի գիշեր:*

Դուրս է ելնում դիմացի մուտքից:

ՄՆԱՑԵԱԼՆԵՐԸ – *Բարի գիշեր:*

Հերիքը, Նունուֆարը եւ Խորէնն անցնում են ձախ սենեակը:

ՆԱԶԷ (Յովնանին) – *Լաւ, հիմի ինչ է միտքդ:*
ՅՈՎՆԱՆ – *Չգիտեմ:*
ՆԱԶԷ (Անհանգիստ) – *Չգիտե՞ս, ինչը չգիտես:*
ՅՈՎՆԱՆ – *Չգիտեմ, տեսնենք. խելքս շաղւում է: Խելք կորցնելու բաներ են:*
ՆԱԶԷ – *Ինչ պիտի տեսնես: Աղջիկը չպիտի՞ ապատես ձեռքից:*
ՅՈՎՆԱՆ – *Տեսնե՛նք:* (Ըստ երեւոյթին անտեղի սրտնեղելով) *Տեսնե՛նք: Պիտի երթամ կառավարութեան դուռը. պաշտպանութիւն պիտի պահանջեմ:*
ՆԱԶԷ (Անհանգստանալով) – *Հա՛, դէ էդպէ՛ս ասա:*
ԽՈՐԷՆ – *Էդ է ճամբան, էդպէս կը յաջողուի:*
ՅՈՎՆԱՆ (Նոյն սրտնեղութեամբ) – *Մի՛ ասէք, մի՛ ասէք: Աստուած հեռու տանի. մարդ կեանք փրկելու համար գէշ բաներ է անում: Ասա թէ վաղը Աստուծով գործը գլուխ բերեմ... թէ չէ... Մի՛ ասէք, մի՛ ասէք, լինելիք որ լինի...*
ՆԱԶԷ – *Դէ, յոյս Աստուած, էդ լինելիքը չի լինի:*
ՅՈՎՆԱՆ – *Հը՛մ, ո՞վ գիտէ, Աստուած տայ, որ չլինի:*
ԽՈՐԷՆ – *Լինի՛. էհ, ես ուր եմ: Թէ մեռնելու ենք՝ մեռնենք:*
ՅՈՎՆԱՆ – *Դու մահը չգիտե՛ս, լռի՛ր:*
ՄԱՐԷ (Վեր է կենում եւ առաջ գալիս: Կերկեր ձայնով եւ կոյր աչքերը տարածութեան մէջ) – *Յովնա՛ն...*
ՅՈՎՆԱՆ – *Քովդ եմ, Մարէ:*
ՄԱՐԷ (Սպառնալից, դողդոջուն ձայնով) – *Չերթա՛ս, իմացա՞ր...*
ՅՈՎՆԱՆ (Սրտայոյզ) – Չերթամ...
ՄԱՐԷ (Աւելի խիստ) – *Չերթա՛ս, Մարէին հողը չդրած՝ չերթա՛ս...* (Լռութիւն: Բոլորը ազդուած են Մարէի խստահայեաց եւ խորամիտ դէմքից: Նա հեռանում է Յովնանից եւ իր կոյր աչքերով նայում է չորս կողմ, ապա կարծելով, թէ իր դէմ Յովնանն է կանգնած, խօսում է դատարկ օդի մէջ՝ դաժան անէծքի սպառնալիքի ձայնով): *Մարէին չթաղած՝ չերթա՛ս...*

Բոլորը սարսափահար նայում են նրան:

Վարագոյր

Բ. արար

Վալի նահանգապետի ընդունարան դահլիճը: Աջ կողմում պարտէզի բակն է, որ մուտքի դուռ ունի դէպի աջ: Դիմացը՝ մէջտեղում, մի քարէ սանդուղք դէպի հետ է բարձրանում, ոլորւում դէպի ձախ, առաջ գալիս ու վերջանում մի դռնով, որից յետոյ աջից ձախ երկարում է մի լայն պատշգամբ՝ արաբական սիւներով: Դա ընդունարան դահլիճի պատշգամբն է: Պատշգամբի վրայ են բացուած դահլիճի պատուհանները, որոնցից երեւում են ներսում վառ-

ւող մի կանթեղ, բազմոցներ, սեղան եւ այլն: Պատըշգամբի ձախակողմում դրուած է մի բազմոց: Առաւօտ է: Հասան պէյը նստած է պատշգամբի աջ թեւակողմում՝ հասարակ աթոռի վրայ, եւ դիտում է պարտէզը: Ներս է մըտնում Ֆայիկ պէյը, որ բարձրանում է սանդուղքով:

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ահլամն, Ֆայիկ պէյ, լաւ արիր, որ եկար: Բարեւ:*

ՖԱՅԻԿ (Մտերմօրէն, բայց պաշտօնական վերապահումով բարեւում Հասան պէյին եւ ժպտում): – *Պէյ, ինչպէ՞ս ես:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Սպասում եմ Վալի փաշային: Դեռ չի եկել: Քեզ կարեւոր հրահանգներ ունեմ տալու:*

ՖԱՅԻԿ – *Հրամայի՛ր, պէ՛յ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ես նշանակուած եմ աքսորուող կարաւանի պետ մինչեւ Միջագետք: Դու իմ օգնականներից մինը պիտի լինես:*

ՖԱՅԻԿ – *Շատ ուրախ եմ, պէ՛յ: Շա՛տ ուրախ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ (Անհանգիստ ժպիտով) – *Ինչո՞ւ ես ուրախ:*

ՖԱՅԻԿ – *Յովնանի աղջկան կ՚ապատեմ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ (Հանգստացած) – *Հա՛, աղջի՛կը: Լաւն է: Որ հաւանում ես, քեզ լինի:*

ՖԱՅԻԿ – *Վախենում եմ՝ հետս չգայ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ի՞նչ խենթ բան… չգա՛յ որն է: Խլի՛ր:*

ՖԱՅԻԿ – *Ուզում եմ՝ իր կամքով գայ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Շատ բարակներն ես մանում:*

ՖԱՅԻԿ – *Է՛հ, ուզում եմ, բայց սէրը զօրով չի լինի:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ասել է՝ սէր ես զգել այդ աղջկան: Ղօչա՛ն…*

ՖԱՅԻԿ (Պարզօրէն) – *Վաղո՜ւց: Երբ դպրոց էի գնում, միշտ նրանց տան առջեւով էի անցնում:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ (Քահ-քահ ծիծաղելով) – *Օհօ՜, բանը խոշորացաւ: Է՛հ, էլ ի՞նչ ես ուզում, նպատակիդ հասար:*

ՖԱՅԻԿ (Տխուր ժպիտով) – *Չգիտեմ, խիղճս հանգիստ չէ… հա՛մ ասում եմ, հա՛մ՝ կղջում…*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Վայելի՛ր, վայելի՛ր, վերջը կը կղջանք: Ես Նունուֆարին եմ աչքս դրել: Պիտի քաշեմ: Բայց վախենում եմ՝ զօրով քաշելուց աղմուկ դուրս գայ եւ Վալիի ականջն ընկնի: Կարծեմ՝ Վալին գիտի, որ Յովնանը գեղեցիկ հարս ունի: Ականջը, որ զգեն, ինքը կը քաշի: Ռէուֆ պէյն էլ կարաւանի հետ է. նա էլ գիտի Նունուֆարին: Սիրտս հանգիստ չէ: Ուզում եմ աղջիկը իր կամքով բերեմ քովս, յետոյ, երբ կը հեռանանք, Յովնանին ճամբու կը դնեմ: Ափսոս է, հարամ չլինի քէֆս. լա՛ւ աղջիկ է:*

ՖԱՅԻԿ – *Գոնէ Յովնանը յետներս առնէինք, ընտանիքն ապատէինք, մեղք են:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ջհանտամը Յովնանն ու իր ընտանիքը… Նունուֆարին եւ կ՚առնեմ, աղջկան էլ՝ դու: Էլ մնացածների պահապանը եւ ու դու հօ չե՞նք: Բան չունե՞ս:* (Լռութիւն) *Ֆայի՛կ, ի՜նչ քէֆեր են սպասում մեզ… ի՜նչ հուրի-փերիներ… Վա՜հ, ի՜նչ գանձեր բացուեցին մէկէն ի մէկ… Ո՞վ կը սպասէր, հը՞… (*Ֆայիկը լուռ է*): Դէ գնա՛, հրամանի թուղթը ստացիր, ապա արի այստեղ: Շուտ-շուտ պիտի գնանք Յովնանի տունը եւ լաւ հսկենք: Թէ չէ՝ լուրը կ՚ընկնի քաղաքը, եւ գեղուհիները ձեռքերէս կը թռցնեն:* (Նայելով աջ) *Յովնանը եկաւ…*

ՖԱՅԻԿ – *Ցտեսութի՜ւն, պէ՜յ:*

Ֆայիկը դուրս է ելնում: Աջից մտնում է Յովնանը՝ մտախոհ եւ տխուր:

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Աստուած պահպանէ, Յովնան էֆէնտի:*

ՅՈՎՆԱՆ (Քաղաքավարի) – *Բարեւ, Հասան պէյ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ (Նստում է): – *Է՜հ, ի՜նչ եւ միտք անում, Աստուած մեծ է:*

ՅՈՎՆԱՆ – *Աստուած մե՛ծ է, պէ՜յ, միայն մեզ հասած աղէտը աւելի մեծ եղաւ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Աստծոյ կամեցողութիւնն է:*

ՅՈՎՆԱՆ – *Օրէնքները խախտւում են եւ Աստուած չանի բոլորովին ոչնչանան: Այսպէս որ գնայ, քարը քարի վրայ չի մնայ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Պիտի ուրախացնեմ քեզ. ես պիտի դառնամ տեղահանուող քարուանի պետը: Հիմի դու իմ պաշտպանութեան տակն ես:*

ՅՈՎՆԱՆ – *Քո պաշտպանութեան տակ. մինչեւ ուրե՞ղ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Մինչեւ Միջագետք:*

ՅՈՎՆԱՆ – *Ուրեմն այնպէս հասկանամ, որ ես ու ընտանիքս ապատուած ենք:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Եթէ կամենաս՝ ամէնքդ ապատուած էք, Յովնան էֆէնտի:*

ՅՈՎՆԱՆ – *Ես ի՞նչ պիտի չկամենամ:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ինչո՞ւ շիտակը չխօսենք: Գիշերս տուն որ գնացի, մէկ միտք եկաւ ընկաւ գլուխս ու սկսեց տանջել ինձ: Պարզապէս հարսիդ վիճակը ինձ շատ մտահոգեց: Աւապակ տարրերը ճամբին վխտում են: Ի՞նչ պիտի լինի նրա վերջը:*

ՅՈՎՆԱՆ – *Նրա վե՞րջը:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ախր չգիտես, հարսդ շա՜տ գեղեցիկ է: Եթէ վաղը ամբոխը չխլեց, ճամբին մի որեւէ աւազակ պիտի խլի: Բաւական է քաղաքից դուրս գաս, կը թռցնեն՝ անգին քարի պէս: Ասում եմ՝ անտանելի գեղեցիկ է: Ի՞նչ անենք, Յովնան էֆէնտի:*

ՅՈՎՆԱՆ – *Իմ հարսը ընկած է քո օճախը, պէ՜յ, եւ ես յոյս ունեմ, որ դու, բարեկամս լինելուց առաջ, մարդ ես անկասկած:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ձեռքէս ինչ որ գայ, պիտի անեմ: Ես չեմ կարող թողնել, որ*

այդպիսի մի գեղուհի արիկաների ձեռքն ընկնի: Շիտակն ասեմ՝ եթէ դու էլ չկամենայիր հարսիդ պաշտպանութիւնն ինձ յանձնել, ես պիտի կամենամ արդէն: Հա՛, այն էլ ասեմ, որ չեմ ուզում լինի էնպէս, թէ ես զօրով աղջիկ եմ քաշում: Քո տանից աղջիկ քաշելը ո՛չ քո պատուին է արժանի, ո՛չ էլ ինձ է սազական: Հարսդ պիտի հասկանայ, որ իր օգուտն այդ է: Քո էլ օգուտն այդ է: Դա հասկացնելու կարիք չունեմ: (Յովնանը լուռ է)*: Բան չեմ ասում. դեռ մի օր էլ ժամանակ կայ: Համոզիր հարսիդ, թող իր կամքով, բարեկամի պէս վաղը չէ միւս օրը գայ նստի իմ կառքը՝ ճամբայ ընկնենք:*

ՅՈՎՆԱՆ – *Ապա որդի՜ս, պէ՜յ… Ի՞նչ ասեմ որդուս… Ինչպէ՞ս կարելի է:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Որդիդ խոհեմ կը լինի եւ կ՚ըմբռնի, որ իր բախտը չբանեց: Բախտի բան է, Յովնա՛ն էֆէնտի: Հարսդ եթէ որդուդ վիճակուած լինէր, այսպէս խառն օրերի իրար չէին գայ: Կ՚երեւայ, թէ իմ բախտն է եւ Աստծով այդպէս էլ կը լինի:*

ՅՈՎՆԱՆ – *Մեր բարեկամութեան սիրուն, պէ՛յ, խնայիր որդուս, նա որ իմանայ…*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Որդիդ արդէն իսկ քաղաքում չի կարող մնալ: Նա պարտաւոր է, իբրեւ վինուոր, ատեանի ներկայանալ: Կինը հոյ չի՞ տանի հետը: Չէ՛, Յովնա՛ն էֆէնտի, Նունուֆարը իմ բախտն է: Մի՞թէ համաձայն չես:* (Յովնանը լուռ է)*: Այն էլ ասեմ, եթէ չուզենաս, ես կը հիւանդանամ:*

ՅՈՎՆԱՆ – *Բայց մի՞թէ, պէ՛յ, հնար չէ, որ բարեկամի պէս մեկ հետ լինես եւ այդ բանը չլինի:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Ճշմարի՜տ Աստուած, այնպէս յափշտակուած եմ հարսիդ գեղեցկութեամբ, որ ասածիդ պէս քովը չեմ կարող միանալ: Այս էլ բարեկամի խոստովանանք էր: Եթէ կ՚ուզես՝ սա մի հանելուկ է. նստիր մտածիր եւ ինձ պատասխան տուր վաղը:*

ՅՈՎՆԱՆ – *Իսկ մեր վիճակը ի՞նչ է լինելու:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Աստծով երբ բարեկամանանք, մի բան կ՚անեմ:*

ՅՈՎՆԱՆ – *Է՜հ, գէշ տեղ մթնեց օրերս, պէ՛յ: Հիմի պիտի նստեմ թղթէ մակոյկը եւ ընկնեմ ծովը:*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Է՜հ, Յովնա՛ն էֆէնտի, կեանքն էլ քամու բերանը դրած մի ճրագ է: Ի՞նչ իմանաս՝ երբ կը մարի: Հիմի ես ի՞նչ իմանամ՝ ե՞ս աւելի կ՚ապրեմ, թէ՞ դու: Ճակատագիր է:* (Լռութիւն)*: Է՜հ, ինչ որ է: Ես գնացի:* (Դիմում է դէպի դիմացի դուռը)*: Դու էլ գնա ձեռնոց համոզիր:*

ՅՈՎՆԱՆ (Հետեւից գնալով) – *Վերեւն Աստուած կայ, պէ՜յ…*

ՀԱՍԱՆ ՊԷՅ – *Աստուած հէնց այդպէս է ուզում:*

Հասան պէյը դուրս է գնում: Մի պաշտօնեայ, դիմացի դռնից մտնելով, խոնարհ բարեւում է Հասան պէյին եւ ապա դիմում Յովնանին՝ նոյնպէս խոնարհ բարեւելով:

ՊԱՇՏՕՆԵԱՅ – *Յովնամն էֆէնտի, Վալի փաշան այս րոպէիս ձեզ կ’ընդունի պատշգամբում: Մենա՞կ էք:*
ՅՈՎՆԱՆ –*Ո՛չ, քաղաքացիներ կան:* (Ցոյց տալով աջ կողմը) *Այնտեղ սպասում են:*
ՊԱՇՏՕՆԵԱՅ – *Ուրեմն Վալի փաշան այս րոպէիս դուրս կը գայ:*

Պաշտօնեան գլուխ է տալիս եւ հեռանում նոյն դռնից: Հասան պէյը դիմում է դէպի աջ դուռը եւ դուրս ելնում: Հէնց նա դուրս է ելնում, դուռը բացւում է, եւ քաղաքացիները ներս են մտնում: Նրանց մէջ են՝ Սահակը, Զնդօն, Զարդարը եւ Եղօն: Սրանք առաջ են անցնում: Նրանց հետեւում են մի խումբ այլ պատուաւոր քաղաքացիներ: Սրանք բարձրանում են սանդուղքով Յովնանի մօտ՝ պատշգամբի աջ գլուխը: Իսկ բակը հետզհետէ լցւում է մեծ ամբոխով: Ձախ դռնից ներս է գալիս Վալի փաշան: Յովնանը եւ քաղաքացիք խոնարհ ողջունում են նրան: Վալի փաշան քաղաքավարի եւ սիրալիր բարեւում է, նստում բազմոցին:

ՎԱԼԻ – *Ինչո՞ւ էք նեղութիւն կրել, որդի՛քս:*
ՅՈՎՆԱՆ – *Ձեր ողջութիւնն ենք հարցնում, Վալի՛ փաշա:*
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ – *Ձեր ողջութիւնը:*
ՎԱԼԻ – *Մեծապէս շնորհակալ եմ: Յուսամ՝ քաղաքը անվրդով պատրաստ է ճամբայ ընկնելու:*
ՅՈՎՆԱՆ – *Քաղաքից պատգամաւոր ենք: Բնակչութիւնը յուսահատ է մեծապէս:*
ՎԱԼԻ – *Զարմանալի է, ինչո՞ւ:*
ՅՈՎՆԱՆ – *Իրադէի միտքը կ’ուզէինք պարզել, Վալի փաշա: Ի՞նչ է տրամադրիր Իրադէն բնակչութեան այն մասի համար, որ անպարտ է եւ օրինական:*
ՎԱԼԻ – *Իրադէի միտքը պարզ է, էֆէնտինե՛ր: Մի կարգ վայրեր պատերազմի կրակին մօտ են եւ վտանգուած: Պէտք է մարդկային կեանքերն ապահովենք: Ուստի բնակչութիւնը կառավարութեան պաշտպանութեամբ պարպելու է իր բնակավայրը եւ ապահով տեղափոխուելու աւելի ներսերը՝ մինչեւ պատերազմի վտանգներն անցնեն: Է՛հ, որդի՛քս, հեշտ բան չէ՞ր այս պարզ բանը հասկանալը:*
ՅՈՎՆԱՆ – *Հեշտ բան է հասկանալը, բայց շատ դժուար բան է այդ բանը, տէ՛ր իմ: Թողնել տուն, օճախ, հայրենի հող եւ մեկնել հեռու Արաբիա… Շատ դժուար է այս պարզ բանը, վսեմափայլ տէր իմ…*
ՎԱԼԻ – *Այդքան մի յուսուէք, Յովնամն էֆէնտի, պարզապէս մէկ փոքրիկ անյարմարութիւն է, կամ լաւ եւս՝ անսովորութիւն:*
ՅՈՎՆԱՆ – *Գուցէ, վսեմափա՛յլ տէր, Իրադէն ինչ որ բան նախատեսո՞ւմ է ծե-*

րերի, մանուկների, յղիների համար: Ի՞նչ պիտի լինի նրանց վիճակը:
ՎԱԼԻ – *Առանձին գրութիւն չեմ ստացել այդ մասին տակաւին:*
ՅՈՎՆԱՆ – *Ուրեմն ի՞նչ անենք, երթանք փճանամք:*
ՎԱԼԻ – *Իրադէի հրամայական պահանջը ստիպում է ինձ յորդորել ձեզ, որ վաղը եւեթ ճամբայ ընկնէք:*
ՅՈՎՆԱՆ – *Ինչպէ՞ս ճամբայ ընկնենք, վսեմափայլ տէր: Ինչպէ՞ս քանդուենք-երթանք փորձանքների դռնովը ներս: Շնո՛րհ արէք, տէ՛ր իմ, թո՛յլ տուէք մայրաքաղաք երթանք եւ վերին ատեաններից օգնութիւն հայցենք:*
ՎԱԼԻ – *Վալիի պարտականութիւնը պիտի կատարեմ եւ ձեր անձերը վտանգից հեռացնեմ: Չեմ կարող թոյլ տալ, որ քաղաքից հեռանաք. ճամբաները վտանգուած են:*
ՅՈՎՆԱՆ – *Եթէ այդպէս է, թոյլ տուէք, տէ՛ր, մի կարճ ժամանակ քաղաքս մնանք եւ հեռագրով դիմենք բարձր ատեաններին:*
ՎԱԼԻ – *Շատ փափաքելի կը լինէր, եթէ դրա կարիքը տեսնէի: Ընդհակառակը՝ այսպէս ամէնից ապահով է:*
ՅՈՎՆԱՆ (Աշխատելով յուզմունքը զսպել) – *Համարձակւում եմ հարցնել, Վալի՛ փաշա, ինչո՞ւ է կատարւում այս ամէնը: Մենք թշնամի չենք, մենք աւազակ չենք, մենք դաւաճան չենք. մենք այս երկրի մշակներն ենք: Ի՞նչ է մեր յանցանքը, ինչո՞ւ է կատարւում այս ամէնը:*
ՎԱԼԻ – *Անկեղծ ասեմ՝ չգիտեմ:*
ՅՈՎՆԱՆ – *Դո՞ւք չգիտէք:*
ՎԱԼԻ – *Ես չգիտեմ: Յովնան էֆէնտի, չտանք այնպիսի հարցեր, որոնց չպէտք է պատասխանեմ:*
ՅՈՎՆԱՆ – *Ինչպէ՞ս հարցեր չտանք: Ինչպէ՞ս չիմանանք, թէ ինչու ենք ոչնչանում: Ահա մենք ճամբայ կ'ընկնենք: Եւ ես հարցնում եմ՝ եթէ ճամբին մի ահաւոր աղէտի հանդիպե՞նք...*
ՎԱԼԻ – *Ճակատագիր է, Յովնա՛ն էֆէնտի:*
ՅՈՎՆԱՆ – *Ի՞նչ է ուզում մեզնից ճակատագիրը:*
ՎԱԼԻ – *Ո՞վ իմանայ: Ճակատագրի լեզուն հանելուկ է: Ճակատագիրն էր՝ մեզ պատերազմ բերեց: Արի իմացիր՝ ինչո՞ւ:*
ՅՈՎՆԱՆ – *Պատերազմը մեծ աղէտ է: Բայց մի՞թէ մենք ենք յանցաւորը, որ ճակատագիրը մեզ է պատժում:*
ՎԱԼԻ – *Դուք յանցաւոր չէք, թերեւս դուք պատերազմի կռիւներն էք: Աշխարհի բան է: Այսպէս բերեց աշխարհի խաղը: Մէկը պիտի կռուէր, եւ ահա դուք էք կռւում:*
ՅՈՎՆԱՆ – *Եւ դա արդարութի՞ւն է, վսեմափայլ տէր:*
ՎԱԼԻ – *Արդարութիւն է:*
ՅՈՎՆԱՆ – *Ինչպէ՞ս, տէր իմ: Այն ժամանակ դարձեալ կրկնում եմ խնդիրքըս թոյլ տուէք վերին ատեանները երթանք եւ անձամբ պարզենք արդա-*

րութեան խնդիրը։

ՎԱԼԻ — *Յովնան էֆէնտի, Յովնան էֆէնտի, ինչ ես կորցրել վերին աշտեաններում։ Ինչ է յոյսդ՝ վերին աշտեաններն ես ուզում գնալ։ Դէ թոյլ տուր, ինչ պիտի ասեն քեզ վերին աշտեանները։ Նրանք էլ քեզ այն պիտի ասեն, ինչ որ ես։ Եւ ինչ ենք ես, նրանք, ամէնքը, ինչ կայ մեր ձեռքը. ոչինչ։ Հասկանանք աշխարհքը, էֆէնտիներ։ Աշխարհքս բիւրաւոր թելերով մի գործուածք է՝ մէկը կապած միւսին։ Աստուած ուր, վերին աշտեաններն ուր, Վալին ուր… Ես վերին աշտեանների կամքն եմ կատարում, նրանք՝ ուրիշի, ուրիշը՝ ուրիշի, ամէնքն՝ Աստծոյ։*

ՅՈՎՆԱՆ (Տխուր)։ — *Աստուա՞ծ է ուրեմն այս ամէնի պատճառը։*

ՎԱԼԻ — *Աստուած է վկայ, որ Աստուած է։ Ամենաչնչին բանը, որ կատարւում է, Աստծոյ կամքն է, որ կատարւում է։*

ՅՈՎՆԱՆ — *Այդ արդարութիւնը ես չեմ հասկանում։*

ՎԱԼԻ — *Հասկանանք աշխարհքս։ Կացէք, որդիք, ձեզ մի առակ ասեմ։ Անփոյթ դատաւորի մինը մի աղքատ կնոջ որդուն բանտ էր գցել եւ չէր հոգում՝ հակապէս մեղաւո՞ր էր, թէ՞ ոչ։ Օրէն մէկը այրի կինը բարձրանում է արա կտուրը եւ, առաջին չոքելով, աղաչանք է անում, որ իր որդուն բանտից ազատի։ Դատաւորը մերժում է։ Աղքատ կինը արտասւում է եւ յետ դառնում։ Հէնց հեռանում է, կտուրը փլւում է եւ դատաւորին տակովն անում։ Ոչ ոք չի իմանում, թէ ինչից փլուեց կտուրը։ Բայց ասում են՝ արդարութեան գրքի մէջ գրուած է, որ այրի կինը հեռանալիս արցունքի մի կաթիլ էր գցել դատաւորի տան կտուրին։ Եւ հողը այնքան ծանրացած էր եղել, որ ծանրութիւնը լցուելուն պակսելիս էր եղել արցունքի մի կաթիլի չափ քաշ։ Ընկաւ կաթիլը կտրան հողին, եւ կտուրը փուլ եկաւ։ Արդարութիւնը ծածուկ մնաց երկուսից էլ, բայց կատարուեց։ Աշխարհս կշեռք է, մեր գործերը՝ կշեռքի քարեր։ Որ քարը, ինչ քաշ որ ունի, իր վարձքն էլ այդ է։ Աստծու գութը ամենատես աչքերն ունի։ Մէկ մրջիւնի ոտ էլ որ ցաւում է իր բնի մէջ, Աստծու սիրտը ցաւում է երկնքում։ Գնացէք խաղաղութեամբ եւ անհոգ եղէք։ Ամէն բան Աստծոյ դատողութեան մէջ իր տեղը կը գտնի։ Ամենաչնչին բանը որ կատարւում է, Աստծոյ կամքն է կատարւում։ Թողնենք, որ կատարուի։*

ՅՈՎՆԱՆ — *Գեղեցիկ օրինակով խօսեցիք, տէ՛ր։ Համարձակւում եմ նկատել, որ ձեր ասած արդարութիւնը հիմիկուանից պարզ երեւում է։ Ես Աստծոյ առջեւ բոլոր աշտեաններին հիմի եւեթ ցոյց կը տամ արդարութիւնը, ու թող նրանք ցոյց տան մեր յանցանքը։ Թող արդարութիւնը հիմի կշռի ամէնքիս գործը։*

ՎԱԼԻ — *Ամէն բան ժամանակին է նայում։ Ամէն բան կը կատարուի, կը պատահի ժամանակի դատարանի համար։ Մի վախենայ, մենք ժամանակը կը մոռանանք, ժամանակը մեզ կը յիշի։ Անհոգ եղէք այս մասին։ Շատ եմ ապրել, շատ տեսել ու լաւ գիտեմ. սա էլ մի ձոր է, որ եկել է, պիտի լցուի,*

որ անցնի: Մի տարակուսէք, հայրենակի՛ց եղբայրներ: Այս յանկարծահաս աղէտը ժպիտով դիմաւորենք, Աստծոյ հաճութիւնը վաստակենք եւ այլեւ այսպիսի դառն օրեր չտեսնենք:

Վալին վեր է կենում:

ՅՈՎՆԱՆ – *Այն ժամանակ, յանուն մարդկութեան, կոչ եմ անում ձեզ՝ Դո՛ւք օգնեցէք այս աղէտաւոր ժողովրդին:*

ՎԱԼԻ – *Ե՛ս, է՛, ի՞նչ եմ ես, մի անկրակ մարդ: Ի՞նչ կայ իմ ձեռքին: Հա՛, մեղքանում եմ ձեր այրիներին, հիւանդներին եւ մանուկներին: Բայց ոչ մի ուրիշ գութի չեմ կարող նրանց յանձնել, քան Աստծոյ գութն է: Աստուած նրանց հսկի: Գնացէք, բարի ճանապարհ, Տէր ընդ ձեզ:*

Վալին դուրս է ելնում ձախից:

ՅՈՎՆԱՆ (Նրա հետեւից) – *Ասել է՝ երթանք փճանանք: Դա՞ է արդարութիւնը: Քառասուն տարի այս ձեռքովս այս երկրի տունն եմ շինել, ահա այսպէս կարկի՛ ձեռքիս:*

ՋՆԴՕ – *Երթանք, ջանը՛մ, երթանք: Դատարկ բան էր, ես գիտէի: Յովնանը շարժւում է դէպի դուրս: Նրան հետեւում են բոլորը: Հասնելով սանդուղքի գլխին՝ կանգ է առնում: Ժողովուրդը շրջապատում է նրան:*

ԺՈՂՈՎՈՒՐԴ – *Յովնա՛ն էֆէնտի, ի՞նչ եղաւ, մէկ ճար արա:*

ՅՈՎՆԱՆ – *Էլ մենք գին չունենք, էլ մենք ոչինչ ենք: Ասացէք ժողովրդին, թող ուրանայ:*

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ – *Ուրանա՞յ, ի՞նչը ուրանայ:*

ՅՈՎՆԱՆ – *Ի՞նչը... ամէն բան՝ կայք, պատիւ, խիղճ, հաւատ:*

ՋՆԴՕ – *Ի՞նչ է ասում, խելքը կորցրել է:*

ՅՈՎՆԱՆ (Բարկացած) – *Չեմ կորցրել, կեանքնե՛րդ ազատեցէք:*

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ – *Դէ մենք էլ կեանքն ենք ազատում:*

ՅՈՎՆԱՆ (Աւելի բարկացած) – *Կեա՛նքը՝ ամենապէտքակա՛նը, մնացածը՝ խիղճ է, հաւատ է, ի՞նչ հօրս ցաւն է, դատարկ բաներ են: Ազատուեցէ՛ք, կեա՛նքն ազատեցէք:*

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ – *Աղտոտուե՞լ... կարելի՞ բան է: Ի՞նչ է ասում, ուրանա՞նք:*

ՅՈՎՆԱՆ – *Վե՛րջը կը մաքրուէք: Կեանքը չվերջացաւ: Էլի կայ կեանք: Ապա ի՞նչ էք ուզում. ոճիրը գործուի, անպատիւ լցուենք հորերն ու լճե՞րը:*

ՄԻ ՔԱՂԱՔԱՑԻ – *Ճակատի գիր է:*

ՅՈՎՆԱՆ (Զայրագին) – *Ժողովո՛ւրդն ազատեցէք, դատարկ խօսքեր մի՛ խօսէք, ժողովու՛րդն ազատեցէք, ձե՛զ ազատեցէք: Ամբողջ ժողովրդով ելէք երթանք արդարութիւն պահանջենք:*

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ – *Ո՞վ կը թողնի, ո՞ւր երթանք, ո՞վ կը նայի մեզ:*
ՅՈՎՆԱՆ – *Վերին ատեանները չեն իմանում այս ոճիրը, մարդկութիւնը չի լսել. գիտէ՞ք ինչ կ՚անեն, եթէ իմանան, քար քարի վրայ չեն թողնի: Այս իմանամն... Լուր պէտք է տրուի մարդկութեանը:*
ՔԱՂԱՔԱՑԻ – *Էհ, Յովնան էֆէնտի, ինչ կարող ես անել:*
ԶԱՐԴԱՐ – *Ամէն տեղ էլ էս պիտի ասեն:*
ՅՈՎՆԱՆ – *Ամէն տեղ Էս պիտի ասեն: Երկաթ կը հագնեմ, պողպատ կը մաշեմ, կ՚երթամ կը գտնեմ այս ոճրի արմատը: Տեսնեմ՝ նոյնը կ՚ասեն:*
ԶԱՐԴԱՐ – *Ոճրի արմատը, ո՞վ է ոճրի արմատը: Մէկը մէկի վրայ է գցում, Աստծուն են ասում արմատը: Գնա, ինչ կ՚անես:*
ՅՈՎՆԱՆ – *Աստուած այդպէս չի ասել: Աստուած ինքը չի տեսել այդպիսի ոճիր: Նրա անգիտութեամբ է սա գործւում: Մարդկութիւնն էլ տեղեակ չէ այս ոճրին: Պէտք է լուր տալ մարդկութեան, աշխարհքով մէկ պէտք է գոռալ, ձայնը մինչեւ Աստուած պէտք է հասցնել:*
ՁԱՅՆԵՐ – *Է՜, ծուռ բաներ է խօսում:*
ՋՆԴՕ – *Ջանըմ, սա էսպէս ծուռ խօսելով մեր գործը աւրեց:*
ՅՈՎՆԱՆ – *Ես աւրեցի ձեր գործը, թէ՞ ձեր Աստուածը: Առակներ մի՛ խօսիր: Դու հասկանալիք չունես:*
ՋՆԴՕ – *Ասածդ ինչ է, ժողովրդի սիրտը ինչի՞ ես պղտորում, ինչ ես ասում՝ ուրանայ:*
ՅՈՎՆԱՆ – *Ով որ չի ուզում կեանքը փրկել, թող գնայ իր մեռելը մեռնելու: Ես պիտի փրկեմ ժողովուրդը: Ես պիտի ցոյց տամ արդարութիւնը:*
ՋՆԴՕ – *Դու խայինութիւն պիտի անես, քո կեանքը պիտի ազատես, մեզ գցես փորձանքը: Ճամբադ գնա, հասկացանք ինչ մարդ ես:* (Ժողովրդին) *Երթանք:*
ԺՈՂՈՎՈՒՐԴ – *Երթանք, ախպէ՛ր, երթանք:* (Քաշւում են): *Վերջերս հասաւ:*
ՅՈՎՆԱՆ – *Չէ՞ք ուզում փրկուել, ես էլ ժողովրդի դատը կը փրկեմ, ինձ կը փրկեմ. ես էլ մի ժողովորդ եմ:*
ՍԱՀԱԿ – *Ծանր խօսքեր ասիր, խնամի՛: Հիմի հայկար բան պիտի վրադ խօսեն:*
ՅՈՎՆԱՆ – *Խօսքերի ժամանակ չէ՜: Ամենաթանկ բանը ձեռքերես գնում է՝ ժողովրդի դատը: Ես պիտի հասցնեմ մարդկութեան: Արդարութի՛ւն կայ, Աստուա՛ծ կայ:*

Վարագոյր

(Շար.1)

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ *ՅՈՎՆԱՆ ՄԵԾԱՏՈՒՆ* ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ՝ ՄԵԿԴԱՐԵԱՅ ԱՌԵՂԾՈՒԱԾԻ ՄԻՋՈՎ

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ

Դերենիկ Դեմիրճեանի ստեղծագործութիւնը դեռեւս խորհրդային տարիներին հանգամանօրէն ուսումնասիրուել, հրատարակուել եւ բազմիցս վերահրատարակուել է: Ակադեմական հրատարակութիւնը կազմում է 14 ստուար հատոր: Թւում է, թէ ոչինչ պէտք չէ վրիպած լինէր մասնագէտների ուշադրութիւնից: Բայց Գրականութեան եւ արուեստի թանգարանի (ԳԱԹ) մասնաճիւղ Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանը ղեկավարելու մեր երկարամեայ գործունէութեան ընթացքում ոչ քիչ առիթներ ենք ունեցել համոզուելու հակառակում: Նախորդիւ դասականի արխիւից եւ մասնաւոր անձանց մօտ պահպանուած նիւթերից ի մի ենք բերել եւ հրատարակել դեմիրճեանական չափազանց ուշագրաւ մասունքներ՝ բանաստեղծութիւններ, նամակ, հեքիաթ, խոհագրութիւն: Մէկ տարի առաջ բարեբախտութիւն ունեցանք Գրականութեան եւ արուեստի թանգարանում պահպանուող Դերենիկ Դեմիրճեանի ֆոնտից (ԴՖ) գտնել մինչ օրս անտիպ *Յովնան Մեծատուն* թատրերգութեան բնագիրը՝ բաղկացած ձեռագիր եւ մեքենագիր պատառիկներից[1]: Ընթերցողին առաջին անգամ ներկայացնող այս թատրերգութիւնը մենք՝ վերծանել, խմբագրել եւ համակարգել ենք հէնց այդ տարբերակների հիման վրայ:

Տարիներ շարունակ Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարան են եկել գրականագէտներ, թատերագէտներ, ասպիրանտներ, ուսանողներ, որոնք փնտռում էին գրողի *Յովնան Մեծատունը* յօղուած, ատենախօսութիւն գրելու կամ պարզապէս ընթերցելու նպատակով: Մեծ է եղել նրանց հիասթափութիւնը, երբ տեղեկացել են, որ անգամ գրողի մա-

Կարինէ Ռաֆայէլեան

Աւարտած է Երեւանի Խ. Աբովեանի անուան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզուի եւ գրականութեան ֆակուլտետը եւ Երեւանի պետական համալսարանի Հայ նորագոյն գրականութեան ամպիոնը, որպէս՝ ասպիրանտ: 1994էն Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի վարիչն է: 2008էն կ՚աշխատակցի «Իրատես» լրատուականին՝ որպէս մշակութային լրագրող, 2013էն «Հայկազեան հայագիտական

[1] Այդ նիւթերը պահպանւում են ԳԱԹ-ում, ԴՖ թիւ 500-507:

հանդէս»ին: Հրատարակութեան պատրաստած է Դերենիկ Դեմիրճեանի *Հայը, Արջուկլրջուկը, Դատողութիւններ Ղարաբաղի եւ Նախիջեւանի հարցի շուրջ* ստեղծագործութիւնները, *Դերենիկ Դեմիրճեանի հարկի ներքոյ* գրականագիտական յօդուածներու ժողովածուն: Հրատարակած է բանաստեղծական՝ երկու եւ պատմուածքներու մէկ հատոր:



Յովնան Մեծատուն թատրերգութենէն ձեռագիր էջ մը
© Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարան

սունքները պահպանող յարկի ներքոյ չկայ թատրերգութեան որեւէ հրատարակութիւն: Մեր բազմաթիւ փնտռտուքները հայաստանեան գրապահոցներում մնում էին անարդիւնք. այդ ստեղծագործութեան տպագիր եւ ոչ մի օրինակ հնարաւոր չեղաւ գտնել: Ամենահաւաստի տեղեկատուութիւնը զետեղուած է ՀՀ գրադարանների ելեկտրոնային ցուցակում, որում միայն մի ծանուցում կայ, թէ 2017 թուականին եղել է առաջարկութիւն՝ հրատարակելու *Յովնան Մեծատուն*ը, եթէ գտնուի հովանաւոր: Ասենք, որ այդ առաջարկութիւնն արուել է մեր կողմից՝ թատրերգութեան պատառիկները վերծանելու այն փուլում, երբ հասկացել ենք, որ թէեւ ֆոնտային նիւթը բաղկացած է առանձին կտորներից, բայց ընդհանուր առմամբ հնարաւոր է ամբողջացնել եւ ընթերցողին մատուցել աւարտուն երկ:

Պարզաբանենք նաեւ, թէ ինչու աւելի շուտ՝ մեր գործունէութեան նախորդ տարիներին, չէինք որոնել այս գործը գրողի ֆոնտում: Բանն այն է, որ Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանը հիմնականում զբաղուում է գրողի յուշային տունը պահպանելու, հանրահռչակելու, ցուցադրութիւն կազմակերպելու, նոր ցուցանմուշներ ձեռք բերելու, ինչպէս եւ ժամանակակից գրականութեան կարեւոր դրսեւորումներն արժեւորելու գործառոյթով, ուստի ԳԱԹ-ի աշխատակիցների կողմից մշակուած արխիւային նիւթերի ողջ ծաւալը հանգամանօրէն պրպտելու առիթը չէր ներկայացել, մանաւանդ որ մեզ այցելող մասնագէտները հաստատապէս վկայում էին, թէ *Յովնան Մեծատուն* երկի բոլոր փնտռտուքներն իրենց տարել են փակուղի, եւ միակ յոյսը մնացել է գրողի տունթանգարանը: Այս տեղեկութիւնն էլ հիմք էր տալիս տարիներ շարունակ մտածել, որ անդառնալիօրէն կորած է Դերենիկ Դեմիրճեանի թատերգական ժանրի այդ նմոյշը, որի մասին, ի զարմանս մեզ, կային մի շարք հանգամանալից վերլուծութիւններ տարբեր գիտնականների աշխատութիւններում եւ յիշատակումներ Դեմիրճեանի նամականիում: Նոյնիսկ որոշ մասնագէտներ մեզ փորձել են հակադրուել այս բոլոր տարիների ընթացքում, երբ մենք յայտարարել ենք, թէ *Յովնան Մեծատուն*ը անտիպ ստեղծագործութիւն է: Քանի որ վերլուծութիւններն այդ թատրերգութեան մասին բաւական հանգամանալից են ու ստուարածաւալ, եւ քանի որ մարդիկ, դրանք կարդալով, ձեռք են բերել որոշակի պատկերացում երկի վերաբերեալ, ունեցել են այն պատրանքը, թէ կարդացել են հէնց հեղինակային թեքստը: Նաեւ կար գրողի նամականիում յիշատակուող այն փաստը, որ Վարդան Աճէմեանը 1933 թուականին փորձ է արել բեմադրել *Յովնան Մեծատուն*ը Առաջին պետական (յետագայում՝ 1937ին, վերանուանուած Գ. Սունդուկեանի անուան պետական) թատրոնում. չի բացառւում, որ թատրերգութեան նիւթը եւ դրան առնչուող մանրամասները

հանրայնացուել են հէնց թատերական գործիչների միջոցով: Եւ երբ թատրերգութեան մասին որոշակի պատկերացում ունեցող անձանցից մենք փորձում էինք պարզել, թէ յատկապէս որտե՞ղ, ո՞ր հատորում, ո՞ր թուականին են կարդացել այն, կարկամում էին ու ստիպուած լինում զարմանքով խոստովանել, որ իրենք, այո՛, ունեն որոշակի պատկերացում գործին մասին, գիտեն անգամ նիւթը, որը ցնցող է, սակայն չեն յիշում, թէ որտե՛ղ եւ ե՛րբ են այն կարդացել: Մեզ մնում էր նրանց յուշել, որ իրենք կարող են կարդացած լինել դրա վերլուծութիւնը Հրայր Մուրադեանի *Դերենիկ Դեմիրճեան*[2], Արծուի Ցունանեանի *Դերենիկ Դեմիրճեանի դրամատուրգիան*[3], Հրանտ Թամրազեանի *Դերենիկ Դեմիրճեան*[4], ՀՍՍՀ ԳԱ *Դերենիկ Դեմիրճեանի ստեղծագործութիւնը*[5] աշխատութիւններում եւ կամ որոշակի տեղեկութիւն ձեռք բերած լինել 1930ականներին Սունդուկեանի թատրոնին մօտ կանգնած անձանցից:

Փորձենք հասկանալ, թէ ինչը կարող էր պատճառ դառնալ, որ Դերենիկ Դեմիրճեանի տպագրուած երկերի ցանկից դուրս մնայ այնպիսի ծաւալուն եւ մասնագիտական շրջանակում յայտնի երկ, ինչպիսին է *Ցովնան Մեծատուն* թատրերգութիւնը: Բանն այն է, որ այս երկում, առաջին անգամը լինելով, գրողը բացայայտ ու առանց պայմանականութիւնների անդրադառնում է 1915ին հայ ժողովրդին պատուհասած մեծագոյն աղէտին՝ Հայոց ցեղասպանութեանը: Մենք մի ընդարձակ գրականագիտական ուսումնասիրութիւն ենք պատրաստել՝ նուիրուած Դերենիկ Դեմիրճեանի Ցեղասպանութեան թեմայով գրուած ստեղծագործութիւններին: Այն ներկայացուել է 2017 թուականին կայացած՝ Դերենիկ Դեմիրճեանի 140ամեակին նուիրուած գիտաժողովի ժամանակ եւ հրատարակուել «Հայկազեան հայագիտական հանդէս»ի նոյն տարուայ համարում: Այդ նիւթի մէջ, սակայն, մենք անդրադարձել ու վեր ենք հանել այն ճշմարտութիւնը, որ Դեմիրճեանը, կաշկանդուած իր ապրած ժամանակի եւ խորհրդային գաղափարախօսութեան պարտադրանքներով, Ցեղասպանութիւն երեւոյթին անդրադարձել է իր թեքստի ենթաշերտերում՝ բուն ասելիքը թողնելով տողատակերում: Հէնց դրա շնորհիւ էլ այդ գործերը՝ «Աւելորդը», «Ժպիտը», «Աստծոյ տանը»: «Գիրք ծաղկանցը» ունեցել են ընթերցողին հասնելու եւ հանրահռչակուելու հնարաւորութիւնը: Իսկ 1918-1919 թուականներին Հայոց ցեղասպանութեան վէրքի թարմ ազդեցութեամբ գրուած *Ցովնան Մեծատունը* մատնուել է մոռացումի: Այստեղ գրողը մեր ազգային ողբերգութեանն

[2] Մուրադեան, Հրայր. *Դերենիկ Դեմիրճեան*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ. հրատ., 1961թ.:
[3] Ցունանեան, Արծուի. *Դերենիկ Դեմիրճեանի դրամատուրգիան*, Երեւան, «Սովետական գրող» հրատ., 1988թ.:
[4] Թամրազեան, Հրանտ. *Դերենիկ Դեմիրճեան*, Երեւան, «Սովետական գրող» հրատ., 1977թ.:
[5] *Դերենիկ Դեմիրճեանի ստեղծագործութիւնը*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ. հրատ., 1980թ.:

այնպիսի շեշտադրումներ է հաղորդել, որ դրանք չէին կարող գոհացնել ո՛չ խորհրդային գաղափարախօսութեան քարոզն անող ղեկավարներին, ո՛չ հայ ազգայնականներին, ո՛չ էլ, բնականաբար, Ցեղասպանութիւնն առ այսօր ժխտող-բացառող թուրք արնախումներին:

Աւելին, Դերենիկ Դեմիրճեանի գրականութեան փայլուն գիտակ, խորհրդային գրականագէտ Հրայր Մուրադեանը պարտադրուած էր *Յովնան Մեծատուն*ի իր վերլուծականում յայտնել այսպիսի տեսակէտ. «Դեմիրճեանն անկարող է եղել բարձրացուած թեմայի մէջ գտնել վեհն ու հերոսականը: Պատկերուող դէպքերի ահաւորութիւնը ընկճել է հեղինակին, զրկել լուսաւորն ու մարդկայինը տեսնելու կարողութիւնից: Պատահական չէ, որ տրամայի հերոսները բոլորը՝ դրական թէ բացասական, կործանւում են: Չկայ մէկը, որի մէջ հեղինակը կամենար շեշտել վաղուայ հեռանկարը: Բացակայում է փրկաւէտ հաւատն այն բանի, որ կայծակնահար խորտակուած կաղնու արմատից վաղը ընձիւղներ են դուրս գալու՝ պարզուելով լոյսին եւ արեւին, իրենցով կենդանացնելու եւ շէնացնելու ժամանակաւորապէս ամայացած երկիրը[6]»:

Բարեբախտաբար, այսօր փոխուել են մտածողութիւնն ու իրավիճակը, եւ մեզ ոչինչ չի խանգարում բարձրաձայնել հայ ազգի ճակատագրին առնչուող անցքերի իսկութիւնը: Այս տեսանկիւնից ելնելով՝ վստահեցնում ենք, որ Դեմիրճեանն իր տաղանդի ողջ ուժով, իր անաչառ գրչի բացառիկ վարպետութեամբ երեւակայել է մեզ համար ցաւագին մի թեմա:

Ի՞նչ եւ ինչպէ՞ս էր գրում Դեմիրճեանն իր ժողովրդի բնաջնջման փաստի մասին:

Արեւմտեան Հայաստանի քաղաքներից մէկում (հեղինակը չի յստակեցնում քաղաքի անունը) հայ մեծահարուստ Յովնանը ամուսնացնում է որդուն՝ Խորէնին: Հարսանիքը բազմամարդ է, ճոխ, ուրախ: Գինովցած Յովնանը որոշում է իրեն չլսուած, չտեսնուած մոլութիւն թոյլ տալ. ծառային ապսպրում է բերել իր պահած ոսկու պարկը, թափել այն յատակին, ապա իր գեղեցկուհի հարսին՝ Նունուֆարին, պարի է կանչում հէնց ոսկիների վրայ: Մարդիկ ապշած են, շլացած, ոմանք էլ՝ նախանձով լի: Յովնանի կինը՝ Նազէն, վախով է արձագանգում այդ տեսարանին, յորդորում ամուսնուն զգօն լինել, սակայն վերջինս հեգնում է կնոջն ու շարունակում իր պարը: Առանձին մեծարման է արժանանում Յովնանի կոյր, զառամեալ մայրը՝ Մարէն, եւ մեծարումի այդ ծէսը խորին պատկառանք է ծնում հիւրերի շրջանում: Ցանկարծ պայծառ երկնքում ճայթում է որոտը. ներս է մտնում թուրք բարձրաստիճան պաշտօնեայ Հասան պէյն ու գայթակղւում Յովնա-

[6] Մուրադեան, Հրայր. *Դերենիկ Դեմիրճեան*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ. հրատ., 1961, էջ 126-127:

նի հարսի գեղեցկութեամբ: Ապա մի կողմ է տանում Յովնանին, յայտնում, որ պատերազմական իրադրութիւնից դրդուած՝ հրաման է իջեցուել տեղահանելու քաղաքի ողջ բնակչութիւնը: Յովնանը, վստահ իր ուժերի եւ հեղինակութեան վրայ, փորձում է հակադրուել համընդհանուր հրամանին. ոչ միայն Հասան պէյի, այլեւ աւելի բարձր պաշտօնեայի՝ Վալի փաշայի հետ բանակցելով, նա փորձում է հասնել համաքաղաքացիների կամ գոնէ իր անձի համար հարցի խելամիտ լուծման: Բայց ապարդիւն: Հասան պէյի պահանջը մէկն է՝ իրեն տալ գեղեցկուհի հարսին, որի դիմաց, ըստ էութեան, ինքը անպարկեշտօրէն ոչինչ էլ չի խոստանում Յովնանին: Յովնանը, սահմըռկեցուցիչ մոլեռանդութեամբ, համաձայնում է այդ պայմանին: Սակայն հակադրւում է որդին՝ Խորէնը, որը սպաննւում է հօր աչքի առաջ:

Դեմիրճեանը մշտապէս կարեւորել է մարդու խնդիրը: Նրա համար գոյութիւն չունի ազգային խտրականութիւն: Ուստի եւ իր թատրերգութեամբ հանդէս է բերում մարդկային բարձր յատկանիշներով օժտուած թուրք սպային՝ Ֆայիկին: Նա, որ վաղուց սիրահարուած է Յովնանի դըստերը՝ Հերիքին, իր անձը վտանգելու գնով փորձում է փրկել վերջինիս եւ նորահարս Նունուֆարին: Ապարդիւն է, սակայն, այդ ջանքը: Ֆայիկին բանադրում է Հասան պէյը՝ որակելով իբրեւ դաւաճան, Նունուֆարն ինքնասպան է լինում, Հերիքը փախչում եւ փորձում է թաքնուել գաղթականների կարաւանում:

Վերջին՝ Դ. արարում, գրողը ցոյց է տալիս տեղահանուած հայութեանը Միջագետքի մի կորսուած վայրում: Վարպետօրէն կառուցուած երկխօսութիւնների եւ թատերական տեսարանների նկարագրութիւնների միջոցով Դեմիրճեանն ստեղծում է ժամանակի սահմռկեցուցիչ համապատկերը: Յովնանը՝ նախկին յարգըւած մեծատունը, ցնցոտիների մէջ է, խոշտանգուած, խելագարի անհաւասարակշռութեամբ, մի փշուր հացի համար՝ պատրաստ մեծագոյն ստորութեան: Նա իր զառանցանքներում անվերջ յիշատակում ու դատի է կանչում Աստծուն, որովհետեւ, ըստ իր փիլիսոփայութեան, ամէն բան հէնց Բարձրեալի կամքով է կատարւում՝ թէ՛ հարսին ու աղջկան Հասան պէյի սանձարձակ կրքերի սպասարկուն դարձնելու իր քայլը, թէ՛ այնքան մեծարուած Մարէին լքելը, թէ՛ որդու մահուան պատճառ դառնալը, թէ՛ իր գործած միւս այլանդակութիւնները: Այս ամէնի մէջ Յովնանը մէկ մեղաւոր է ճանաչում եւ փափաքում անել նրա դատը. այդ մեղաւորն Աստուած է:

Թատրերգութիւնը աւարտւում է անսպասելի լուծումով. սանձարձակ Հասան պէյի վրան քշուած Հերիքը՝ մանկամարդ, անփորձ այդ աղջիկը, ատրճանակի կրակոցով վերջ է դնում գազանի կեանքին, որից յետոյ սպաննւում են թէ՛ ինքը, թէ՛ իր ընտանիքի անդամները:

Թատրերգութիւնը ունի ցնցող վերջաբան. բարոյականութիւն,

մարդկայնութիւն կորցրած հասարակութեան վարկը փրկում է մինչեւ պատերազմն ու գաղթը բոլորից անտեսուած, չքաւոր, տնանկ Աբրօն: Նա իր վեհանձն քայլով (թուրք ջարդարարներին ներկայանում է որպէս Յասան պէյին սպանած Յերիքի հայր եւ ընդունում Յովնանի բաժին մահը) ստիպում է դարձի գալ անգամ բարոյազուրկ, անասնացած Յովնանին: Այս մասին Արծուի Յունանեանի գրքում կարդում ենք. «Աշխարհում, այնուամենայնիւ, կայ մարդկայնութիւն եւ այլասիրութիւն, ու չի կարելի բոլորովին չհաւատալ բանական արարածին ու նրա արդարութեանը, բարու եւ գեղեցիկի յաղթանակին: Իր որքան անսպասելի, նոյնքան էլ բացառիկ ու գերազնիւ քայլով ցեղասպանութեան գեհէնն ընկած Աբրօն կարողանում է բացասական հերոսի քստմնելի արարքներով եւ մռայլ բանդագուշանքով հողին հաւասարեցուած ու աղբ հռչակուած մարդուն նորից բարձրացնել, սրբացնել ու դնել իրեն արժանի բարձրութեան վրայ: Եւ այդ արդար նահատակի ազնիւ արիւնով հաստատուած ճշմարտութեան անհերքելիութեան առջեւ անզօր, Յովնանը չոքում է բանական էակին վեհացրած, աստուածացրած հրաշք անձնաւորութեան դիակի առջեւ ու արտաբերում *փիեւ*ը վերջաւորող խորհախորհուրդ ու սարսուռ ազդող խօսքերը. («Ահա այս մարդը դու ես, Աստուած: Քո արդարութեան առջեւ ես հող եմ եւ մոխիր…») եւ կաթուածահար ընկնում իր մեծ համաքաղաքցու անշնչացած մարմնի վրայ[7]»:

Թատրերգութեան ողջ ընթացքում ոչնչով աչքի չընկնող հերոսը՝ Աբրօն, դառնում է մարդկային բարձր չափանիշները շեփորող, դրանք համաժամանակեայ կտրուածքով արժեւորող գրական կերպարը, որի նմանների վրայ է միշտ յենուել գրող Դերենիկ Դեմիրճեանը՝ նրանց վարքը դարձնելով իր գաղափարախօսութեան առանցք բոլոր ստեղծագործութիւններում: Այսօրինակ կերպարների մասին իր դիտարկումն ունի գրականագէտ Վահագն Մկրտչեանը: «Իսկական բարեգործների բացյայտումը եւ նրանց զարգացման ու յաղթանակների բարդ գործընթացի նկարագրութիւնը՝ կապակցուած բազմաբնոյթ խառնուածքների եւ հայեացքների, հասարակական-կենցաղային բախումների հետ, գրականութեան մեծագոյն բարոյական խնդիրն է, որին Դեմիրճեանը յատկացնում էր կարեւոր տեղ արուեստում: Նրա հայեացքի կենսականութիւնն ու խորաթափանցութիւնն արտայայտւում են այն բանում, որ նրա գրական կերպարներում ի մի բերուած բարոյական չափանիշները կտրուած չեն այն հասարակական միջավայրի վերլուծութիւնից, որում ապրում, գործում են իրենք[8]»,- գրել է նա:

[7] Յունանեան, Արծուի. *Դերենիկ Դեմիրճեանի դրամատուրգիան*, Երեւան, «Սովետական գրող» հրատ., 1988թ., էջ 120-121:
[8] Մկրտչեան, Վահագն. *Դերենիկ Դեմիրճեան*, Երեւան, «Սովետական գրող» հրատ., 1982թ., էջ 321-322: Գիրքը ռուսերեն է, քաղուածքի թարգմանութիւնը մերն է:

Դեմիրճեանին դեռեւ «Աւելորդը» պատմուածքից հետապնդել է անօգնական, թոյլ մարդուն սատարելու, վտանգի մէջ չլքելու, նրան մարդկային բարձր որակներ վերագրելու թեման:

«Աւելորդը» պատմուածքի առընչութեամբ Հրայր Մուրադեանի գրած այս դատողութիւնները միանգամայն համադրելի են *Յովնան Մեծատուն*ի մէջ Ցեղասպանութեան զոհ դարձած հերոսների համար. «Պատերազմի բազմահազար զոհերը յիշեցնում էին մարդու մասին, ազդարարում էին կեանքի հանդէպ մարդու իրաւունքը: Եւ Դեմիրճեանը հանդէս է գալիս մարդու այդ իրաւունքի պաշտպանութեամբ, քանի որ պատերազմը եկել էր խափանելու մարդկային բնականոն կեցութիւնը, խարխլելու այդ կեցութեան հիմքերը, մարդկութեանը բերելու անհուն տառապանքներ, զրկանքներ, մահ ու աւեր: Դեմիրճեանի ելակէտը այս խնդրում հետեւեալն է. կեանքի իրաւունքը անկապտելի է ամէնքի համար: Ոչ լիարժէք մարդիկ չկան կեանքում[9]»:

Սա նաեւ ունէր անձնական պատճառներ: Դերենիկ Դեմիրճեանն ունեցել է հօրաքոյր՝ Սրբուհի անունով, ի պատիւ որի այդ անունն է կրել նաեւ նրա միջնեկ քոյրը՝ Սրբուհին: Վերջինս եղել է «Աւելորդը» պատմուածքի նախատիպը: Սա պատահական բան չէր. չէ՞ որ Դեմիրճեանները եւս Հայոց ցեղասպանութեան իրեղէն վտանգն զգալով՝ Արտահանից տեղափոխուել էին Թիֆլիս, ապա՝ Երեւան: Ցաքուցրիւ պատմութիւններից յայտնի են տարատեսակ մանրամասնութիւններ, որոնք վկայում են, որ այդ ընտանիքն ունեցել է իր բաժին կորուստներն այդ տեղափոխութեան ընթացքում: Իսկ կեանքի երկրորդ հատուածում Դեմիրճեանն ունէր մէկ այլ անձնական վիշտ. նրա եւ Մարիամ Կանայեանի որդին՝ Վիգէնը, մտազար էր, եւ երբ մահանում էր գրողը, չափազանց մտահոգ էր իր զաւակի՝ նորօրեայ այդ «աւելորդի» ճակատագրով: Այդ պատճառով էլ թախանձագին խնդրանքով բազմիցս դիմել է ազգականներին, որպէսզի իր մահից յետոյ անտէր ու անխնամ չթողնեն հիւանդ զաւակին: Ասել է թէ՝ Դեմիրճեանին խորթ չէր «աւելորդի» ցաւը սեփական մաշկով զգալու ողբերգութիւնը:

Առհասարակ, Դերենիկ Դեմիրճեանի գրականութիւնը գերազանցապէս սնուել է իրապատում նիւթից՝ հիմքում ունենալով գրական հերոսների ճշգրիտ նախատիպեր: Այսօր դժուար է նրա բոլոր երկերում գտնել այդ շօշափելի կապը, սակայն եղած տեղեկութիւնները բաւարար են՝ պնդելու համար, որ այդ կապը յստակ է, անքննելի:

Մեր շարադրանքում մենք խուսափեցինք քաղուածքներ անել *Յովնան Մեծատուն*էն, քանի որ «Բագին»ի այս եւ յաջորդ համարներում հնարաւոր է կարդալ թատրերգութիւնն ամբող-

ջութեամբ՝ դառնալով այս բացառիկ երկի առաջին ընթերցողը:

Եւ այնուամենայնիւ, եթէ կը գըտնուի որեւէ մէկը, որն իսկապէս կը մատնանշի *Յովնան Մեծատուն* թատրերգութեան երբեւէ հրատարակուած լինելու մասին մի որոշակի աղբիւր, ապա մենք խորապէս երախտապարտ կը լինենք նրան: Բանն այն է, որ նախորդիւ արդէն ունեցել ենք նման փորձառութիւն. երեք տարի առաջ վերահրատարակել ենք 1944 թուականին տպագըրուած եւ այդուհետ մոռացուած «Արջուկ-լըջուկ» հեքիաթը, եւ այսօր Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի ֆոնտում պահպանւում են ինչպէս առաջին, այնպէս էլ վերջին հրատարակութիւնների օրինակները: Մեզ համար չափազանց կարեւոր է Դերենիկ Դեմիրճեանի թանգարանում պահպանել ոչ միայն ցուցանմուշներ, այլեւ գրողի կեանքին եւ ստեղծագործութեանը վերաբերող յուշ-տեղեկոյթներ: Այնպէս որ, դեռեւս չենք կորցնում մեր յոյսը, թէ որեւէ կերպ կը ստանանք նոր տեղեկատուութիւն *Յովնան Մեծատուն* թատրերգութեան անցած մէկդարեայ առեղծուածային ճանապարհի մասին:

[9] Մուրադեան, Հրայր. *Դերենիկ Դեմիրճեան*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ. հրատ., 1961, էջ 145:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տան պարտէզի յետնամասը

Տան պարտէզի յետնամասի
դռնակը բաց ու լուռ դիտէ, -
պիտի գտնես գողտրիկ աշխարհ մը անեղծ,
որ կը մնայ միշտ ծածկուած աչքերէ:

Պիտի գտնես յուշերուն մէջ անցեալի,
աշխարհ մը նուրբ ու մոռցուած երեւի,
ուր ամէն քայլ, ամէն դրուագ ու շշունջ
քեզ կը կանչէ նայադի պէս, անմռունչ:

Հոն ծաղիկներ կան դիւրաբեկ՝
հպումով մը փշրուող,
կեանքէղ պահեր, զորս պիտի
փափաքէիր մոռնալ կամ
վերադառնալ անցեալին՝
վերապրելու այլապէս:
Դեռ արիւնող կամ անթեղուած վէրքեր կան,-
ուրիշ պահեր, որոնք արդէն
գիտակիցի աշխարհիդ մէջ
դիմագրաւման կը սպասեն,
լեզուիդ վրայ՝ բացայայտման:

Արդ, պարտէզի յետնամասի
դռնակը բաց
եւ ներս մտիր՝
յուզումներով սանձուած ...

Յուշիկը

Տան յետնամասի պարտէզը փոքրիկ
Աշխարհդ է գողտրիկ:
Այնտեղ ահա
մօրդ բերած վարդենիի տունկերը
աճած, դարձած են հարսեր,
փերթերն անոնց կը թափին
ոտքերուդ տակ թափառիկ,
կ'արթնցնեն մէջդ պահուած ապրումներ,
յիշատակներ անթեղուած
եւ մոռցուած երանգներ :

Ի՜նչ հեշտին է, ինչ հեշտին է
ուղղահայեաց
կայծակի պէս փայլատակող,
մթութիններ լուսաւորող,
պահն այս խորունկ ու խտացեալ`
իր լոյսին մէջ
ներաշխարհդ ջերմացնող:

Պարտէզը աշնան

Տան յետնամասի ցուրտ պարտէզին մէջ
թրջուած գորգը տերեւներուն ժանգ
ճիւղերուն ներքեւ հիմա մերկացած
ձայներ ու յուշեր պատսպարած է,
իսկ քու մտքիդ մէջ
կարմրալանջը դեռ հոն կ'ոստոստէ
մանիշակագոյն ցօղուններուն տակ
շաղոտ հուսամի:
Ուրախ խնդուքը երեխաներուն
հետս չե՞ս լսեր,
որոնք խաղալով
արքայամորի կախուած ճիւղերէն
հատապտուղներ հատ-հատ կը քաղեն:
Պահէ՛ խնդուքը երեխաներուն
յիշողութեանդ գաղտնի ծալքերուն,
անհրաժեշտ է միշտ զանոնք ունենալ
ձմեռնային խիստ արգելափակման
կրճատ օրերուն:

Տեղումներ

Ձիւնը կը տեղայ պարտէզին վրայ
յուշերուս վրայ,
երազներուս եւ մղձաւանջներուս
թափանցիկ, թեթեւ, բիլ քօղին վրայ:
Ճերմակ փաթիլներ կը ծածկեն հիմա
մեռած տերեւներ, բացուած արմատներ,
որոնք կը կոտտան խոր վէրքերու պէս:
Ձիւնը կը տեղայ
հետեւողական կշռոյթով ահա,
հաւասարապէս՝
մշտադալար կամ արդէն մերկացած
ծառերուն վրայ,
կարծես սպիտակ տերեւներով թաց
կը փորձէ ծածկել լերկացած ճիւղեր:
Յոն կարծես ճերմակ թռչուններ կ'երգեն
մէկ անցած գարնան երգերը անդարձ:

Չաստուածութիւն է ձմեռը յամառ,
Խուլ ու անյողդողդ, որ իր խստաշունչ
եղանակային ընթացքը գիտէ,
կարծր ու չորցած հողը կը թրջէ,
իսկ երբեմն ալ՝ կը սառեցնէ,
եւ լուռ կը ծածկէ
ինչ որ մենք կ'ուզենք մոռնալ, չյիշել ...

Ձմեռնային

Տան յետնամասի պարտէզը փոքրիկ
թաղուած է հիմա խորունկ ձիւնին տակ:
Վարդենիները անհետացած են
տարածութեան մէջ անղէմ, սպիտակ –
գոյներն երփներանգ
հիմա ալ չկան:
Անանուխը թարխունին հետ
կը ննջէ կարծես,
իսկ ծոթրինը իր հունտերը
սփռած կը սպասէ
օրերուն որ պիտի տաքնան
եւ ծլարձակեն
ինչ որ հունտ է կամ սպասող
արմատ ու ճիւղ:

Ուղղանկիւնաձեւ աշխարհին այս անկոխ
ձմեռնաքունի մէջ կարծես կ'ուզէ
խոկալ առանձին եւ երկունքով լուռ
ինքզինք նորոգել:
Մորմենիի լերկ ճիւղերուն գլուխները
փաքիրներու պէս կանգնած կը մատնեն
գոյատեւման խոր կամք մը անկոտրում,
իսկ իրենց ինկած կամ չհաւաքուած
խեղճ պտուղները
կեանքեր են կարծես չլիցքաւորուած:
Վարդենիներէն
չեմ գիտեր քանին
լուռ պիտի ճեղքեն սառը ձմեռուան
եւ գունաւորեն օրերը գալիք:

Միմիայն մարդիկ,
սիրելի այնքան,
որոնք օ՜ անդարձ մեկնած են մեզմէ,
ետ պիտի չգան:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

Աշնանային արձակ հայքուներ

Աշնան ճանապարհիս
վարդենի մը կիսամերկ
գարուն կը բուրէ տակաւին:

Աշնան տերեւի նման
հովը ի զուր կը փորձէ տանիլ
սրտէս պոկուածը:

Թարթիչներդ փուշի նման չըլլային՝
Այտիս վրայ համբոյրդ
Վարդի հետքեր չէր թողուր:

Աշունէ աշուն
տարիքս անձայն յայտարարելէ
ծղրիթները ծերացան:

Խոհակայծեր

Քամին որքան սաստիկ փչէ
տերեւները չեն թաւալիր
եթէ աշուն չէ:

Ճնճղուկը
ծառը ցնցող հովէն չի խրտչիր,
այլ դաւադիր մարդու շուքէն:

Փուշը
բլբուլի թաթը չի խոցեր,
այլ մարդու ափը:

Անունը յաճախ
կ'անմահանայ
շիրմաքարին գրուելէ առաջ:

Եւ որքան ալ
հեռուէն նայիս
մահը տակաւ կը մօտենայ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՄՈՒԷԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Երգ

իմ երակներով քո արիւնն է հոսում,
մա
իմ երակներով քո արիւնն է հոսում,
պա,
բայց ես ուրիշ եմ,
բայց ես ուրիշ եմ,
քո ժամանակ Երեւանն էր խօսում,
մա
բաժանումները մնում էին ներսում,
պա,
բայց մենք ուրիշ ենք,
բայց ես ուրիշ եմ,
հարեւանները տժժում են Լոսում,
հա,
Յալիվուտում հայերէն են խօսում,
բա՛,
բայց ես ուրիշ եմ
նէոտերվիշ եմ,
Լենինականում մարդիկ են մրսում,
վա,
26ում մեր փողերն են մսխում,
քա,
բայց ես ուրիշ եմ
ես ամբարիշտ եմ

ՍԱՄՈՒԷԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ծնած է 1994ին, Վանաձոր: 2014ին կ'աւարտէ Վանաձորի Փոլիթեքնիքը, մասնագիտանալով՝ օգտակար հանածոներու հետախուզման եւ մշակման մէջ:Նոյն տարին կը զօրակչուի ՀՀ բանակ: 2016ին, ծառայութիւնը աւարտելէն ետք կը շարունակէ ուսումը մասնագիտանալով տնտեսագիտութեան մէջ: Այժմ «Դասաւանդի՛ր Հայաստան» նախաձեռնութեամբ կը դասաւանդէ Արցախի Իշխանաձոր գիւղին մէջ:

Նստարանին

Էսօր քաղաքս լուռ է
ինչ-որ բան կայ օդում
քաղաքականութի՞ւն
վթա՞ր
հարսանի՞ք
թաղո՞ւմ
պատերա՞զմ
չգիտեմ՝
ինթերնեթ չեմ մտել
հեռուստացոյց էլ չունեմ
ռատիոն ինթերիերի մաս է դարձել
թերթերն էլ՝ փաթեթաւորման նիւթ
վեր ընկայ ուժասպառ՝
նստարանին անունդ է գրուած
իմ սիրուն քաղաք
թոյլ տուր
կամաց փչեմ
վէրքիդ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ (Դ) ԿԱՐՃ, ԱՒԵԼԻ ԿԱՐՃ ԵՒ ՄԱՆՐ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԽԱՉԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Անթալիա

2011 թուականի առաջին կիսուն, Հայաստանէն Թուրքիա այցելած 25,295 զբօսաշրջիկներէն մէկն ալ ինք եղաւ: Դժբախտաբար, 2010ին *պիկնեաը* թոյլ չէր տուած, որ բարեկամներու եւ *թուրիստական* գրասենեակներու կողմէ գովաբանուող արձակուրդներու փաթեթը ձեռք ձգէր իր 23,423 հայրենակիցներուն նման: Սակայն յաջորդ տարի, երբ բախտը բերաւ եւ Թուրքիա այցելեց, նախորդ տարուան հետ բաղդատած՝ այցին գինը ութ տոկոսով յաւելում մը արձանագրած էր: Խորքին մէջ զանգատելիք ոչինչ ունէր. փաթեթը շատ աւելի ճոխ ու աժան էր, քան Սեւանի ափին երկշաբաթեայ արձակուրդներու այլընտրանքը: Լաւ հանգստացաւ ծովափին: Վերադարձն ալ նոյնքան հաճելի անցաւ, որովհետեւ հանգստավայրը՝ ուր փոխադրակառքը կանգ առաւ, շատ տպաւորեց զինք իր առաջնահերթ ու քաղաքակիրթ հիւրասիրութեամբ, պանդոկով, ճաշարանով, նոյնիսկ այն հին *համմամ*ով, ուր իրեն խորհուրդ տրուած էր անպայման այցելել, սակայն զանց առնուած էր այն յաւելեալ մանրամասնութիւնը, որ այդ *համմամը* դարեր շարունակ եկեղեցի եղած էր:

Smartphone

Երբ վերջին նորոյթի եւ բարձր *տեխնոլոգիայով* օժտուած իր բջիջայինը գնեց եւ անոր հետ վերցուց *ֆիքսուած* սակով ամսական փաթեթը, նուէր ստացաւ անվճար հաղորդակցութեան րոպէներու պատկառելի քանակ մը: Բջիջային հեռախօսը վերջապէս ունեցաւ: Մնաց զրուցակից գտնելը:

Jesus Christ Superstar

Forth Worth-ի պատուելին ուզեց ամենէն յեղափոխականը ըլլալ Փրկիչին խօսքը տարածելու գործին մէջ: Հաւատացեալները անակնկալի եկան, երբ եկեղեցի մտնելով տեսան Թրաշ երաժշտութեան հանրածանօթ նուագախումբ մը, որ այդ օրուան աղօթքները պիտի մեկնաբանէր: Տիրոջ փառաբանութիւնը բացառիկ յաջողութեամբ պսակուեցաւ: Եկեղեցին ու բակը լեցուեցան ելեկտրոնային կիթառներու ձայներով եւ Ալէլուիա *ռաքնռոլող* խանդավառ երիտասարդութեամբ: Ինչ որ պատուելիին հաշիւներուն մէջ չկար, պատարագ/նուագահանդէսէն յետոյ ամէն ինչ ջարդուփշուր ընելու սովորութիւնն էր: Պայմանագրութեան մէջ նման արգելք չէր նշուած եւ երբ համատարած *հիսթերիային* մէջ փորձեց միջամտել քարուքանդ եղող եկեղեցիէն բան մը փրկելու համար, հրաշքով փրկուած ելեկտրոնային կիթառներէն մէկը ուժգին թափով իր գլխուն իջաւ եւ գանկը երկուքի բաժնեց: Մեռնելէն առաջ առիթը ունեցաւ զինք սպաննողին ինքնութիւնը պարզելու. զոյգ մը ատելավառ աչքեր, որոնք դժոխային բերկրանք մը կ'արտացոլացնէին…

Harold Camping

Երբ երրորդ անգամ ըլլալով ձախողեցաւ նախատեսել աշխարհի վերջը, ու իր յայտարարած օրէն ու ժամէն յետոյ ամէն մարդ շարունակեց իր ընթացիկ կեանքը, նոյն այդ գիշերը հայրը գերեզմանատունէն իր մօտ այցելութեան եկաւ.

- Ծօ էշի կտոր, յաւիտենական հանգիստս խանգարեցիր: Տեղէս չելլեմ ըսի՝ չեղաւ: Ցիմար, ամբողջ կեանքիդ մէջ մէկ առաւել մէկը չկրցար լուծել, թուաբանութեան պատճառով մարդու պէս դպրոց մըն ալ չաւարտեցիր: Ուզեցիր եկեղեցի բանալ, *պիրատէր* ըլլալ, *պիզնեսիդ* օգնեցի, ըսի խելքը գլուխը եկաւ, խօսիլ գիտէ, *ռատիոյ*ի ծրագիր սկսար, մէջէն կ'ելլէիր կոր, հանգիստ կը մեռնիմ ըսի, բերանը անօթութենէն պիտի չհոտի… *Ուլան* անդի աշխարհ երթալս սպասեցի՞ր որ *կենէ պելայի* մէջ իյնաս: Ան ալ բան չգտար աշխարհի վերջանալուն օրը եւ ժամը հաշուելու՞ ելար…

All you can pay massage

*Մերսում*ի որեւէ մոլի նման գիտէ որ ո՛չ մէկուկէս ժամը, ո՛չ ալ չորս կամ վեց ձեռքերով *մերսում*ի տարբերակները կրնան բաւարարել իր մարմնի պահանջները: Հետեւաբար, երբ *մերսումի* բարձրորակ spa մը կը ծանուցէ իր

նոր ծառայութիւնը, որուն համաձայն *մերսումի* ժամը կ'որոշէր ինքը՝ յաճախորդը, եւ ձեռնարկութիւնը կ'երաշխաւորէր *մերսումի* շարունակականութիւնը, առիթը չուզեց փախցնել:

Ինչպէս խմիչքի սիրահարներն ու կիսամասնագիտացած գինովները կ'ըննեն pub-երու night club-ներու եւ bar-երու մէջ իրենց հաշիւը բաց ձգելով, *մերսումի* ձեռնարկութեան մօտ բաց ձգեց դրամատնային իր խնայողութեան հաշիւը, վարկային քարտերը եւ յատուկ պայմանագիր մը ստորագրեց, որուն համաձայն ձեռնարկութիւնը յանձնառութեան տակ կը մտնէր մերսման անընդմէջ շարունակականութիւնը ապահովելու, ի հարկին մատուցելով նաեւ սնունդի հայթայթման նման ծառայութիւններ:

Յետոյ գործէն հրաժարեցաւ, ամէն ունեցածը ծախեց, եւ երջանիկ մուտք գործեց մերսման սենեակը եւ աչքերը փակելով մարմինը յանձնեց արդէն գործի անցած երկու վարժ ձեռքերու՝ այնպէս ինչպէս հոգին պիտի յանձնէր զինք դրախտ առաջնորդող հրեշտակի մը:

Թէ քանի՞ ժամ, օր, շաբաթ թէ տարի անցած է այդ *էքզոտիկական* պահէն չի գիտեր: Միայն կը յուսայ, որ հրեշտակը աւելի կանուխ ժամանէ քան հարկայինի պաշտօնեաները, որոնք պիտի գան իր արդէն կասեցուած վարկային քարտերու դիզած պարտքերու մարումը պահանջելու:

Amatoury 114

Խոր ծերութեան մէջ փորձ մը կատարեց վերադառնալու մանկութեան բոյրերուն: Երբ քթին մօտեցուցին անուշահոտին շիշը, ճմռթկուած դէմքին վրայ ուրագծուեցաւ սարսափ մը, որ ահաբեկեց բոլորը: Բնազդաբար ձեռքը գլխուն տարաւ: Թէեւ գիտէր որ մազերը շատոնց թափած էին, բայց չկրցաւ յուսահատութեան սրտաճմլիկ արտայայտութիւնը զսպել: Աչքերը յաւիտեան փակեց, վերապրելով մանկութեան սարսափի ժապաւէնը, ուր հայրը, անտեսելով իր երկար մազեր ունենալու աղաչանքը, կը ստիպէր իրեն, որ երթայ սափրիչին մօտ, գլուխը յանձնէ Չաճիին, լսէ հազարումէկ պատմութիւններ, որոնք զինք չէին հետաքրքրեր եւ արցունքները հազիւ զսպէ, անդրադառնալով թէ ինչպէս մազերը զոհ կ'երթային մկրատի անխնայ հարուածներուն ու անշունչ դիակներու նման կը փռուէին գետին՝ ներողութիւն խնդրելով իրմէ: Յետոյ, երբ կարգը գար ծոծրակի աղուամազերուն, անոնց արմատախիլման սատանայական նպատակով ստեղծուած մեքենային պաղ հպումէն չուշաթափելու համար կը յիշէր աչքերուն զոցուիլը, որոնք կը բանար միայն երբ սանտրի վերջին հարուածին հետ լսէր «անուշ, նայիման»ը: Շուրջը իր թշուառ վիճակով հաճոյացող ժպիտներ էին, մինչ զինք թունաւորելու նպատակով երեսին սրսկուած աժաննոց O տը քոլոնի սիրտ խառնող հոտը կ'ն-

դողէր իր էութիւնը… Յայելիին մէջ կ՚երեւէր ի կիրակի առաւօտեան պատարագին համար պատրաստ մանուկին սափրուած, խնամուած, սանտրուած դէմքը, որուն անմեղութեան այնպէս ալ երբեք չհաւատաց:

“Soy el sueño de un hombre muerto” (Bruno Lazzaro)

Կ՚երազէր, բայց երազը իր աւարտին չհասած յանկարծամահ եղաւ:
Նոյն երազը հիմա մղձաւանջն է բոլոր անոնց՝ որոնց քունին մէջ կը յայտնըւի: Կը սպասէ որ անոնք երազը իր աւարտին հասցնեն, որպէսզի իմանայ այն ինչ որ իրեն համար ծրագրած էր իրեն ծնունդ տուած քունը:

Global Warming

Տօթը այնքան հեղձուցիչ էր այդ օր, որ շնչելու համար մասնաւոր ճիգ պէտք է ընէր:
Երեկոյեան նոր միայն թեթեւ զեփիւռ մը զգաց դէմքին: Վերջապէս քիչ մը զովանալու մտածումը ապրումի չվերածուեցաւ սակայն: Կարծես դժոխքէն փրցուած կրակէ գնդիկներ էին, որոնք դէմքին բախեցան: Դէմքը ծածկեց, բայց ձեռքերը այրեցան: Շուրջը անապատ էր, պահուըտելու տեղ չկար:
Մազերը արդէն բռնկած էին, զեփիւռը վերածուած էր խենթ քամիի եւ մոխրացած մարմնին փոշին կը խառնէ անկենդան շրջապատին:

Bartleby-եան խորհուրդ գրողներուն

Իւրաքանչիւր տաղանդաւոր գրող երբեք չի կորսնցներ նախընտրութեամբ չգրելու պատեհութիւնը:

Յեղձուցիչ

Ամառնային տեղատարափ անձրեւոտ առաւօտ մը, գործի շտապող քաղքենիներով լեցուն գնացքին մէջ, զինով դատարկապորտը ինքզինքէն ելած կը պոռայ որ պատուհան մը բանան, քանի որ անտանելի էր զինք խեղդող՝ նոր լոգցած, մաքրուած, օծանելիքներով թարմացած մարմիններէն եկող անմարդկային հոտը:

Exodus

Մովսէսը հաշտուած էր իր ճակատագրին հետ: Արդէն այլընտրանք չունէր: Խոստացուած երկիրը պիտի չտեսնէր: Ժողովուրդը ապահով կերպով պիտի անցնէր ծովէն անդին, բայց ինք ծովափին պիտի մնար եւ թոշակի պիտի անցնէր: Ծովը անցնելու համար ժողովուրդին վճարած տուրքէն համեստ բաժին մը իրեն մնացած էր եւ կը ծրագրէր անով արժանի հանգիստի անցնիլ: Թերեւս նոյն այդ ծովափին: Բայց ինչպէս դարեր յետոյ Mel Brooks-ը պիտի բացայայտէր, ստիպուեցաւ ծովը բանալու համար բարձրացուցած թեւերը վեր պահել, որովհետեւ երկու աւազակ իր կռնակին դրած էին իրենց զէնքերը “and keep them up” ըսելով: Երբ թեւերը վար առաւ, աւազակները կորսուած էին եւ իրենց հետ տարած իր քսակը:

Յաւանաբար մեռաւ լքուած ու աղքատ:

Քաշէ քիթէդ տուր

Համացանցին մէջ կարդաց թեմային վերաբերեալ ամէն բան որ գրուած էր, եւ բացասական, եւ դրական: Կայքէջերուն վրայ համեմատեց առաջարկուած *մակնիշ*ները, բաղդատեց գիները, *թեքնիք* մանրամասնութիւնները, կարդաց սպառողներու կարծիքները, գնորդներու հարցումները: Ի վերջոյ որոշեց գնելիքը՝ Aspire High-end Vaping Kit, “…a change you can taste”, ինչպէս կը համոզէր ծանուցումը: Այդպէս էր, որ ծխելու սկսաւ, առանց շատ հասկնալու թէ ինչու իրեն հարց կու տային թէ արդեօք կը փորձէր ծխելէ հրաժարիլ:

ՆԱՄԱԿԱՆԻ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ԵՒ ԿԱՐԱ-ԴԱՐՎԻՇԻ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Գրիգոր Պըլտեանի *Հայկական ֆուտուրիզմ* մենագրութիւնը մանրակրկիտ ու խորազնին ներկայացումով մեր գրականութեան պատմութեան լոյսին բերած է մոռացութեան գիրկը նետուած Կարա-Դարվիշի (Յակոբ Գէնջեան, 1870-1932) անունն ու արտադրութիւնը[1]: Արեւելահայ ապագայապաշտութեան ռահվիրան, ինչպէս յայտնի է, երկար տասնամեակներէ ի վեր մասնագիտական նեղ շրջանակներու ծանօթ էր միայն, այդ ալ՝ գրեթէ բացառաբար որպէս ի միջի այլոց անուն:

Կոստան Զարեան, որ ապագայապաշտութեան նկատմամբ համակրանքի որոշ արտայայտութիւններ ունեցած էր 1910ական թուականներուն, *Անցորդը եւ իր ճամբան*ի մէջ ջերմ վերաբերումով բնութագրած էր Կարա-Դարվիշը, անձնական յարաբերութեան փաստը տալով. «Կարան եզակի երեւոյթ է մեր իրականութեան մէջ: Յերոս, իր տեսակին եւ ամենայնդէպս ըմբոստ: Նա ընկերային նախապաշարումներից դուրս մի մարդ է, ոչ տաղանդից եւ ոչ էլ ընդհանուր զարգացումից զուրկ: Յայ վաճառականը, բրածոյ հայ վարժապետը եւ կլուբների սեղանների շուրջը լորձնաշուրթն սողացող կովկասահայ գրագէտը քմծիծաղով եւ հեգնանքով են նայում նրա վրայ: Եւ սակայն հերոսը նա է: Նա է իսկական դէրվիշների եւ աշուղների յաջորդը, նա է բանաստեղծի պատիւը պահում, նա է մեր խիղճը[2]»:

Ամենայն հաւանականութեամբ, երկու գրագէտները առաջին անգամ հանդիպած էին Զարեանի՝ Թիֆլիս կարճատեւ այցելութեան օրերուն (1919): Այս այցելութեան հետքը կը գտնենք Զարեանի *Նաւը լերան վրայ* վէպին մէջ,

[1] Պըլտեան, Գրիգոր. *Հայկական ֆուտուրիզմ*, Երեւան, 2009, էջ 157-309:
[2] Զարեան, Կոստան. *Երկեր*, Անթիլիաս, 1975, էջ 94: Բացի կէտադրական եւ լեզուական չնչին տարբերութիւններէ, *Անցորդը եւ իր ճամբան*ի նոր հրատարակութեան մէջ կը պակսի վերջին նախադասութիւնը, որ հանուած է Զարեանի կողմէ (Կոստան Զարեան, Անցորդը եւ իր ճամբան (համայնավէպ), Երեւան, 2010, էջ 155, 551):

որուն կերպարներէն մէկը Կարա-Դարվիշն է՝ սոսկ Կարա անունով, թէեւ Չարենցի կերպադրումը նուազ համակրական է, քան անցեալին: Անոնց յարաբերութիւնը զարգացած է Չարենցի Հայաստան երկամեայ կեցութեան ընթացքին (1922-1924), թէեւ ան Երեւան էր, իսկ Կարա-Դարվիշը՝ Թիֆլիս:

Յունիս 1924ին Չարենց Երեւանէն մեկնած է հանդերձ ընտանեօք ու սկզբնապէս հանգրուանած Վենետիկ, ուր իր մանչ զաւակները մտած են Մուրատ-Ռափայէլեան վարժարանը: Ապա ան փոխադրուած է Փարիզ, կնոջ ու աղջկան՝ Նուարդի հետ:

Կոստան Զարեանի ու Կարա-Դարվիշի միջեւ փոխանակուած նամակներու փունջ մը պահպանուած է Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի վերջինիս ֆոնտին մէջ[3]: Նամակներէն երեքը (երկուքը՝ հայերէն, իսկ մէկը՝ ռուսերէն) Զարեանի գրիչին կը պատկանին[4]: Նիւթին հետ իր անմիջական առնչութեան համար, մեր հրապարակումը կ՚ընդգրկէ նաեւ Թագուհի Շահնազար-Զարեանի նամակը[5] Կարա-Դարվիշի կնոջ: Աւելի քան երկու տասնամեակ առաջ առաջին անգամ հրատարակած էինք Կարա-Դարվիշի նամակը, որ կրկին լոյս կը տեսնէ բնագրային որոշ ճշդումներով եւ ծանօթագրութիւններու ամբողջացումով: Առաջինի բացառութեամբ, բոլոր նամակները գրուած են Զարեանի արտասահման մեկնումէն ետք:

Թղթակցութեան ամբողջութիւնը շահեկան է՝ բազմաթիւ պատճառներով: Այսպէս, Կարա-Դարվիշի նամակէն կը ցոլանայ պաշտօնական որոշ գուրգուրանք, որ հաւանաբար հետեւանք է 1922-1925ին խորհրդահայ վարքագծին մէջ տիրող ու Ալ. Միասնիկեանի վարած «ազգային» ուղղութեան, ներառեալ այսպէս կոչուած «համախմբում»ի երեւոյթը՝ թէ՛ Խորհրդային Միութեան մէջ գտնուող եւ թէ՛ արտասահմանի տարբեր գաղութներ ապաստան գտած մտաւորականներ Հայաստան բերելու եւ երկրի վերականգնումին լծելու առնչութեամբ: Կարա-Դարվիշին տրուած առաջարկներն ու խոստումները մաս կը կազմէին այս ուղղութեան: 29 սեպտեմբեր 1924 թուակիր նամակով, Ստեփան Զօրեան Զարեանին հետեւեալ տեղեկութիւնները կու տար Երեւանէն.

«Դեր[ենիկ] Դեմիրճեանը հոս է: Մտադիր է մնալ: Նոյն նպատակն ունի ձեր բարեկամ Կարա-Դարվիշը: Ցիզ[րան] Նալբանդեանը գնացել է Լենինական, այնտեղի ստուդիայում պաշտօնավարելու»[6]:

[3] Բոլոր նամակները պահպանուած Տճս Երեւանի Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան (ԳԱԹ), Կարա-Դարվիշի ֆոնտ, թիւ 80:
[4] Այսպէսով կը ճշդուի Երուանդ Տէր-Խաչատրեանի տեղեկութիւնը, թէ «պահպանուել է Զարեանի երկու նամակը՝ ուղղուած Կարա-Դարվիշին», (Զարեան, *Անցորդը*, էջ 554):
[5] Մատթէոսեան, Վարդան. «Մեծ ճնշումներէն առաջ», «Յառաջ – Միտք եւ Արուեստ», յուլիս 1996, էջ 4:
[6] ԳԱԹ, Կոստան Զարեանի ֆոնտ, թիւ 31: Նամակին հրատարակութիւնը տճս Ստեփան Զօրեան, *Նամակներ, կարծիքներ, գրախօսականներ*, «Նորք», 4, 2002, էջ 108-109:

Նոյնպէս շահեկան է 1925ին Չարեանի գրած նամակը, ուր Կարա-Դարվիշի օժանդակութիւնը խնդրած է՝ իր հիմնած “La Tour de Babel” գրականութեան միջազգային հանդէսին նիւթեր ապահովելու: Կ’ենթադրենք, որ նամակը ռուսերէն գրուած էր, որպէսզի Կարա-Դարվիշ զայն օգտագործէր՝ հանդէսին անունով խօսելու պահուն: Այս նամակին տրուած որեւէ պատասխան յայտնի չէ: Հրապարակումին մէջ, պահպանած ենք Կարա-Դարվիշի եւ Թագուհի Չարեանի նամակներուն դասական ուղղագրութիւնը (վերջինի պարագային միայն սրբագրած ենք այն սխալները, որոնք կապ չունին ուղղագրական փոփոխութեան հետ), յարգելով 1922ի ուղղագրութեան հետ խառնուրդի հետքերը: Կ. Չարեանի երկու հայերէն նամակները դասական ուղղագրութեան վերածած ենք:

Ա.

25/IX/[1923]
[Երեւան]

Սիրելի Կարա,

Հազար ներողութիւն – մի նամակ գրել եմ չես ստացել – կինս երկու ամիս պա[ռ]կած էր – լուռ առի, որ մի եղբայրս Բաքու մեռել է եւ շատ ուրիշ հանգամանքներ արգելք եղան որ գրեմ[7]:

Եթէ գաս այստեղ բնական է որ կարող ես մօտս իջնել: Ի՞նչ խօսք կարող է լինել այդ մասին:

Փողդ ղրկել են «Պայքար»ից[8] – ստացա՞ր . . . Յօդուածդ էլ ըս-տացուեց[,] Կարինեանի[9] մօտ է, որ այստեղ չէ. Թիֆլիս պիտի անցնի, աշխատիր տեսնըւել եւ այդ մասին անձամբ խօսիր:

Յօդուածդ[10] կարդացի. merci! – բայց այլեւս ամաչում եմ երեխաների հետ դուրս գալ, կարծում եմ, որ ամէնը մեր վրայ են նայում:

Լսի՛ր – պրոֆեսոր[11] ասելով վիրաւորում ես ինձ. պրոֆեսորը դո՛ւ ես եւ մի բան էլ աւելի:

Բարեւներ կնոջդ եւ քեզ:

Կ. ԶԱՐԵԱՆ

---

[7] Այս նամակը կը թուի պատասխանած ըլլալ Կարա-Դարվիշի մէկ նամակին, որ մեզի հասած չէ:
[8] «Պայքար»՝ «Խորհրդային Հայաստան»-ի գրական յաւելուած: Լոյս տեսած է 1923ին:
[9] Արտաշէս Կարինեան (1886-1982), քաղաքական գործիչ, գրականագէտ: Խմբագրած է «Պայքար»ը 1923ին:
[10] Կարա-Դարվիշ, «Տպաւորութիւններ նոր Հայաստանից», «Մարտակոչ», 17 Օգոստոս 1923: Յօդուածը քանի մը պարբերութիւններ նուիրած էր Զարեանին՝ Հայաստան եկած այլ մտաւորականներու շարքին. «Ահա լուրջ գծաւոր ջենտլմէն Կոստան Զարեանը, հայ բանաստեղծ եւ համալսարանի պրոֆեսոր: Քան տարի սա ապրել է Հռոմ, Ֆլորենցիա, Բրիւսել, Ժընեւ եւ Լոնդոն եւ այնտեղ է ստացել իր կրթութիւնը եւ այնտեղ բացել իր կեանքի ասպարէզը: Ինքը իտալական կուլտուրայի ծնունդ է, անգամ իր բանաստեղծութիւնները, գրքերը տպուած են եղել իտալերէն: Զաւակներ ունի, կարծես, փոքրիկ ֆլորենտացիներ լինեն: Ամուսինը վենետիկուհի է եւ ընտիր դաշնակահար եւ հիմա Հայաստանի կոնսերվատորիայի դասատու: Ապրում են մի սենեակում մեծ անյարմարութիւններով, Ֆլորենցիայում ունեցել են շքեղ բնակարան, շքեղ արդ ու զարդով ու կահաւորումով: Սակայն հարցրէք իրենց, խօսեցրէք—Ռեւանա խուցը կը փոխե՞ն Ֆլորենցիայի կամ Հռոմի շքեղ պալատի հետ:
—Ո՛չ:
Ինչո՞ւ
—«*Սա մերն է եւ մեր աշխատանքով ենք ստեղծում ամէն ինչ*» (ընդգծումը բնագրային է):
[11] Զարեան 1922-1924ին Երեւանի համալսարանի բաղդատական գրականութեան դասախօս էր:

Բ.

25-VII-24
Campo S[an] Giovanni Nuovo, 4138
Venezia

Սիրելի Կարա,

«Խ[որհրդային] Հ[այաստանում]» կարդացի[12], որ տ[իկին] Զառափեանը[13] Երեւան է գնացել[14] շատ ուրախ եմ. յուսամ յաջողութիւն ունեցել է: Պիտի կարողանա՛յ վերադառնալ Փարիզ[15]:

Դու ո՞ւր ես: Գնացի՞ր Դիլիճան եւ ինչ ես անում այնտեղ: Այստեղ Սարեանին տեսայ[16]: Ցուցահանդէսի մի անկիւնում շարել է իր պատկերները – ոչ ոքի վրայ ոչ մի տպաւորութիւն — իսկ միւս հայերը՝ ծակ ու ծուկ, կորած.- Այդքան ինտրիգներ արաւ այդպիսի խեղճ հետեւանքների հասնելու համար[17]. . .

Կինս եւ տղաքս “capanna”[18] վարձել են եւ առաւօտ կանուխ գնում են ծովափը ու մնում մինչեւ երեկոյեան: Բարեւում են քեզ եւ տիկնոջ:

Դեռ գրականութեան եւ արուեստի շարժումներով չ’հետաքրքրուեցի. այնքան գործ կայ գլխիս: Շուտով, սակայն կը գրեմ քեզ աւելի մանրամասն: Այս նամակով ուզում եմ միայն «կապեր հաստատել» միայն [sic] –

Գրիր ինձ մանրամասն, տեղեկագրի պէս բոլոր տեղեկութիւնները տուր –

Մնամ քո

Կ. ԶԱՐԵԱՆ

Բարեւներ բոլոր բարեկամներին:

---

[12] Վ.Թ., «Տիրուհի Զառափեան», «Խորհրդային Հայաստան», 3 յուլիս 1924, էջ 2: Յօդուածին հեղինակը հաւանաբար Վահան Թոթովենցն էր:
[13] Տիրուհի Զառափեան, դաշնակահարուհի: Հաստատուած է Փարիզ: 1917էն ետք համերգներ տուած է Զուիցերիոյ, Ֆրանսայի եւ Ռուսաստանի մէջ: Տե՛ս, օրինակ, «Օր. Տ. Զառաֆեանի [sic] եւ Օր. Լ. Դեմիրճեանի համերգը», «Հայաստանի ձայն», 15 յունուար 1923, էջ 7:
[14] Տ. Զառափեան ելոյթ ունեցած է Երեւանի մէջ 18 յուլիսին («Տ. Զառափեանի համերգը», «Խորհրդային Հայաստան», 17 յուլիս 1924):
[15] Դեկտեմբեր 1924ին մամուլը հաղորդած է. «Բարիզ հասաւ ծանօթ դաշնակահարուհի Տիրուհի Զառափեան որ տարիէ մը ի վեր կը գտնուէր Ռուսիա եւ Կովկաս» («Զանազան լուրեր», «Ապագայ», 20 դեկտեմբեր 1924, էջ 3): Տե՛ս նաեւ «Օր. Տիրուհի Զառաբեան [sic]», *Արձագանգ Փարիզի*, 21 դեկտեմբեր 1924, էջ 6, ուր ըսուած է, թէ «մինչ ինք Մոսկուա՝ անցագիրի վիզէին կ[ը] սպասէր երկար ատեն», հայրը յանկարծամահ եղած է Փարիզի մէջ:
[16] Մարտիրոս Սարեան (1880-1972), խորհրդահայ հռչակաւոր նկարիչ: Իբրեւ անդամ խորհրդային պատուիրակութեան, մասնակցած է Վենետիկի 14րդ երկամեայ միջազգային ցուցահանդէսին (Biennale), 1924ին: Տե՛ս «Վենետիկի գեղարուեստական ցուցահանդէսը (զրոյց ընկ. Մ. Սարեանի հետ)», «Խորհրդային Հայաստան», 24 օգոստոս 1924, էջ 5)
[17] Զարեան բացասական կարծիք յայտնած է Պիենալէի մէջ ներկայացուած Սարեանի նկարներուն մասին: Տե՛ս Կոստան Զարեան, «Խորհրդային Միութիւնը վենետիկեան ցուցահանդիսում», «Նոր Ակօս», 16 սեպտեմբեր 1924, էջ 188-189. Նոյն, *Նաւատոմար*, Երեւան, 1999, էջ 212-213 (յօդուածը լոյս տեսած է «Նոր Ակօս»-ի ո՛չ թէ 9րդ [անդ, էջ 619], այլ 10րդ թիւին մէջ):
[18] Հիւղակ (իտալերէն):

Գ.

Սիրելի Կոստիա

Նամակդ ստացայ: Կարդացի եւ «Նօթեր»դ «Խորհրդային Հայաստան»ում[19]. լաւ էր, բանաստեղծական էր, անշուշտ իմն ալ կարդացած կը լինես. «Դիլիջանի Սանատորիա»[20]: Ինչո՞ւ յաճախ չես գրում, հետաքրքրական է: Հոս, Դիլիջան, ժամանակս լաւ է անցնում, կազդուրվում ենք. տիկինը աւելացել է 10-12 բութով. ես էլ «խոզ» եմ դառել: Դու իմացար անշուշտ, որ ինձ բաւական օգնեցին, թէ «Закрайком»[21]ից Մեասնիկեանի[22] միջոցով տվին բաւական խոշոր գումար եւ թէ Լուկաշինի[23] կարգադրութեամբ սանատորիայից[24] մեզ երկուսիս տալիս են սնունդ (ապրում ենք դուրսը եւ լաւ է, հիվանդների մէջ չենք) եւ առատ, բոլ. ճաշը բերում են սանատորիայէն, իսկ իւղ, պաղ ձու, մեղր, շօկօլադ, հաց, շաքար, լուբիա եւ այլն կու տան ամէն 10 օրը: Մի խօսքով գոհ եմ: Այս օրերս հոս էր Լունաչարսկին[25], որ եկավ Հայաստան. քաջ ոգեւորութեամբ ընդունեցին, այցելեց եւ մեր սանատորիա[26]: Հետը եկած էին – Մռավեան[27], Աշոտ Յովհաննիսեան[28], Արամ[այիս] Երզնկեան[29], բժ. Լազարը[30] եւ շատերը:

Բոլորի հետ տեսակցեցայ: Եւ գիտես ինձ հրավիրում են Հայաստան: Մռավեանը առաջարկեց գալ, նախ քան Թիֆլիս գնալը, մտնել Երեւան բնակցութեան համար: Կարծեմ ուզում են գեղարվեստական բաժինը տալ եւ ռեցենզենտի[31] պաշտօնը:

---

[19] Զարեան, Կոստան. «Ճանապարհի նոթեր», «Խորհրդային Հայաստան», 2 օգոստոս 1924, էջ 2-3: Երկրորդ ու վերջին մասը լոյս տեսած է ամիս մը ետք (Նոյն, «Ճանապարհի նոթեր», «Խորհրդային Հայաստան», 4 սեպտեմբեր 1924, էջ 2):

[20] Կարա-Դերվիշ [sic], «Դիլիջանի սանատօրիան (փաստեր, տպաւորութիւններ», «Խորհրդային Հայաստան», 6 օգոստոս 1924, էջ 2-3: Յօդուածը թուագրուած է 26 յուլիս 1924: Աւելի ուշ հրատարակած է ուրիշ յօդուած մը՝ Կարա-Դարվիշ, «Դիլիջանի Քաջ Նազարը (փաստեր, տպաւորութիւններ», «Խորհրդային Հայաստան», 22 օգոստոս 1924, էջ 3):

[21] «Անդրկովկասի Շրջանային Կոմիտէ» (ռուսերէն):

[22] Ալեքսանդր Միասնիկեան (1886-1925), քաղաքական գործիչ: 1922-1925ին Անդրկովկասեան Հանրապետութեան կազմակերպիչն ու ղեկավարն էր:

[23] Սարգիս Լուկաշին (Սրապիոնեան, 1883-1937), քաղաքական գործիչ: 1922-1925ին Հայաստանի Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդի նախագահն էր:

[24] Առողջարան (ռուսերէն):

[25] Անատոլի Լունաչարսկի (1875-1933), քաղաքական գործիչ: 1917-1929ին Խորհրդային Միութեան լուսաւորութեան (կրթութեան) կոմիսարն էր: Հայաստան այցելած է 7-9 օգոստոս 1924ին:

[26] Տես «Ընկ. Լունաչարսկին Հայաստանում. ընկ. Լունաչարսկին Դիլիջանում», «Խորհրդային Հայաստան», 14 օգոստոս 1924, էջ 2: Ըստ թղթակցութեան, Լունաչարսկի 9 օգոստոսի երեկոյեան մէկ ժամ ու 45 վայրկեանի այցելութիւն տուած է Դիլիջան: Սակայն, առողջարանի մասին որեւէ յիշատակութիւն չկայ:

[27] Ասքանազ Մռաւեան (1883-1929), քաղաքական գործիչ: 1923-1929ին Հայաստանի լուսաւորութեան (կրթութեան) կոմիսարն էր:

[28] Աշոտ Յովհաննիսեան (1887-1972), պատմաբան, քաղաքական գործիչ: 1922-1927ին Հայաստանի Համայնավար Կուսակցութեան գլխաւոր քարտուղարն էր:

[29] Արամայիս Երզնկեան (1879-1938), քաղաքական գործիչ: 1922-1931-ին Անդրկովկասի Հանրապետութեան հողագործութեան կոմիսարն էր:

[30] Ինքնութիւնը կարելի չեղաւ պարզել: Թերեւս կ'ակնարկուի Ա. Ղազարեանին՝ հետագային «Առողջ կենցաղ» բժշկական պարբերականի պատասխանատու քարտուղարը (1929-1931):

[31] Գրախօս (ռուսերէն):

Աշոտ Յովհաննիսեան եւս ասեց, որ թարգման[ութեան] ատենօք[32] եւ առհասարակ շրջաններում խօսք եւ զրոյց է եղել ինձ հրավիրելու եւ խօսակցութ[իւնից] եւ ինձ ասած կոմպլիմենտներից[33] երեւում է, որ մեծ կարծիք ունեն իմ գրական տաղանդի մասին:

Իմ ցանկութ[իւն]ը գաղթելու սովետական Վրաստանից այժմեան Հայաստանի շատ բուռն է եւ ապա մտադիր եմ անցնել Հայաստանի վրայով մինչեւ Արագածի փէշերը եւ տալ իմ տպավորութ[իւններ]ը . . . առ այժմ հոսէն պիտի գրեմ:

Հրավիրված եմ եւ «Կոմմունիստ» (Բաքվա)[34] թերթին տալու իմ տպավ[որ]ութիւնները] Հայաստանէն, խմբագիրը հոս է[35]: Իսկ Թիֆլիս եղած ժ[ամանա]կս ինձ հրավիրեցին «Заря Восток[а]»-էն[36]:

Մէկ խօսքով գրողիս հ[ա]մ[ար] աշխատանք շատ է բացվում[37]: Սակայն ես ուզում եմ լիովին հանգստանալ հոս մինչեւ սեպտ[եմբերի] վերջը եւ այնքան էլ չը յոգնեցնել զիս:

Ժամանակը հոս լավ եւ ուրախ [է] անց կենում, հոս է սանատօրիան Ցօլակը՝ Խանզադեան[38] ձեր Համալսարանի պրոֆ[եսոր]. մեծ մասը անոր հետ եմ, սքանչելի մարդ մ[ը]ն է: Կարդացինք Սարեանի մասին ու ապշեցանք: Գրէ՛ եթէ կան ռեցենզիաներ[39] անոր մասին: Մխիթարեաններու քովը գացի՞ր, ինչ գրական նորութ[իւն]ներ կան: Գալդ ե՞րբ է լինելու: Երվանդ Պալեանը հոս կը բերեն եւ ոչ սանատօրիա[41], Անդրանիկը[42] սենեակ վարձած է:

Թօթով[ենց]ին[43] նամակ մը ճամբեցի: Հոս էր Էփրիկեանը[44]. ըսավ, որ աշնանը լայնածավալ հրատարակչական գործեր սկսելու են եւ հրատարակելու [են] գլխավորապէս գեղարվեստական բաներ: Լրագրէն կարդացի որ մեր պետ-հրատը Թիֆլիզէն մեծ քանակութեամբ թուղթ եւ տպարանակ[ան] պիտոյքներ առած է[45]:

---

[32] Կարելի չէ եղած պարզել, թէ խօսքը ո՞ր թարգմանութեան մասին է: Հայաստանի Ազգային Գրադարանի ցուցակը միայն կը պարունակէ 1926ին Պետհրատի կողմէ հրատարակուած Պ. Լապատինի *Յաղթանակ երկրի վրայ. Ուրուագծեր* հատորը՝ Կարա-Դարվիշի թարգմանութեամբ:
[33] Հաճոյախօսութիւն (ռուսերէն):
[34] «Կոմունիստ» (1920-1989), հայերէն օրաթերթ, Ատրպէյճանի Համայնավար Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի եւ Բաքուի Կոմիտէի պաշտօնաթերթ:
[35] Խմբագրին ինքնութիւնը կարելի չեղաւ պարզել:
[36] «Զարեա Վոստոկա», Անդրկովկասի երկրամասի Համայնավար Կուսակցութեան ռուսերէն պաշտօնաթերթ 1922-1936ին: Այնուհետեւ, Վրաստանի Համայնավար Կուսակցութեան, Գերագոյն Խորհուրդի եւ Նախարարաց Խորհուրդի պաշտօնաթերթ:
[37] 1924-1927ին Կարա-Դարվիշ կանոնաւորապէս աշխատակցած է Թիֆլիսի «Մարտակոչ» օրաթերթին՝ Հայաստանի մասին թղթակցութիւններով (Պըլտեան, *Հայկական ֆուտուրիզմ*, էջ 263-264):
[38] Ցոլակ Խանզադեան (1886-1935), գրականագէտ: 1922-1935ին եղած է Երեւանի համալսարանի դասախօս եւ ռուս գրականութեան ամպիոնի վարիչ:
[39] Գրախօսականներ (ռուսերէն):
[40] Կ’ակնարկէ Վենետիկի Ս. Ղազար վանքին:
[41] Երուանդ Պալեան (1869-1941), հրապարակախօս, խմբագիր:
[42] Ինքնութիւնը անյայտ է:
[43] Վահան Թոթովենց (1889-1938), արձակագիր ու թատերագիր:
[44] Միսաք Էփրիկեան (1892-1938), հրատարակիչ-խմբագիր: 1921-1925ին Պետհրատի վարիչ եղած է, իսկ յետագային՝ Պետհրատի տպարանի թեքնիկ մասի տնօրէնը:
[45] «Պետհրատում», «Խորհրդային Հայաստան», 9 օգոստոս 1924, էջ 4:

Նամակներդ ուղարկիր սանատօրիա, հօս այսպէս [Армения, Дилиджан, Санатории[46], ինձի]:

Շատ ուրախ եմ, որ Լեւոնենց[47] ողջ եւ առողջ են. տիկնոջդ բարեւ, իսկ երեխաներուդ համբոյր մեզմէ:

Վահրամ Փափազեանի[48] մասին կարդացի՞ր, Խարկովէն կը գրեն, թէ «Харьков[ский] прол[етарий]»[49] թերթը մեծ գովեստով է խօսում անոր մասին ու կը համեմատէ ան եվրոպական մեծերուն: Ցավում եմ որ այդ տղան հօս հոն հավաքած սիրողներով կը սպառէ իր ուժերը: Նամակ մը գրած է, Հայաստան կ[՛]ուզէ նորէն գալ:

Հոս ալ գրելու բան չունիմ, ցտեսութ[իւն]:

Քո ՅԱԿՈԲ

1924-VIII-13
Դիլիջան

Սիրելի Թագուհի. ընդունեցէք սրտագին բարեւներս դուք եւ եղբ[այր] Կոստիան. քաղցր համբոյրներ ձեր սիրասուն զավակներուն: Երջանիկ էք, արդէն ձեր հայրենիքում եւ հրաշալի երկրում, նախանձում եմ, ցանկանում եմ ամէն յաջողութիւն: Գրեցէք. Օլգա[50]:

P.S.[51] Մի նամակ մը գրէ ինձի, որ Չուբարեանին[52] երեսը տանք. սենեակը[53] ասա թէ մեզ տայ բնակվելու մի երկու շաբաթով մինչեւ Թիֆլիս վերադառնալը:

Դ.

27 Օգոստոս [1924]

Սիրելի Օլիա,

Որքան հաճոյքով կարդացի Ձեր երկտողը, բայց մեր սիրելի Կարա[յ]ինը կարդալու համար 3 ակնոց դրի չեղաւ, եւ մեզ համար թանկագին է նրա նամակը. բարի լինի աւելի [յ]ստակ գրելու, որպ[է]սզի առանց ակնոցի կարդանք:

Որքան ուրախ եմ որ Տիլիճան էք, եւ լաւ օդ, լաւ մեղր կարազ կ[՛]ուտէք,

[46]«Հայաստան, Դիլիջան, Սանատօրիա» (ռուսերէն):
[47]Լեւոն Եղիազարեան (՞-1927), երգիչ, Կոստան Զարեանի աւագ եղբայրներէն:
[48]Վահրամ Փափազեան (1888-1968), համբաւաւոր դերասան:
[49]«Խարկովսկի պրոլետարիի»՝ ուքրանական ռուսերէն օրաթերթ:
[50]Այս պարբերութիւնը գրած ու ստորագրած է Կարա-Դարվիշի կինը՝ Օլգա Գէնջեան:
[51]Post-scriptum (լատ. Յետգրութեան): Գրուած է Կարա-Դարվիշի կողմէ:
[52]Հաւանաբար կ՛ակնարկէ իրաւաբան Գրիգոր Չուբարին (1888-1962):
[53]Կ՛ակնարկէ Զարեանի նախկին բնակարանին Երեւանի մէջ (տե՛ս ծանօթ. 10):

ես չի տեսայ Տիլիճանը, բայց նորէն պիտի գամ[54]. մեզ միշտ նամակ գրեցէք, եւ ամէնափոքր պարա[գ]աներով, այսպ[է]սով հայրենիքի կարօտը կ'ափոփեմ: Չեմ մոռանար այն քնքոյշ հրաժեշտը Թիֆլիզ կայարանում, տայ աստված որ մի օր հրամէք այս հրաշակերտ Վենետիկում: Պեկզատեանը[55] չէր ուզեր մեկնիլ. «ընտանիքս պիտի բերեմ, որպ[է]սզի կ'ապրիմ [sic] Վենետկոյ հետ»: Իսկ Իսահակեանը[56] կը [բ]ացա[գ]ան[չ]է: - «Եղբայր չեն թողուր որ խօսքերնիս շարունակենք, տե՛ս, տե՛ս, ի՞նչ հրաշալի են այս տիկինները...», իրօք Օլիա, աչքի հանդ[է]ս է, մի ուրիշ բան է, այդքան գեղեցկութիւն, յԵրիվանից [յ]ետոյ... մի տօն է աչքերի համար: Գիշերը Ս. Մարկոս հրապարակում, այդ հոյակապ պալատներով շրջապատուած, Սուրբ Մարկոսը խ[ո]րքը կը պըճպճայ իր ոսկիներով հազարաւոր ելեքտրական լապտերներու լոյսի ներքեւ, ման կուգան այս հրաշալի էակները, նորաձեւ շալերով [փ]աթաթված գոյն գոյն, ես կարծեմ բոլորին խելքը կը դարձնեն, Կոստիան կ'ըսէ. «Թաթիկ[57], ալ կարելի չէ՛ դիմանալ, կարծ[է]ք, Թիցիանոի[58][,] Պելլինիի[59] նկարներից իջած ման են գալիս հրապարակում»: Բոլոր թան[գ]արանները պտտեցի արդէն, նաեւ ցուցահանդէսը, ողողվեցայ արվեստով, ա՜հ, պէտք ունէի այսպիսի գեղարվեստական «տուշի»[60] մը՝ 20 ամիս զոհաբերութենէ [յ]ետոյ[61]: Ո՞ւր է եւ ե՞րբ կուգայ համակրելի դաշնակահարուհին[62], ես կ'սպասեմ զինքը, եւ ձմեռն էլ ես էլ լուրջօրէն կը պատրաստվիմ: Երկու մանչուկներս[63] արդէն գիւղն են[64], Մուրատ-Ռաֆա[յ]էլ[65] վարժարանի աշակերտներով, մեկնած օրերնին բաւականին լացի, բայց ապահով եմ որ լաւ պիտի լինեն հոն:

Նվարդիկիս[66] հետ միասին համբուրում ենք Ձեզ սիրով եւ կարօտով[,] մեզ հաճախ գրեցէք

Ձեր **ԹԱԳՈՒՀԻՆ**

[54] Թագուհի Շահնազարեան Հայաստան վերադարձած չէ:
[55] Ալեքսանդր Բէկզադեան (1879-1938), քաղաքական գործիչ: 1922-1926ին Խորհրդային Միութեան առեւտրական ներկայացուցչութեան անդամ էր Գերմանիոյ մէջ:
[56] Աւետիք Իսահակեան (1875-1957), նշանաւոր բանաստեղծ: Վենետիկ ապրած է 1921-1926ին:
[57] Թագուհի Զարեանի փաղաքշական անունը:
[58] Թիցիանո Վեչելլի (1488/1490-1576), իտալացի նկարիչ:
[59] Ճովաննի Պելլինի (1430-1516), իտալացի նկարիչ:
[60] Ցնցուղ (ֆր. douche):
[61] Այսինքն՝ Հայաստան անցուցած ժամանակաշրջանը:
[62] Յայտնի չէ, թէ խօսքը որո՛ւ մասին է:
[63] Կ'ակնարկէ Վահէ Զարեանին (1913-1985), փիլիսոփայ, եւ Արմէն Զարեանին (1914-1994), ճարտարապետ:
[64] Կ'ակնարկէ Մխիթարեաններու երբեմնի ամառանոցին Ազոլոյի մէջ:
[65] Մխիթարեան միաբանութեան Մուրատ-Ռափայէլեան վարժարանը հիմնուած է 1836ին եւ գոյութիւն ունեցած է մինչեւ 1997: Վահէ ու Արմէն Զարեան այդ նշանաւոր վարժարանի շրջանաւարտներ եղած են:
[66] Նուարդ Զարեան (1917-2005), քանդակագործ, Կոստան եւ Թագուհի Զարեանի դուստրը:

Սարեանը [ռ]ուս նկարիչների հետ ներկայացած է. նոր դէպի classiqueի վերադարձող նոր շարժումի հիանալի [փ]որձերը տեսնելէ յետոյ, եկայ Սարեանի նկարների առջեւ, զարմացա՛յ, կարծես մի երախայ է, որ գոյներով շատ գոյներով կը խաղայ: Յոս չեն հաւանած –

Ինչո՞ւ չի բերել ամ[բ]ողջ մեր ուժերը, կարող էինք շատ լաւ ներկայանալ, եւ 2 տարի յետոյ, մեծ շարժում բերէք որպէսզի յաջողինք, թէ՛ étnogra[ph]ique[67] թէ՛ artistique[68] ձեւով ներկայանալ:

Մինչեւ նոր հասցէ լաւագոյն է այս

Collegio armeno

Ai Carmini

Venezia

Krassin[69] Վենետիկ է, իր հետ կը տեսնվի Կոստիան:

Կարդացի Diligeantի կարեւ[ո]ր եւ տխուր [յօ]դվածը[70], որքա՜ն որքա՜ն կարիքներ գոցելու ու գոցելու[71] . . .

Ե.[72]

LA TOUR DE BABEL
REVUE MONDIALE DE SYNTHÉSE
ARTISTIQUE ET LITTÉRAIRE
DIRIGÉE PAR CONSTANT ZARIAN
207, BOULEVARD RASPAIL
TÉLÉPHONE FLEURUS 46-59
E. MODEL
EDITEUR

8-VIII-25
Փարիզ[73]

Թանկագին Կարա,

Սկսել եմ արուեստների ու գրականութեան միջազգային մեծ հանդէսի

[67] Ազգագրական (ֆրանսերէն):
[68] Գեղարուեստական (ֆրանսերէն):
[69] Լէոնիտ Կրասին (1870-1926), խորհրդային քաղաքական գործիչ: 1923-1925ին Խորհրդային Միութեան արտաքին առեւտուրի կոմիսար էր:
[70] Այս յօդուածին հրատարակութեան տուեալները չկրցանք պարզել:
[71] Նամակին վերջին պարբերութիւնը եւ ստորագրութենէն ետք բոլոր պարբերութիւնները աւելցուած են լուսանցքներուն վրայ:
[72] Ռուսերէն բնագիրը անտիպ է: Մեր խնդրանքով, նամակը 2007-ին հայերէնի թարգմանած են Ռուդիկ (1948-2013) եւ Հայկանոյշ Հարոյեանները:
[73] Նամակը առաքուած է Կարա-Դարվիշի Թիֆլիսի հասցէով, բայց Դիլիջանի դրոշմակնիքը ունի՝ 22 օգոստոս 1925 թուականով:

հրատարակութիւնը[74]: Կը լինեն վրացական եւ հայկական նիւթեր[75]: Խօսիր *Ռոբակիձէի*[76] հետ եւ ուղարկիր ինձ նիւթեր՝ թատերական ներկայացումնե-րի *լուսանկարներ*, պատկերներ, կիրառական արուեստ եւ այլն: Թարգմանիր ֆրանսերէնի բանաստեղծութիւններ, պատմուածքներ, ընդհանուր բնոյթի յօդուածներ հայկական եւ վրացական կեանքի եւ գրականութեան մասին: Բարի եղիր այս նամակը ստանալուն պէս լրջօրէն վերաբերուել դրան եւ *10 օրից* ուղարկիր նիւթեր: Ուղարկիր նաեւ հայկական ներկայացումների լուսանկարներ:

Քո՝
Կ. ՉԱՐԵԱՆ

[74] Կ’ակնարկէ “La Tour de Babel” ֆրանսերէն հանդէսին, որուն առաջին ու միակ թիւը լոյս տեսած է Փարիզ, նոյեմբեր 1925ին:

[75] Հանդէսին մէջ հրատարակուած միակ հայկական նիւթը Արշակ Չօպանեանի մէկ պատմուածքն է՝ “Le dernier oubli” վերնագրով (հեղինակին ֆրանսերէն թարգմանութեամբ):

[76] Գրիգոլ Ռոբակիձէ (1882-1962), վրացի գրագէտ: «Գեղաշխ»ի (գեղարուեստի աշխատաւորներու վերահսկողութեան յանձնաժողով) նախագահն էր 1920ական թուականներուն: Չարեան 1922ի վերջաւորութեան անոր հանդիպած էր Թիֆլիսի մէջ (տե՛ս Չարեան, Երկեր, էջ 80-81. *Անցորդը,* էջ 151-152): 1929ին Հայաստան այցելելէ ետք, 1930ին Ռոբակիձէ վտարանդի դարձած է:

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ 1918-1920 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Առաջին Հանրապետութեան շրջանը մեր ժողովրդի համար բարդ ու հակասական, բայց եւ միաժամանակ՝ նուիրական ձեռքբերումներից մէկն էր նշանաւորում: Վերջապէս, վեցդարեայ պետականազուրկ մեր հաւաքականութիւնը իր փոքրիկ հողակտորի վրայ վերականգնում էր իր մարդկային ու ազգային իրաւունքները, միաժամանակ փորձում տէրը լինել իր անժամանցելի դատին, պետականաշինութեան դժուարին աշխատանքի կողքին արդարութեան համար բախելով նաեւ այլոց դռները: Արեւմտահայ հատուածի համար նոյնպէս այս շրջանը հեշտ չէր: Չնայած այդ տարիները համընկան Զինադադարի հետ, բայց ողբահաւաքի ողնաշարը շտկելու ճիգերով յատկանշուեցին: Այս շրջանում էր, որ հայոց նորակազմ պետութիւնը Ազգային պատուիրակութեան հետ փորձում էր Եւրոպայում «գլուխ բերել» Հայկական հարցի խնդիրը, իսկ արեւմտահայ գրողներն ու մտաւորականները, որոնք հանգրուանել էին Եւրոպայում եւ մաս էին կազմում Պօղոս Նուպար փաշայի ղեկավարած Ազգային պատուիրակութեան, ինչպէս՝ Արշակ Չօպանեանը, Վահան Թէքէեանը եւ ուրիշներ, որոնք Առաջին Հանրապետութեան հետ ոչ անպայմանօրէն միագիծ յարաբերութիւնների մթնոլորտում էին, փորձում էին միասնական ուժերով պաշտպան կանգնել հայութեան դատին:

Յօդուածը նուիրուած է Առաջին Հանրապետութեան կրթական եւ մշակութային կեանքը երեւան հանող հարցադրումներին՝ դիտուած հայ գրողների նամակագրութիւններից, որտեղ ժանրային առանձնայատկութիւններով եւ նամակների յաճախ խիստ ներանձնական բնոյ-

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Ծնած է Գիւմրի: 2006ին աւարտած է Խ. Աբովեանի անուան Հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական բաժանմունքը: 2006էն կ’աշխատի համալսարանի «Սփիւռք» գիտաուսումնական կեդրոնին մէջ՝ իբրեւ մեթոտիստ: 2014էն նոյն համալսարանի հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ անոր դասաւանդման մեթոտիքայի ամպիոնի օգնական է: 2008-2012 եւ 2017 թուականներուն արեւմըտահայ լեզու

եւ սփիւռքահայ գրականութիւն դասաւանդած է հայրենի եւ սփիւռքահայ ուսուցիչներու վերապատրաստութեան դասընթացքներուն: 2013ին ստացած է բանասիրական գիտութիւններու թեկնածուի գիտական աստիճան: Միջազգային եւ հանրապետական հանդէսներուն մէջ տպագրած է շարք մը գիտական յօդուածներ, մասնակցած գիտական, կրթական եւ գրական համաժողովներու, խմբագրած ու հրատարակութեան պատրաստած է Սփիւռքի գրականութեան վերաբերող տասնեակ գիրքեր: Հեղինակն է *Զարեհ Խրախունին եւ արեւելահայ բանաստեղծութիւնը* գիրքին (Երեւան, 2013):

թով, երեւոյթների գնահատութիւններն ու մտահոգութիւնները երեւան են գալիս առաւել անմիջական ու պարզ: Ուշագրաւ է այն փաստը, որ չնայած քաղաքական դժուարին ժամանակներին՝ հէնց այս շրջանում է առաւել արտայայտուած եղել մշակոյթի եւ պետականութեան միասնական ճանաչողութեան գերխնդիրը, թէկուզ եթէ յիշատակելու լինենք Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի բացառիկ դերակատարութիւնները:

Իմ կարծիքով Առաջին Հանրապետութիւնը իր դիմագծով նաեւ մշակութային էր, ինչ-որ տեղ մեր մտաւորականութեան 20րդ դարասկզբից հրապարակ նետած Մշակութային կամ Հոգեւոր Հայաստան հասկացութիւնների իւրօրինակ կերպաւորումով: Պատահական չէ, որ Յովհաննէս Թումանեանը, ելնելով այդ շրջանում մտաւորականութեան ոչ այնքան մխիթարական դրութիւնից, հէնց այս էր յիշեցնում Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ արուեստի նախարար Նիկոլ Աղբալեանին. «...Խնդրում եմ արտակարգ կերպով օգնութեան հասնէք մեր էդ թանկագին ուժերին (նկատի ունի «գրական մարդկանց» - Ք.Ա.), որոնք կազմում են հոգեւոր Հայաստանը[1]»:

Այդպէս պետականութեան ծնունդաբանութիւնը բանաստեղծական երազի իրագործում էր համարում հէնց այդ պետականութեան դիրքերում կանգնած Լեւոն Շանթը, երբ կուսակցական-պետական գործիչ Արտաւազդ Հանըմեանին Լոնդոնից ուղղուած 1918ի յունիս 30 թուագրուած նամակում գրում էր. «Վերջապէս ծնաւ մեր բանաստեղծներու այնչափ երգած «Մանուկն Հայաստանը». ծնաւ արեան ծովերի մէջ, բայց մարդկային ճակատագիրն է այս. ինչպէս ամէն մարդ, այնպէս ալ ամէն ժողովուրդ իր անհատականութիւնը կը ստանայ ծննդեան ցաւերով եւ արեան միջոցով: Ես կը հաւատամ մեր նորածինի մեծ ապագային[2]»:

Ռոմանթիկ Լ. Շանթն այստեղ աչքը քթթում էր դեռ 19րդ դարի առաջին կէսին այդ երազանքով ապրող, հայրենասիրական շնչով առանձնացած մեր միւս ռոմանթիկ բանաստեղծին՝ Ռափայէլ Պատկանեանին.

Կեցցէ՜ շատ օրեր մանուկ – Հայաստան
Նա՝ որ դեռ միայն մեր սրտի խորքում
Ունի իւր հիմքը, ո՛չ տուն, ո՛չ կայան
Չունի տակաւին բուն Հայաստանում[3]*:*

Նոյնքան բանաստեղծական է Յովհաննէս Թումանեանի բնութագրումը: Ի պատասխան իր ծննդեան 50ամեակի առթիւ կառա-

[1]Թումանեան Յ., *Երկերի լիակատար ժողովածու* - տասը հատորով, h. 10 / Նամակներ, Եր., 1999, էջ 344-347:
[2]Շանթ Լ., *Երկերի ժողովածու* - ինը հատորով, h. 9 / Նամակներ եւ բացիկներ, Եր., 2017, էջ 278:
[3]Պատկանեան Ռ., *Երկեր*, Եր., «Սովետական գրող», 1980, էջ 84 (տես «Հայ պատանին երգում է» բանաստեղծութիւնը):

վարութեան անունից ուղարկուած հեռագրի Ալեքսանդր Խատիսեանին գրուած նամակը մի կողմից ցոյց է տալիս Յովհաննէս Թումանեան արուեստագէտի արժէքի ընկալումը պետական շրջանակներում, միւս կողմից բացայայտում բանաստեղծի ու հայրենիքի յարաբերութիւնը. «Հայրենի երկրի անդրանիկ կառավարութեան անդրանիկ գրական ողջոյնն ու բարեմաղթութիւնները յուզեցին ինձ մինչեւ արտասուք:

«Էս բոլոր զգացումները ես բացատրում եմ ոչ թէ իմ գրական գործերի արժէքով, այլ ազգային ոգու անպարտելի հզօրութեամբ մեր ժողովրդի...

«Էս անգամ էլ, առասպելական ֆենիքսի նման, [Հայաստանը] պիտի յառնի իր օճախների մոխիրներից նոր կեանքով ու աւելի տաղանդաւոր բանաստեղծների զուարթ երգերով: Եւ եթէ բանաստեղծի աղօթք էք ուզում դուք ինձանից, ապա ես միայն մի աղօթք ունեմ նրա համար, որ նա, հայ ժողովուրդը, կենդանի մնայ ֆիզիքապէս, մնացածը ձեռք կը բերի ինքը. ինքը, որ կանգնած է աշխարհների մէջտեղը, Հայաստանի երկնահաս բարձրաւանդակին, երկնից էնքան մօտիկ, իր խոհուն ճակատը դէմ տուած աշխարհի բոլոր փոթորիկներին՝ պայծառ նայում է դէպի իր մեծ ու լուսաւոր ապագան[4]»:

Նմանօրինակ զգացումները Յովհաննէս Թումանեանի աշխարհում պարբերաբար ծաւալւում են ժողովրդի համար բախտորոշ ժամանակներում եւ ուղղակի դարձնում բանաստեղծութեան ու նամակագրութեան միջ-թեքսթային կապերը: Լաւագոյն օրինակը մեզ տալիս են նշուած նամակի ու 1915ին գրուած «Հայրենիքիս հետ» բանաստեղծութեան զուգադրումները, երբ վերջինիս մէջ յայտարարում էր.

Ու պիտի գայ հանուր կեանքի
արշալոյսը վառ հագած,
Հայմր-հայար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին,
Արարատի սուրբ լանջին,
Կենսաժպիտ իր շողերը պիտի
ժպտան առաջին,
Ու պոէտներ, որ չեն պղծել իրենց
շուրթերն անէծքով,
Պիտի գովեն քո նոր կեանքը նոր
երգերով, նոր խօսքով[5]:

Եթէ եղեռնի ահասարսուռ օրերին բանաստեղծը աշխատում էր արուեստագէտներին զերծ պահել շուրթերն «անէծքով պղծելու» գայթակղութիւնից, ապա այժմ՝ ազատ հայրենիքի առկայութեան պայմաններում, արդէն իր անունից լիիրաւ կարող է աղօթք մրմնջալ:

Ի դէպ, գրողական հրաշալի երկ-

[4] Թումանեան Յ., *Երկերի լիակատար ժողովածու* - տասը հատորով, հ. 10, էջ 659-660:
[5] Նոյնը, *Երկերի լիակատար ժողովածու* - տասը հատորով, հ. 1 / բանաստեղծութիւններ, Եր., ԳԱ հրատ., 1988, էջ 270:

խօսութիւն է պարզում «Հայրենիքիս հետ» բանաստեղծութեան հետ այդ շրջանում Աւետիս Ահարոնեանի «Հայրենիքիս համար» յուշագրութիւն-ակնարկի (Պոսթոն, 1920)՝ նամակ յիշեցնող «Հայրենիքդ իմ, ներիր ինձ» հատուածը, որտեղ խոշորագոյն պետական գործիչը աչք է քթթում ամենայն հայոց բանաստեղծի տողերին ու սրտայոյզ արձագանգում. «Հաւատամ, Հայրենիք, վիրաւոր ու արիւնաքամ, դու դարձեալ պիտի ապրիս, վասնզի անապատների բոլոր ոռնացող խուժաններն իսկ անզօր են սպաննել Լոյսը, որ մի բարի Աստուած, մի գթոտ Աստուած մի օր քո կարկառուն բազուկների մէջ դրեց, ո՜վ դու Յոյսի Հայրենի՛ք, Լոյսի Հայրենի՛ք... [6]»:

Վերադառնալով Յովհ. Թումանեանին՝ նշենք, որ բուռն է նաեւ նրա արձագանգը Ալեքսանդրապոլի հայկական համալսարանի բացման առթիւ իրեն յղուած հրաւէրին ի պատասխան, որն ամփոփում է ժողովրդի ու պետականութեան, կրթութեան դերի մասին նրա ամբողջական պատկերացումը. «Թէ՛ հայ գրողների ընկերութիւնը, եւ թէ՛ ես անձամբ ստացանք էն ամենաթանկ հրաւէրը, որ կարող էինք երազել: ...Սրտագին շնորհաւորում եմ հայկական առաջին համալսարանի բացումը ազատ Հայաստանում: Մեր ժողովրդին բռնակալներից ազատելուց յետոյ պիտի ազատել նրա միտքն ու հոգին եւ հաղորդակից անել լուսաւոր մարդկութեան ու տիեզերքի մեծ կեանքին: Մեր դարաւոր մաքառումներով մենք դրան ենք ձգտել ամբողջ ցեղով...: Հայ գրողների կեանքն ու բախտը անխզելիօրէն կապուած են հայոց համալսարանի կեանքի ու բախտի հետ[7]»:

Եթէ վիճակագրօրէն նայելու լինենք Յովհ. Թումանեանի եւ առհասարակ հայ գրողների այդ շրջանի նամակների հասցէատէրերին, ապա դրանք հիմնականում ուղղուած են Առաջին Հանրապետութեան կառավարութեանը առաջին այրերին՝ Ալեքսանդր Խատիսեանին, Նիկոլ Աղբալեանին, Համօ Օհանջանեանին եւ ուրիշներին: Այդ բոլոր նամակներում, այդ թւում եւ սեփական ընտանիքներին ուղղուած, կարմիր թելի պէս անցնողը հէնց ժողովրդի ու պետութեան, արուեստագէտի ու երկրի յարաբերութեան հարցադրումներն են:

Այս պայմաններում եթէ փորձենք խօսել զուտ գեղարուեստական արտադրանքի մասին, ապա կարող ենք նկատել, որ առանձնապէս շատ չեն նուաճումները. պէտք է արձանագրել, որ այս շրջանում լոյս է տեսել, եթէ կարելի է այդպէս կոչել, «ծրագրային» գրականութիւն,

[6] Ահարոնեան Աւ., *Երկերի ժողովածու*, հ. եօթներորդ, Վենետիկ-Ս. Ղազար, 1948, 366:
[7] Թումանեան Յ., *Երկերի լիակատար ժողովածու* - տասը հատորով, հ. 10 էջ 344-345:
[8] Զապէլ Եսայեանը՝ աշխարհի հինգ ամենաանվախ կանանցից մէկը, Կիլիկիայում տագնապալի օրերին, զբաղուած էր որբահաւաքման եւ նրանց համար աւելի ապահով վայրերում հանգրուաններ որոնելու մաշող աշխատանքով՝ ձգտելով փրկել հայ ժողովրդի այդ փոքրիկ «մնացորդաց»ը: Այդ մասին

ինչպէս օրինակ Զապէլ Եսայեանի[8] թարգմանութիւնները (*La situation des arméniens de Turquie exposeée par des documents* / Հանրի Բարբի հետ), Արամ Անտոնեանի *Այն սեւ օրերուն* գիրքը (Պոսթոն, 1919), հայկական ջարդերի մասին մէկ այլ գործի ֆրանսերէն թարգմանութիւնը (*Documents officiels concernant les massacres arméniens; repridaction photographique d'un grand nombre de documents*, Paris, 1920), Սմբատ Բիւրատի *Արիւնի ձորը* Կիլիկեան կեանքից վերցուած վիպակը (Պոսթոն, 1919), Միքայէլ Շամտանճեանի *Հայ մտքին հարկը եղեռնին* (աքսորականի մտածումներ եւ զգացողութիւններ) գիրքը (Պոլիս, 1919), պոլսահայ մամուլում Երուանդ Օտեանի՝ մինչեւ Տէր Զօր կատարած ահասարսուռ ճամբորդութիւնների մասին *Թիւ 17 Խաֆիէն* վէպը, որ առանձին գրքով լոյս տեսաւ միայն 1937ին, Պէյրութում: Դրանք հիմնականում պատմում էին Թուրքիայում ժողովրդի կրած տառապանքների մասին եւ աւելի շատ տեղեկատուական բնոյթ ունէին: Զտարիւն գեղարուեստական գրականութիւն այդ շրջանում գրեթէ չի տպագրուել՝ բացառութեամբ Աւետիք Իսահակեանի *Հայրենի աղբիւրից* բանաստեղծութիւնների ժողովածուից (Պոսթոն, 1920), Եղիշէ Չարենցի «Սոմա» (Թիֆլիս, 1918) եւ «Ամբոխները խելագարուած» պոէմից (Թիֆլիս, 1919) եւ մի քանի այլ գործերի:

Ի դէպ, այդ ժամանակ Պոլսում հանգրուանած Երուանդ Օտեանը իր հերթին «Ժամանակ»ի եւ «Վերջին լուր»ի համար միայն քաղաքական լուրեր հասցնող թղթակիցների կարիքն ունէր, ինչի շուրջ ակնկալում էր Արշակ Չօպանեանի, Աւետիս Ահարոնեանի, Վահան Թէքէեանի օգնութիւնը. այդ են վկայում Ա. Չօպանեանին նրա յղած նամակները[9]:

Եւ այս պայմաններում, ի հարկէ, գրողների համար դժուար էր գրական աշխատանքով զբաղուելը: Աւետիք Իսահակեանը, օրինակ, Համօ Օհանջանեանին 1919ի մայիսի 30ին

կարդում ենք նրա՝ 1920 թ. փետրուարի 24ին Ալեքսանդրիայից Ազգային Պատուիրակութեան ղեկավար Պօղոս Նուպարին ուղղուած նամակում. «Վաղը կը մեկնիմ «Սֆինքս» շոգենաւով դէպի Կիլիկիա. ներկայ պայմաններուն մէջ անշուշտ անհնար է դպրոցներու գործով զբաղիլ, բայց մտածեցի, որ այսուամենայնիւ պարտաւոր եմ չի յետաձգել ճամբորդութիւնս...» (Եսայեան Զ., *Նամակներ*, Եր., Երեւանի Համալսարանի հրատ., 1977, էջ 154): Ուշագրաւ է այն, որ այս պայմաններում նա իւրօրինակ «որբութեան» էր դատապարտել սեփական զաւակներին, որոնց համար փորձում էր նաեւ տիպար մօր օրինակ ծառայել. ահա Սոֆի եւ Հրանդ Եսայեաններին Մերսինից 1920ի մարտի 27ից նրա ուղղած նամակը. «Եթէ այս վտանգաւոր օրերին ես հեռանայի, մարդիկ պիտի կարծէին, թէ ինչ-որ պատրուակով փախուստ եմ տուել: Դուք, անշուշտ, պիտի չուզենայիք, որ նման կասկածի թէկուզ նշոյլն ունենային իմ նկատմամբ» (Նոյն տեղում, էջ 157):
Այս հոգեբանական վիճակը, ընդհանրական անկումային տրամադրութիւնը բնութագրում է այդ շրջանի գրեթէ բոլոր մտաւորականներին՝ հայրենիքում կամ նրա սահմաններից շատ ու շատ հեռու, ինչպէս օրինակ Աւետիք Իսահակեանի պարագայում: Անգամ անձնական, ընտանեկան նամակագրութեան մէջ առաջին հորիզոնականում ազգային ընդհանուր մտահոգութիւններն են. այնպիսի մի ցաւալի իրողութիւն, ինչպէս Թումանեանի որդու կորուստն էր, դարձեալ նոյն այդ օրերին նրան ետ չի պահում ազգային տանջալի մտահոգութիւններից, ինչի մասին կարդում ենք 1918ի դեկտեմբերին Անդրանիկին յղուած նամակում (Թումանեան Յ., *Երկերի լիակատար ժողովածու* - տասը հատորով, հ. 10, էջ 298-299):

[9] Օտեան Ե., *Նամակներ*, Եր., ԳԱԹ հրատ., 1999, էջ 244-245:

յղած նամակում գրում էր. «Վէպս եմ գրում օր ու գիշեր (խօսքը «Ուստա Կարօ»ի մասին է – Ք. Ա.), որ պատրաստ լինի մինչեւ տուն գնալս[10]»: Իհարկէ, վէպը կիսատ մնաց, հեղինակի իսկ նկատառումով, «վերջերս ընդհատեցի, եւ գրում եմ հիմա Սասունցի Դաւթի որդու՝ Միհրի պոէման, իմ վարիանտի Միհրը, որը պոլշեւիկ է[11]», իսկ բանաստեղծի տունդարձը տեղի ունեցաւ շատ աւելի ուշ: Մէկ այլ Բառնաբաս Պիլեզիքճեանին 1919ի յունիսի 7ին ուղղուած նամակում, շարունակելով վերադարձի յոյսը փայփայել, ուրախութեամբ յայտնում էր, որ Փարիզի փողոցներից մէկը կոչուել է Հայաստանի անունով, եւ աւելացնում. «Տայ Աստուած, շուտով արժանանանք իրար ազատ հայրենիքում տեսնելու եւ հիւր լինել Ձեր վանքում՝ Շիրակի կամ Տարօնի նուիրական տաճարներից մէկում, ուր մեծ Աբբահօր՝ Մխիթարի գործը շարունակենք մեր տանը[12]»:

Սակայն այնուամենայնիւ գրականութեամբ զբաղուել չի հասցնում, ինչպէս վկայում է Սիմոն Յակոբեանին Ժընեւից գրուած նամակում. «Մի երկու օր է՝ վերադարձել եմ Գերմանիայից: Շատ տպաւորութիւններ ունեմ ասելու, բայց հաւաս չկայ գրելու: Հայոց հարցի լուծման այս սըրտամաշ ձգձգտումը մաշում է ամէն եռանդ ու աշխոյժ. ձեռքս ոչ մի բանի տաք չէ, նոյնիսկ իմ սիրած նիւթերի (գրական) վրայ[13]»:

Այս առումով հետաքրքրական է Արշակ Չօպանեան-Աւետիք Իսահակեան երկխօսութիւնը, որտեղ երեւան են գալիս Չօպանեանի՝ Բրեստ Լիտովսկի պայմանագրի հետ կապուած յուսահատական տրամադրութիւնները եւ միաժամանակ գրողների եւ արուեստագէտների պատասխանատուութիւնը երեւան բերող տրամադրութիւնները. «Կ'ըմբռնեմ, որ այդ տրամադրութեանց մէջ Ձեզ անկարող զգաք բան մը գրելու. երբ կարենաք, անշուշտ չէք մոռնար «Վերածնունդ»ը: Մի՛ վհատիք, սակայն: Մեր ազգը եւ մեր cultur-ը չեն կորչիր: Անոնք նոյնիսկ հակառակ բոլոր աղէտներուն՝ մեծ ապագայ կրնան ունենալ եթէ մենք՝ արտասահմանի հայերս, կորովով եւ թաքթով գործենք[14]»:

Նոյն անբաւարարութիւնն էր ապրում նաեւ ամենայն հայոց բանաստեղծը՝ Դաւիթ Անանունին 1919ի յունուարին գրած նամակում, երբ գրական գործով զբաղուելը անհնարին էր թւում, ինչի մասին ծիծաղախառն, բայց խորքի մէջ ցաւով յայտնում էր. «Ուր մնաց հալա դեռ ճամբիցն էլ դուրս գաս ու դէս-դէն ջիրիդ խաղաս[15]»: Տրամադրութիւնը

[10] *Աւետիք Իսահակեանի նամակները*, Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 78:
[11] Նոյն տեղում, էջ 86 (տե՛ս Սիմոն Յակոբեանին ուղղուած նամակը):
[12] Նոյն տեղում, էջ 81:
[13] Նոյն տեղում, էջ 82:
[14] Չօպանեան Ա., *Նամականի*, Եր., «Սովետական գրող», 1980, էջ 135:
[15] Թումանեան Յ., *Երկերի լիակատար ժողովածու* -տասը հատորով, հ. 10, էջ 343:

շարունակւում է նաեւ Հանրապետութեան առաջին տարեդարձի օրերին, երբ իբրեւ գրող ճիշդ է, զգում էր իր արածի անբաւաւարութիւնը. «Ոչ միայն ժամանակս է անց կենում, այլեւ հէնց ինքս էլ եմ անց կեցնում», բայց միաժամանակ մխիթարական, «արդարացուցիչ» հանգամանքներ է բերում. «Բայց ինձ ուժեղ կերպով էապէս է դրդում ու տրամադրում մեր նոր կեանքը, նոր Հայաստանը: Ամէն մարդ այժմ պէտք է իր տեղը ամուր կանգնի եւ աւելի եռանդով անի իր անելիք գործը: Եւ մենք շատ բան պէտք է անենք ու կարող ենք անել: Ես զարմանալի մեծ հաւատ ունեմ ու մեծ կարծիք մեր ցեղի հոգեւոր ու բարոյական կարողութեան վրայ[16]»:

Ստեղծագործական առանձնակի լիցքեր չի գտնում 1918ի հոկտեմբերին Հայոց ազգային պատուիրակութեան մէջ «յոյժ պատուաբեր» պաշտօն զբաղեցնող՝ եգիպտահայոց ներկայացուցիչ ընտրուած Վահան Թէքէեանը, երբ Արշակ Չօպանեանին Երուսաղէմից 1918 թ. յուլիս 20ին ուղղուած նամակում «արդարանում է», թէ՝ «Կ'ուզէի ոտանաւոր մըն ալ ես ղրկել «Վերածնունդ»ին համար, բայց թուղթերս աչքէ անցուցի եւ բան մը չգտայ, որ այսօրուան յարմարէր (**այսօրուան**-ը հեղինակի ընդգծում ն է – Ք.Ա.): Պէտք է թողուլ ատոնք հատորիկի մը, որ իբրեւ վկայարան մը մեր այս քանի մը տարուան մէջ կրած յուզումներուն, ժամանակագրական արժէք մը ունենայ թերեւս[17]»: Խօսքը 1919ին Փարիզում լոյս տեսած «Կէսգիշերէն մինչեւ Արշալոյս» խորհրդանշական ժողովածուի մասին է:

Ափսոս, որ այդ Արշալոյսը տեւական չեղաւ, եւ այդ նոյն արուեստագէտները արձանագրեցին նաեւ Առաջին Հանրապետութեան անկումը, ինչպէս Աւետիք Իսահակեանը. «Ուղղակի, անհայրենիք դարձանք, եւ Հայաստանն աւելի երեւակայական դարձաւ, քան երբեւէ[18]», ինչպէս Լեւոն Շանթը, որ այդ ցաւալի անկումը կերպաւորեց մի փոքր աւելի ուշ՝ արդէն բուն գրականութեան մէջ՝ «Ինկած բերդի իշխանուհին» թատրերգութեամբ (1921):

Բայց անկախ այդ անկումից, միանշանակ է, որ Առաջին Հանրապետութիւնը նոր դարագլուխ էր հայոց պետականութեան պատմութեան մէջ, որը հրացոլքի էր նման, եւ որի տեսլականը մեզ բոլորիս պիտի բերէր կանգնեցնէր այսօրուան Հանրապետութեան դարպասների առջեւ, ինչը թոյլ է տալիս ասելու, որ մենք բոլորս Առաջին Հանրապետութեան շարունակականութիւնն ենք:

[16] Նոյն տեղում, էջ 350:
[17] Թէքէեան Վ., *Նամականի*. կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց Աւետիս Գ. Սանճեան, Լոս Անճելըս, հրատ. Թէքէեան մշակութային միութեան, 1983, էջ 200:
[18] *Աւետիք Իսահակեանի նամակները*, էջ 94:

ՈՍԿԵԴԱՐԵԱՆ ԴԻՏՈՒԱԾ

Արա Մածունեանի Պուրճ Համուտի նուիրուած լուսանկարներու գիրքին առիթով

BIRDS NEST – A Photographic Essay of Bourj Hammoud by Ara Madzounian, USA, 2016

Հարցազրոյցը վարեց՝ ՀՐԱՅՐ ԱՆՄԱՀՈՒՆԻ

Անցնող քանի մը տարիներուն լուսանկարչական երկու հատոր լոյս տեսան Պուրճ Յամուտի ու պուրճ համուտցիներու մասին: Առաջինը՝ վերը նշուած Արա Մածունեանի հատորն է (անգլերէն ու գունաւոր): Միւսը Արիան Աթէշեան-Տըլաքամփանյի՝ Ariane Delacampagne: Portraits of Survival – The Armenians of Bourj Hammoud, Somogy Editions, Paris 2014 հատորն է (անգլերէն – ֆրանսերէն, սեւ-ճերմակ): Նոյն նիւթով երկու գիրք. մէկը միւսէն այսքան տարբեր հաւանաբար չեն կրնար ըլլալ:

Աթէշեանինը կը յաջորդէ Պուրճ Յամուտ կեցութեան շրջանի մը ու ամփոփումն է զանազան քաղաքներու մէջ անոր տռւած Պուրճ Յամուտի լուսանկարներու ցուցահանդէսներուն: Գեղեցիկ հատոր մը, խնամուած նկարներով, կազմուած գրեթէ ամբողջութեամբ պուրճ համուտցիներու դիմանկարներէ, ամէն մէկը իր աշխատանքի կամ ապարէզի վայրին մէջ լուսանկարուած ու կարճ ծանօթութիւններով: Լուսանկարները մասնագիտական մակարդակով լարուած ու նկարուած արտադրութիւններ են: Պուրճ Յամուտը հոն կ՚արտացոլայ իր բնակիչներու խնամուած լուսանկարներուն ընդմէջէն, կարծես անոնք ըլլային ցուցափեղկի մէջ դրուած բնորդներ, Պուրճ Յամուտը ներկայացնող որպէս չնաշխարհիկ այցելութեան վայր:

Մածունեանինը ամբողջովին այլ բան է: Լուսանկարները առնուած են անմիջական կերպով ու տեղւոյն վրայ: Կան փողոցներ ու թաղեր: Կան բնակիչներ: Իշխողը սակայն

© Արա Մածունեան, «Նոր Ամանոս թաղամաս, Կէպէնեան շէնք»

կարծես Մածունեանի ներքին աչքն է ու յիշողութիւնը: Այս նկարները պատմութիւն մը կը պատմեն, ծնունդի, մեկնումի, յուսախաբութեան, բայց մանաւանդ տեղէ մը գալու պատմութիւնը: Ժամանակը կարծես սառած է անոնց մէջ: Դէմքեր կը նային մեզի ժամանակէն դուրս տեղէ մը կարծես: Երազներու ու յուսախաբութիւններու վայրն է այդ տեղը: Շատ անձնական ալպոմ մը, լուսանկարչական փորձագրութիւն մը, ինչպէս հեղինակը ինք կը նշէ կողքին, համեմուած կարճ գրութիւններով Արա Արծրունիէն, Արմենակ Եղիայեանէն, Աթոմ Էկոյեանէն, Յակոբ Փափազեանէն, Յրայր Էօլմէսէքեանէն, Նանսի Գրիգորեանէն, Ռազմիկ Շիրինեանէն, Սիմոն Աբգարեանէն, Թալին Ոսկերիչեանէն ու Վահէ Պէրպէրեանէն:

Այս առիթով մեր աշխատակից Յըրայր Անմահունին Մածունեանի հետ կատարեց հետեւեալ հարցազրոյցը:

© Արա Մածունեան, «նոր Ատանա թաղամաս»



ՀՐԱՅՐ ԱՆՄԱՅՈՒՆԻ. Գիրքդ Պուրճ Համուտի մասին է։ Լուսանկարչական համայնապատկեր մը կու տաս մեզի քու Պուրճ Համուտէդ, հոն ուր մեծցած ես։ Պիտի ուզէի որ խօսէիր քիչ մը անոր մասին, ձեռքդ լուսանկարչական գործիք անցնելէն առաջ եւ վերջ, որովհետեւ ինչպէս կ'անդրադառնաս նախաբանիդ մէջ, ասիկա կ'առնչուի նաեւ թատերական աշխատանքիդ։ Ինչպէ՞ս կը տեսնէիր Պուրճ Համուտը այդ ատեն, իր ընկերային վիճակով եւ քու տեղդ ո՞ւր էր անոր մէջ։

ԱՐԱ ՄԱԾՈՒՆԵԱՆ. Մանկութեան եւ պատանեկութեան տարիներս շատ որոշիչ դեր ունեցած են հետապնդած աշխատանքիս մէջ։ Պատկեր ըսուածը միշտ ներկայ էր տան մէջ շնորհիւ լուսանկարիչ եղբօրս։ Տունը հազարներով լուսանկար կար նետուած քիչ մը ամէն կողմ։ Տարին երկու անգամ՝ ձմռան ու ամռան, այդ հազարներով նկար պարունակող հսկայական սնտուկը մէջտեղ կ'ելլէր ու կրկին կը յայտնաբերէինք հոն դիզուած դէմքերը։ Ամէն տարի դուն ալ կը մեծնաս եւ նկարները ուրիշ հոլովոյթ կ'առնեն, ուրիշ պատմութիւն կը ստանան, քու պատմութեանդ վրայ բան մը եւս կ'աւելցնեն, նոր գիտ մը, ամրապնդուող յիշողութիւն մը, եւ այլն։ Ասիկա շատ մեծ դեր ունեցած է ինծի համար եւ ձեւով մը ամէն ինչ սկսած եմ տեսնել որպէս պատկեր։ Նոյնիսկ ծննդավայրս՝ Պուրճ Համուտը, միշտ պատկերի աչքով դիտած եմ։ Ասոր կը միանայ նաեւ սինեման, որովհետեւ պատկերը նախահայրն է սինեմային։ Այնպէս որ պատկերը մնայուն կերպով եղած է ներշնչումի աղբիւր, բառէն աւելի։

ՀԱ. Նկարներուն կը նայէիր որպէս պատմակա՞ն թէ պարզ ընտանեկան։

ԱՄ. Ընտանեկան, առանց ընդհանուր գիտակցութեան անպայման, պարզապէս վերյիշելու համար, թէ ովքե՞ր անցած են մեր ընտանեկան պատմութենէն, եւ ովքեր մնացած են. հայրս երբ կը նայէր նկարներուն, մէյ մըն ալ կ'ըսէր՝ «այս նկարը պատռեցէք, թափեցէք այլեւս»։ «Ինչո՞ւ», կը հարցնէինք։ «Մեռած է», կը պատասխանէր։ Խենթանալիք բան էր, որովհետեւ մարդը երբ ողջ է՝ արդէն կայ։ Նկարը արժէք կրնար ունենալ գուցէ մահանալէն ետք, բայց հօրս մօտեցումը ամբողջովին հակառակն էր։ Բոլորս կը ջղայնանայինք, «պա՛պ, ի՞նչ կը խօսիս, նկարին նպատակը յիշատակ ունենալն է», կ'ըսէինք։ Այնպէս որ մասնաւոր լուսանկարչական գիտակցութիւն մը չկար։ Յաճախ կը մտածեմ որ պահելու, արխիւ ունենալու մղումս հոնկէ կու գայ եւ անշուշտ եղբօրմէս։

Հ. Լուսանկարչութեան կողքին ունեցած ես նաեւ թատերական գործունէութիւն։ Վաթսունականներու ուսանողական շարժումները, հակամշակոյթի հոլովոյթները, Վիէթնամի պատերազմին դէմ համաշխարհային ցոյցերն ու Լիբանան հասնող հիփփիական խումբերը, կը

խորհիմ որ այս բոլորը ազդեցութիւն ունեցան թատրոնով զբաղողներուն վրայ: Կը հարցնեմ որովհետեւ առհասարակ հայութիւն ըսուածը հարցաքննող կեցուածք մը կայ ձեր ըրածներուն մէջ կարծես այդ ժամանակուընէ սկսեալ:

ԱՄ. Նախ ըսեմ որ բախտը չեմ ունեցած երկրորդականը, Սոֆիա Յակոբեան աշակերտ էի, աւարտելու, որովհետեւ նիւթական պատճառներով դուրս դրուած եմ դպրոցէն:

Հ. Եւ ատիկա շատ լուրջ հարց էր:

ԱՄ. Լուրջ հարց էր այո, որովհետեւ 15 տարեկան եւ, խանդավառ պռէօվէի կը պատրաստուիս, գիտակից ալ չես որ ծնողքդ նիւթական ինչ պայմաններու մէջ է, ինչ դժուարութիւններով քեզի դպրոց կը ղրկեն: Պարզապէս պահարանը ձեռքդ քանի մը ամիսը անգամ մը տեսչարան կ’երթաս բան մը կը յանձնես, այդքան: Կ’երեւի այդ օրերուն հօրս պայմանները փայլուն չէին եւ վճարման ուշացում ունէր: Շատ լաւ կը յիշեմ, հինգշաբթի, կէսօրէ ետք ժամը 4:00ի պռէօվէի սերտողութեան պահերէն մէկն էր: Տնօրէնը զիս կանչեց վար եւ ըսաւ, որ եթէ երկուշաբթի դրամը չբերես, դպրոց մի գար: Երկու օր ես ինծի պահեցի, մէկուն բան չըսի, բայց եղբայրս անդրադարձաւ, հարցուց եւ բացատրեցի: Յարցուց՝ դուն կ’ուզե՞ս կոր դպրոց երթալ: 15 տարեկան ես, ինչ պիտի ըսես, ո՛չ ըսի: Այդպէս ալ եղաւ ու սկսայ գործի երթալ:

Այնպէս որ, նոյնիսկ դպրոցական օրերուս, բացի մարզական գործունէութենէ, այլ բաներու մաս չեմ կազմած, միութենական չեմ եղած, միշտ դիտող եղած եմ: Այդ ալ իր պատմութիւնը ունի, նորէն ծնողքիս հետ կապուած, որովհետեւ օր մը երբ մայրս արտօնեց որ սկաուտութեան երթամ, պահանջեց որ ժամը 6:00ին տունը ըլլամ, ես ալ ժամը 8:00ին տուն մտայ: Քանի որ մեր համաձայնութիւնը չյարգեցիր, ասկէ ետք քեզի գայլիկութիւն չկայ՝ ըսաւ մայրս եւ վերջ: Այնպէս որ հազիւ երեք ժամ գայլիկ եղած եմ կեանքիս մէջ եւ 25 դրուշ ալ ցենգ վճարած: Այդ դիտող ըլլալս կ’երեւի վերջ ի վերջոյ լուսանկարչական ասպարէզի հասցուց:

Ինչ կը վերաբերի նշած համաշխարհային շարժումներուդ, անոնց ազդեցութիւնը կը զգացուէր մասամբ: Առաւելաբար Ամերիկայէն եկող երաժշտութիւնն էր՝ ռաք էնտ ռոլը, որ կը խանդավառէր մեզ:

Հ. Առաւել ֆիլմերը, որոնց մէջ Ամերիկան եւս սկսաւ անդրադառնալ իր ընկերային անարդարութեան:

ԱՄ. Շատ ճիշդ: Այնպէս որ բնական բան մըն էր որ նոր սերունդը ուզէր տարբեր ըլլալ զինք նախորդող սերունդէն, ջարդէն փրկուածէն, որ հազիւ ինքզինք կրցած էր ոտքի պահել: Այնպէս որ հոսանքէն դուրս ելլելու փորձերը վտանգաւոր կը նկատուէին, որովհետեւ ձուլուելու հարցը միշտ ներկայ էր ճերմակ ջարդի ուրուականով: Բնականա-

© Արա Մածունեան, «Նոր Մարաշ թաղամաս»

բար այդ սերունդը դէմ կեցաւ մեր սերունդի պահանջներուն:

Յ. Բարոյական հասկացողութեան տարբերութիւններն ալ կային: Անոնց մօտ պահպանողական, շատ լուրջ, ընտանեկան արժէքներու վրայ հիմնըւած ընկերութեան մտապատկեր մը կար, մինչդեռ նորերը կ'ուզէին ցոյց տալ ատոր տակի հարցերը, երեւոյթներու ետին պահուըտած խնդիրները, որ ինքնիր հետ անկեղծ ըլլալու հարց մը կը դնէր:

ԱՄ. Ծնողներուս պարագային, երկուքն ալ վերապրողներ էին: Յայրս

© Արա Մածունեան, «Նոր Ամանոս թաղամաս»

ընդհանրապէս ներամփոփ էր ու լուռ ատոր մասին, իսկ մայրս շատ աւելի արտայայտուող: Իրեն համար ջարդէն վերապրիլը մեծ նշանակութիւն ունէր եւ ատոր համար ալ չափազանց նախանձախնդիր էր մեր ապագային նկատմամբ: Այսինքն չէր երեւակայեր որ իր զաւակները, նոյնիսկ իրմէ ետք թոռները, կրնային ոչ հայու հետ ընտանիք կազմել: Այս էր մթնոլորտը եւ ամէն ձեւով կը փորձէին մեզ պաշտպանել դուրսի բոլոր հոսանքներէն, որոնք բոլորը հայապահպանման դիտանկիւնէն վտանգաւոր կը նկատուէին: Մայրս այդքան ալ պահպանողական կին մը չէր, բայց երբ հարցը ատոր գար, ընտրութեան խնդիր չկար, սեւ-ճերմակ էր իրեն համար:

Հ. Կ՚ուզեմ խօսիս թատրոնի մասին, ապա անցնինք սինեմային եւ Պուրճ

Համուտի գիրքին: Լուսանկար, թատրոնը, սինեմա – մէկէն միւսը ուղիղ գիծ մըն էր քեզի համար: Զանազանութիւններ կայի՞ն:

ԱՄ. Գիտես, Սիմոն Մնակեանի վերջերս պատահած մահը Մարսէյլ շատ բան ետ բերաւ յիշողութեանս մէջ: Դեռ ցնցուած եմ: Թատրոն սկսած եմ Սիմոնին հրահիրումով: Հաւանաբար 9-10 տարեկան էի, ինք ալ ինծմէ հինգ տարի մեծ: Առաջին թատրոնը մեր թաղը գտնուող իր մեծ հօրը բակին մէջ ըրինք: Բոլորս մասնակցեցանք, ծածկոց, վերմակ բերինք, որպէսզի վարագոյր շինենք: Հանդիսատեսներն ալ թաղեցիներն էին, թոմարզացիները: Դուրսէն մարդ չկար: Ներկայացումը չեմ յիշեր, սակայն թատրոնի հանդէպ հետաքրքրութիւնս հոնկէ սկսաւ: Զաւարեան անունով թատերախումբ մը կար, որ Նոր Թրատի ակումբին թատերախումբն էր, բեմադրիչն ալ Գառնիկ Գազանճեանն էր: Երեխայի ձայնի կարիք ունէին եւ ձայնս արձանագրեցին: Աւելի ուշ մաս կազմեցի Զոհրապի եւ Սիմոնի խումբերուն: Տասնհինգ տարեկան պատանիի մը համար թատրոնը՝ ֆութպոլէն ետք, կամ անոր չափ հետաքրքրական բան մըն էր:

Հ. Դպրոցէն դուրս մնալէդ ետք թատրոնը անոր տեղը առաւ:

ԱՄ. Այո՛, ինքզինքս փաստելու ձեւ մըն էր:

Հ. Այդ օրերու թատրոնին մէջ կաղապարէն, ձեւէն ազատելու եւ նիւթը այժմէականացնելու խնդիրներ կայի՞ն: Կը յիշեմ Սիմոն Մնակեանի թատերախաղերը, օրինակ «Արա եւ Արշակ»ը, առօրեայ հագուստներով բեմ ելլելը, առանց տարազի, վարագոյրի կամ աւարտին բոլորին բեմ գալ նստիլը: Այս ամէնը շատ տպաւորած էին զիս:

ԱՄ. Մեզմէ առաջ ալ կային շատ հետաքրքրական կերպարներ, մեզմէ քիչ մը աւելի երէց, օրինակ՝ Զոհրապը, Սիմոնը, Վարդգէս Նարկիզեանը, որոնք «Արա եւ Արշակ»ը ներկայացուցին: Ինծի համար ալ մեծ ցնցում էր երբ հեծիկով բեմ ելան. Արշակը Հայաստանէն Ասորեստան պիտի երթար եւ հեծիկով եկաւ: Ամբողջ Լիբանանի մէջ նման բան չկար, ոչ միայն լիբանանահայ շրջանակի մէջ: Այս ամէնը մեծ խանդավառութիւն ստեղծած էր:

Հ. Զուգահեռ իրականութեան մէջ կ'ապրէինք բաղդատած շուրջի արաբական իրականութեան, իւրաքանչիւր համայնք կարծես իր իրականութիւնը ունէր:

ԱՄ. Պուրճ Համուտը պարիսպ էր ձեւով մը: Կամուրջը կ'անցնիս, ուրիշ տեղ ես, անձեռնմխելի:

Հ. Պէտք է նաեւ յիշեցնել որ այդ օրերուն Լիբանանի հայութեան քաղաքական ղեկավարութեան կեդրոնը Պուրճ Համուտը չէր: Քաղաքին

հետ բաղդատուած Պուրճ Համուտը շատ ժողովրդական կը նկատուէր եւ վերէն դիտելու ձգտում կար: Կեդրոնը քաղաքն էր եւ բարձր արուեստ, բարձր մշակոյթ, գրողներ, եւ այլն, որոնք առհասարակ չէին ուզեր նայիլ այս կողմ:

ԱՄ. Շատ անգամ չէր իսկ խրախուսուէր քաղաքի երիտասարդներուն Պուրճ Համուտ երթալ:

Յ. Մինչեւ որ պատերազմը այդ ամէնը փոխեց: Ըսածս այն է, որ ներքին ընկերային եւ մշակութային հարցեր ալ կային, զուգահեռ իրականութիւններ՝ հոս ալ: Լիբանանի պատերազմի սկիզբին կը մեկնիս Ամերիկա եւ հոն «Վարդագոյն փիղը» ֆիլմը կ՚ընես լիբանանեան պատերազմին մասին: Կրնա՞ս անոր մասին երկու բառ ըսել:

ԱՄ. Այդ օրերուն, այսօր ալ տարբեր չէ, ցուցադրուող ֆիլմերուն մեծ մասը օտար ֆիլմեր էին՝ ամերիկեան, ֆրանսական, իտալական: Ֆելլինիի ֆիլմերը շատ մեծ տպաւորութիւն ձգած էին մեր վրան, որովհետեւ շատ նմանութիւն կը տեսնէինք Ֆելլինիի եւ մեր շուրջի կերպարներուն միջեւ ու միշտ կ՚ըսէինք, որ պիտի գայ օրը, երբ Պուրճ Համուտն ալ քարտէսի վրայ պիտի դնենք միջազգային չափանիշով: Այսինքն Պուրճ Համուտի մասին ֆիլմ նկարելու փափաքը սկիզբէն կար, ենթագիտակցութեան մէջ էր: Երբ «Վարդագոյն փիղը» պատրաստեցի, պատերազմին հետ անձնական փորձառութիւնս էր որ կուզէի նկարել, իբրեւ առաջին գործ, անձնական պատմութիւն մը: Ատիկա շատ բնական թուեցաւ ինծի:

ՅԱ. Ֆիլմը նաեւ այդ օրուան երիտասարդութեան ամբողջ մտահոգութիւնը ունի, կը կրէ իր մէջ:

ԱՄ. Այո՛, խտացած է: 22 վայրկեան տեւող ֆիլմ մըն է: Հարցերը հոն կը ներկայացուին, չեն վերլուծուիր: Ամենէն յարմարը նկատեցի ներկայացնել իմ ապրածս կամ աւելի ճիշդ երեւակայածս, որովհետեւ այդ օրերուն հոն չէի արդէն, 76ին ձգած ըլլալով Լիբանանը, որմէ ետք վիճակը ծանրացաւ: Բայց եղբայրս այնքան շատ նկար կը ղրկէր ինծի, մնայուն կերպով, պատերազմին առնչուած, որ այդ բոլորը մտքիս մէջ էին կարծես ականատեսի դրութեամբ:

Տասնամեակներ ետք միայն՝ 2008ին վերադարձայ քամերայով, խորքին մէջ գրպանի գործիքով մը եւ ոչ մասնագիտական: Գիտակցութիւնը չունէի վաւերագրելու, ամենայն անկեղծութեամբ կ՚ըսեմ: Պարզապէս հետս էր եւ կ՚ուզէի հոս-հոն քանի մը նկար առնել: Այդքան: Բայց կեցութիւնս երկարեցաւ, որովհետեւ եղբօրս հիւանդութիւնը բաւական լուրջ էր եւ իմ վրաս ծանր ազդեցութիւն ունեցաւ: Եղբայրս էր որ նկարչութեան հանդէպ սէրը տուած էր ինծի եւ ընդհանրապէս արուեստի հանդէպ հետաքրքրութիւնս իրմէ կու գայ: Ուրեմն ժամանակս լեցնելու կամ զուգէ այդ հոգեբանական

դժուար վիճակներէն դուրս ելլելու համար սկսայ աջ-ձախ նկարել: Կը նկարէի առանց մտածելու, ինչ որ շատ հարազատ կը թուէր ինծի, ոչ թէ բան մը հետապնդելով: Բնազդիս կը հետեւէի, յիշողութենէս եւ զգայարանքներէս եկող մղումներուն:

ՅԱ. Յիշողութեանդ մէջ մնացածն ու այդ օրուանը բաղդատելո՞ւ մղումով:

ԱՄ. Որոշ չափով հաւանաբար: Ուզես կամ չուզես պիտի բաղդատես, բայց ատիկա առաջնահերթութիւն չէր: Նոսթալժի չէր: Գիտէի, որ անցեալը պարզապէս մեր յիշողութեան մէջ է եւ իմաստ չունէր զայն փնտռել: Յոն չէր այլեւս: Ներկան էր որ կը նկարէի, անցեալին հետ կապելով: Այդ անցեալը մտքիս մէջ տակաւին մեծ կարողականութիւն ունէր եւ անոր բացակայութիւնը կը խանգարէր զիս:

© Արա Մածունեան, «Քէմփ Սանճաք»

Սկսայ ներկան հարցաքննել պատկերներու միջոցով: Թերեւս կան մարդիկ, որ պիտի կարծեն թէ Պուրճ Համուտը կը նուաստացնեմ այդ նկարներով, սակայն բացարձակապէս այդպէս չէ, ընդհակառակը: Մեծ սէր կար մէջս ու կայ տակաւին Պուրճ Համուտի հանդէպ ու այդ սէրն էր, որ կը մղէր զիս նկարելու:

ՅԱ. Ե՞րբ սկսար նկարներու գիրքի մասին մտածել:

ԱՄ. Քանի մը տարի առաւ: Մօտ 1,500 նկար առի եւ 8 ամիս չնայեցայ, մէկդի դրի պատկերները: Վերջն է, որ համարձակութիւն ունեցայ կամացկամաց նկարներուն վերադառնալու, որովհետեւ կորուստի ցաւը կար, եղբօրս մահը: Իր պատճառով վերադարձած էի ու այդ նկարները առած: Ութ ամիս ետք ձեռք առի ու սկսայ խաղալ անոնց հետ: Սօսին էր, ինք ալ լուսանկարիչ, որ ցոյց տուաւ անոնց մէջի արժէքը ու մղեց զիս,

© Արա Մածունեան, «Խալիլ Պատաուի թաղամաս»

որ մտածեմ բան մը ընելու մասին: Տակաւին յստակ չէր թէ ինչ կրնայի ընել անոնցմով: Բայց շարունակեցի խաղալ նկարներուն հետ, եւ կամաց-կամաց գիրքը սկսաւ բիւրեղանալ մտքիս մէջ:

ՅԱ. Գիրքը իբրեւ շա՞րք թէ հաւաքածոյ: Այսինքն գիրքի խմբագրութեան ընթացքին նկարները իբրեւ յաջորդականութի՞ւն կը տեսնէիր թէ առանձին-առանձին նկարներ:

ԱՄ. Իբրեւ հաւաքածոյ: Երբ գիրքը խմբագրել սկսայ էջերուն ու նկարներուն յաջորդականութեան մասին մտածած չէի, այլ բնականաբար սկըսայ շարել եւ վերջը անդրադարձայ ըրածիս, որ գիրքը ինքնին իր պատմութիւնը, հոլովոյթը ունի, կը սկսի տեղէ մը եւ կը վերջանայ տեղ մը:

ՅԱ. Սկիզբն ու վերջը յստակ են գիրքին մէջ:

© Արա Մածունեան «Նոր Ամանոս թաղամաս, Կէպէնեան շէնք»

ԱՄ. Բայց ատիկա անգիտակցաբար էր: Եղբօրս թաղումն էր, իր հետ նաեւ ծննդավայրիս շիջումն էր գուցէ մտքիս մէջ: Բնական էր գուցէ ատիկա, սակայն զիս շատ աւելի փշաքաղեց:

ՅԱ. Եղբօրդ սերունդին թաղումն էր, եղբօրդ սերնդակիցներուն՝ քիչ մը մեծ, քիչ մը պզտիկ: Կը տեսնես այդ արհեստները, որոնք պիտի չմնան, յաջորդ սերունդը կօշիկ պիտի չնորոգէ, մանր վաճառականները պիտի չըլլան:

ԱՄ. Մէկ բանի կը զղջամ, երանի այդ բոլորին գիտակցութիւնը ունեցած ըլլայի սկիզբէն՝ օրինակ սինեմայի սրահներուն անհետացումը: Յաշուած եմ, մօտաւորապէս 16 սինեմա գոյութիւն ունեցած է այդ մէկ քառակուսի մղոնին մէջ, 80 տոկոսը հայկական անուններով: Օրինակ «Քնար»ը, Պուրճ Համուտի մուտքին էր, տակաւին մուտքը, անունը կան, ամերիկեան ճարտարապետութեան ընդօրինակութիւն: «Քնար»ը աւելի արաբական ֆիլմերու կեդրոն էր, որովհետեւ Պուրճ Համուտի մուտքին ժամական-օրականով գործաւորներ կը կենային եւ ուրեմն յստակ յաճախորդութիւն մը ունէր: Սպասողներուն ժամանց կ'ապահովէր: Կար նաեւ «Գերմանիկ» սրահը, որ Մարաշի հայրենակցական միութեան կը պատկանէր եւ Լիբանանի երկրորդ մեծագոյն սրահն էր՝ Համբայէն ետք: Այսօր չկայ: Պուրճ Համուտի մէջ այսօր գործող միակ սինեման որ տեսայ «Ռոյալ»ն էր՝ Ապրոյեանի գործարանին ճիշդ դիմացը: Ան ալ երրորդական կարգի սինեմա էր: Պուրճ Համուտի մէջ առաջին կարգի սինեմա կը նկատուէին «Սանթրալ»ը, «Գերմանիկ»ը: Կը ցաւիմ որ ատոնք չեմ կրցած վաւերագրել: Այսօր չկան, անուններն ալ չկան եւ հաւանաբար միակը որ մնացած է իբրեւ անուն՝ «Արաքս»ն է, սակայն իբրեւ մինիմոլ (փոքր հանրախանութ): Բացառիկ երեւոյթ էին Պուրճ Համուտի սինեմաները: Հոն մտնելու համար անպայման դրամի պէտք չունէինք: Կը բաւէր գիտնալ թէ ո՛վ կեցած է մուտքին, որո՛ւ ընկերը, բարեկամն է: Օրինակ, սինեմա «Արաքս»ինը ընկեր Աբովեանն էր, որ մեզի՝ թատրոնի տղոց հանդէպ բացառիկ համակրանք ունէր, ատոր համար ալ շատ դիւրութեամբ կը մտնէինք այդ սինեման: «Մտէք», կ'ըսէր եւ վերջ: Ցետոյ կային ծրի կտրօնները, որոնք կը տրուէին մեզի եւ իրաւունք կու տային տուեալ օր, տուեալ ժամուն մտնել սինեմա: Սինեմայի մշակոյթ մը կար այդ բոլորին մէջ:

ՅԱ. Նկարներուն մէջ յաճախ տիպարները կարծես քեզի կը նային, գուցէ իրենց մտքէն «ասի ո՛վ է» կ'անցընեն: Երբ նկարուողը քեզի կը նայի, քեզ ալ իր հետ ինքնաբերաբար կը մտցնէ նկարին մէջ: Այդ յարաբերութիւնը ի՞նչպէս էր:

ԱՄ. Կ'ըսեն թէ լուսանկարչութեան մէջ նոր բան չես նկարեր, այլ կը նկարես յիշողութենէդ շերտ մը: Այսինքն

կեանքի ընթացքին ենթագիտակցութեանդ մէջ այնքան բան կուտակած կ՚ըլլաս, տեսողական այնքան շերտեր, որ երբ կը նկարես, այդ շերտերէն մէկը կ՚առանձնացնես: Այնպէս որ պատկերը նկարելէդ առաջ կայ, կազմած ես զայն, որովհետեւ բոլոր զգայարանքներդ գործի կը լծուին նկարած պահուդ՝ յիշողութիւնդ, հաւաքական գիտակցութիւնդ, հոտառութիւնդ, լոյսի անկիւնը, որակը, այս բոլորը: Ընդերքէդ կու գայ:

Ընդհանրապէս բոլոր արուեստներու պարագային պէտք է ներսէդ, ստամոքսէդ գայ, որովհետեւ մտածողութիւնը, որքան ալ քեզ մտաւորական իմաստով մենաշնորհեալներու կարգին դնէ, շատ յաճախ նաեւ կ՚աղաւաղէ, իրականը կ՚աղաւաղէ, մինչդեռ երբ ներսիդիէդ կը նկարես՝ չես սխալիր:

ՅԱ. Գիրքին կ՚ընկերանան գրութիւններ՝ նուազ կամ առաւել ծանօթ անուններէ: Ինչպէս կատարեցիր ընտրութիւնը:

ԱՄ. Գրութիւն աւելցնելու գաղափարը շատ աւելի ուշ ծագեցաւ: Երբ զգացի թէ պատկերներու հոլովոյթը կառոյցի վերածած էի, զգացի որ այս ամէնը շատ եսակեդրոն պիտի ըլլար եթէ մնայի նկարներու վրայ միայն: Ձեւով մը յառաջ մղեցի այն գաղափարը թէ Պուրճ Համուտը միայն ինծի չի պատկանիր, իմ սերնդակիցներուս կը պատկանի նաեւ, ուրեմն զիրենք ալ ուզեցի այս ճամբորդութեան մէջ հետս տանիլ: Գրութիւն աւելցնելը պատկերներուն համազիր կու տար եւ հաւասարակշռութիւն մը կը պահպանուէր: Չուզեցի նաեւ պատկերներուն խորագիրներ դնել, որովհետեւ ըստ ինծի, եթէ նկարը ինքնին բան մը չ՚ըսեր դիտողին, խորագիրով կը սկսի դիտել զայն, ինչ որ մօտեցումիս հակառակ է: Պատկերն է, որ պէտք է խօսի: Գիրքին աւարտին նշած եմ նկարուած վայրերուն անունները պարզապէս: Փափաքս այն էր որ հաւաքական աշխատանք մը ըլլայ, եւ Պուրճ Համուտի մասին գրողները նուազագոյնը տեսած ըլլան, ֆիզիքապէս հոն գտնուած ըլլան: Աթոմ Էկոյեանի պարագային այդ էր. Պուրճ Համուտ գտնուած է:

ՅԱ. Պատերազմի տարիներու մթնոլորտին հետ բաղդատելով, երբ հայութեան համար Պուրճ Համուտը ապահովութեան գերագոյն վայրն էր, մանաւանդ սկիզբը երբ ինքնապաշտպանութեան միջոցները կը կազմակերպուէին ու հսկայական խանդավառութիւն կար, այսօր փոխուած ինչ տեսար հոն:

ԱՄ. Այդ օրերուն մենք մեր ճակատագիրը ստանձնելու յոյսը զօրաւոր էր, մինչդեռ այսքան տարի ետք ամէն մարդ իր գործին վերադարձած է, թէեւ վայրը նոյնն է, սակայն շատ բան փոխուած է, մարդիկ ալ փոխուած են, ես ալ փոխուած եմ: Տարիքի մասին չէ միայն: Համայնական բան մը կայ՝ հաւաքական զգացում մը, յոյս մը, որ կորսուած է: Գիրքին մէջ ատիկա

շատ յստակ է: Ժպտացող հազուագիւտ դէմքեր կան, հակառակ անոր որ պուրճ համուտեան հիմըրն ու զեվզէկութիւնը կը շարունակուին, բայց ատիկա ուրիշ դրսեւորում մըն է, փոլքլորի կը պատկանի:

Յ. Ա.- Փոլքլորը իր կարգին, սակայն այդ հիւմըրը այլեւս կորսնցնելիք բան չունեցողի հիւմըր է քիչ մը: Վերադառնալով գիրքին, հրատարակութենէն երկու տարի անց, ինչպէ՞ս կը զգաս անոր նկատմամբ, գիրքէն առաջ եւ վերջ փոփոխութիւն կա՞յ:

ԱՄ. Չափազանց գոհ եմ որ ըրի, միաժամանակ յաւակնութիւն չունիմ որ Պուրճ Համուտի վերջնական պատմութիւն մըն է ըրածս, աւելի հաւանաբար նախաբան մըն էր: Ես իմս ներկայացուցի եւ վստահ եմ որ շարունակողներ պիտի ըլլան, յոյսով եմ որ կ'ըլլան: Հաւանաբար կանուխ է համապարփակ պատկերազարդ պատմութիւն մը ընելու, որովհետեւ պատմութիւնները տակաւին շատ անձնական են, ենթակայական: Պատմական գործ մը չէ ասիկա, հին նկարներ չկան, նորին կամ ապագային հետ բաղդատական չկայ: Այսօրուան Պուրճ Համուտն է, ներկայ ժամանակով գիրք մըն է: Նոյն առումով հինգ տարի ետք այսօրուան Պուրճ Համուտն ալ գոյութիւն պիտի չունենայ, այլ այդ օրերու Պուրճ Համուտ մը գոյութիւն պիտի ունենայ: Հաւանաբար հետաքրքրական պիտի ըլլար որ ամէն ժամանակաշրջան իր պատմութիւնը ներկայացնէ: Գիրքը ինծի համար դրական փորձառութիւն մը եղաւ եւ էջ մը դարձուցածի պէս կը զգամ: Այդ ալ իմ բաւարարութիւնս է:

ՅԱ. Շնորհակալութիւն Արա գրոյցին համար եւ կը մաղթենք որ ուրիշ էջեր եւս կը բացուին դիմացդ ապագային:

ԱՄ. Շնորհակալութիւն:

© Արա Մածունեան



ԹՂԹԱՏԵԼՈՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

Ընթերցո՛ղ, բաց այս գիրքը ու [illegible]: Քու պատմութիւնդ կայ հոն:

Այս գիրքով Արա Մածունեան հաղորդած կը ձգէ ժամանակաշրջանի մը պատկերազարդ պատմութիւնն ու վկայութիւնը:

Մուրծ համայնքը բազմերես է՝ հայու գոյութեան [illegible]:

Ըստ լուսանկարներու բացայայտած «պատմուածքներուն» հոն կրնանք գտնել [illegible] մարդիկ և հոգիներ, սէր և [illegible], երջանկութիւն և տառապանք, աղօթք և հայհոյանք, [illegible] և թեթևամտութիւն, [illegible] պարտականութիւն և իրենց «համաշխարհայնացում», անձնազոհութիւն և [illegible], [illegible] և [illegible], [illegible] և [illegible], հայրենասիրութիւն և [illegible], [illegible], [illegible] և [illegible]..., [illegible] և [illegible], [illegible], և [illegible]..., [illegible] «հայ» և [illegible] հայ [illegible]...,

կը [illegible]:

Աշխարհի մը [illegible]...:

Այս բոլորը [illegible] կը [illegible] [illegible] մը, որու [illegible]

[illegible] աշխարհի մէջ:

Մուրծ համայնք..., [illegible] հայոց Պատմութիւն:

× × ×

Արա Մածունեանի լուսանկարչական ոսպնեակը [illegible] [illegible] է որուն [illegible] խորքը և [illegible] է [illegible] [illegible] [illegible] ու [illegible]: [illegible] լուսանկարներու պատմութեան՝ [illegible] իր հոգիի և մտքի [illegible]: [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] և [illegible] խորքը: Կը [illegible] թէ Արա Մածունեանի լուսանկարներուն մէջ [illegible] [illegible] կը [illegible]: [illegible]՝ [illegible]: [illegible] վրայ [illegible]՝ [illegible] և [illegible]: [illegible]՝ [illegible]: [illegible]՝ [illegible] և հայ [illegible]՝ [illegible]:

Արա Արծրունիին վկայութիւնը
Արա Մածունեանին լուսանկարչական արուեստին մասին:



2

Կը մաղթեմ որ Արա Մածունեանի [illegible] պատմագրական [illegible] այս գիրքը՝ ճամբայ բանայ «Մուրճ համոյթի ներկայացումներ» [illegible] համար։ Այո՛, 1975-1990 [illegible], Մուրճ համոյթը ունեցած է իր ներկայացումները՝ իր [illegible] եւ իր [illegible], իր [illegible] եւ [illegible] եւ իր [illegible]։

Այո՛, այդ [illegible] Մուրճ համոյթը [illegible] [illegible]։

Սակայն, [illegible] օրեր [illegible]...։

Այս վերջին [illegible], Մուրճ համոյթը կը [illegible] եւ կը «[illegible]» [illegible]։ [illegible] մէջ [illegible] կը [illegible]... Սակայն, [illegible]... Այսօր, [illegible]... Հայաստանի [illegible]...։

[illegible]

Արա Մածունեանի [illegible] մէջ [illegible] Մուրճ [illegible] Մուրճ համոյթի մէջ...։

×
× ×

Սիրելի Արա Մածունեան, [illegible] մէջ։ Բայց, հաւատա՛, այս գործին մէջ [illegible] է [illegible], հայրենասիրութիւնը, [illegible], եւ ... [illegible]։

Գիրքդ, հին ընկեր, [illegible] մեր [illegible] մէջ...։

[illegible] կը [illegible] այս [illegible] մնա-յուն դրոշմ մը ձգելու։

Ողջո՛յն Արա Մածունեան, [illegible] մը [illegible]։

1 Յունուար 2014

Արա Արծրունի

© Արա Մածունեանի արխիւէն

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մանկութիւն չունեցող մարդիկ
Հեղինակ՝ Անդրանիկ Ծառուկեան

Ոստայն 9- Մանրանկար
Հեղինակ՝ Վրէժ-Արմէն



Յօդուածներ
Հեղինակ՝ Գրիգոր Յակոբեան

Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարանը, Պէյրութ, վերահրատարակած է Անդրանիկ Ծառուկեանի *Մանկութիւն չունեցող մարդիկ* գիրքը, որ առաջին անգամ լոյս տեսած է 1955ին եւ արժանացած բազմաթիւ վերահրատարակութիւններու: Գիրքը կը պատմէ ցեղասպանութեան տարիներուն Տէր-Զօրի ճանապարհով Հալէպ հասած մանկահասակ հայ որբերու դժուարութիւններուն, մտահոգութիւններուն ու անոնց առօրեային մաս կազմող տխուր եւ ուրախ դէպքերուն մասին:

Լոյս տեսաւ Վրէժ-Արմէնի «ՈՍՏԱՅՆ 9 – Մանրանկար» առցանց հատորը, որ մատչելի է ընթերցողին ՀայերէՆblog կայքէջի «Գիրքեր» բաժնին մէջ https://hayerenblog.wordpress.com : Հատորը կը պարունակէ 33 կարճ պատմուածքներ: Հատորին շապիկը գործն է գանատաբնակ արուեստագէտ Կարօ Մարկոսեանի:

Հատորին մէջ տեղ գտած գրութիւններէն իւրաքանչիւրը փորձած է լուսանկարի մը նման «պահ» մը որսալ կեանքէն, ապրուած կամ՝ գրողին կողմէ, կամ ալ ուրիշներու, որոնք զանոնք պատմած են առանց գուցէ կասկածելու, որ օր մը կրնան գրի առնուիլ: Ֆրանսերէն արտայայտութիւնը՝ «pris sur le vif», լաւապէս կը բացատրէ այս մանրանկարներուն բնոյթը, այսինքն առնուած կեանքէն՝ իրենց բնական վիճակին մէջ իսկ, առանց շպարի, առանց զարդարանքի:

«Անտարես» հրատարակչատունը, Երեւան, 2018ին լոյս ընծայած է անուանի գրականագէտ, բանասիրական գիտութիւններու դոկտոր Գրիգոր Յակոբեանի յօդուածներու ժողովածուն, որ կ’ամփոփէ գրականագէտին ժամանակակից՝ Հայաստանի եւ սփիւռքի գրողներուն հրատարակած հատորներուն եւ հայ գրականութեան խնդիրներուն նուիրուած գրականագիտական 30 յօդուածները: Հատորը հրատարակութեան պատրաստած են Գուրգէն Գասպարեանն ու Արքմենիկ Նիկողոսեանը: Գիրքը հրատարակուած է Գրիգոր Յակոբեանի ծննդեան 60ամեակին առիթով:



Մեր շէն սեղանէն
մամիկներուս խոհանոցէն
համեր եւ յուշեր
Հեղինակ՝ Թագուհի Թովմասեան
Թրքերէնէ թարգմանեց՝
Արփի Թոթոյեան

«Արաս» հրատարակչատունէն լոյս տեսած է Թագուհի Թովմասեանի Մեր շէն սեղանէն գիրքը (խմբագիր՝ Սեւան Տէյիրմենճեան)։ Գիրքը կը տարբերի խոհագիրներու ընկալեալ հալաքածոներէ։ Ան ճանապարհորդութիւն մըն է դէպի այլեւս «անցեալ» պիտակը կրող օրերը։ Հեղինակը՝ Թագուհի Թովմասեան, ընթերցողին կը փոխանցէ մանկութեան ու պատանեկութեան տարիներուն մեծ մայրերէն ու ընտանիքի երէցներէն իր սորված աւելի քան երեսուն կերակուրներու, աղանդերներու, աղցաններու, անուշեղէնի ու ըմպելիներու պատրաստման եղանակները՝ անոնց միախառնելով իր յուշերը անձերու կամ վայրերու մասին։

Գիրքը ո՛չ միայն խոհանոցային վարպետութիւն փորձարկելու առիթ մըն է հետաքրքիր խոհարարներուն համար, այլ նաեւ յուշագրական անգուգական հրատարակութիւն մը։

Ինքնագիր 9
Գրական հանդէս
Խմբագիրներ՝
Վիոլետ Գրիգորեան
Վահան Իշխանեան

«Ինքնագիր 9»ը գրական հանդէսը հրատարակութիւնն է Ինքնագիր գրական ակումբին։ Հատորը լոյս տեսած է 2018ին, Երեւան, «Գալուստ Կիւլպէնկեան» հաստատութեան աջակցութեամբ։ Խմբագիրներն են՝ Վիոլետ Գրիգորեանն ու Վահան Իշխանեանը։

Հատորը ունի չորս բաժին՝ ինքնագիր, բնագիր, թարգմանութիւն եւ գրախօսական։ Հատորին մէջ տեղ գտած են նաեւ Ինքնագիր գրական ակումբի կազմակերպած 2018թ. ապրիլ-մայիսեան յեղափոխութեան թեմայով գրական մրցոյթին առաջին չորս մրցանակները ստացած գրողներուն՝ Միսաք Խոստիկեանին, Համբարձում Համբարձումեանին, Գէորգ Տէր Գաբրիէլեանին եւ Բիւրակն Իշխանեանին գրութիւնները։



«Յառաջ»
ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ 1976-1987
Գրական ու վերլուծական էջեր
Պատրաստեց՝ Արփի Թոթոյեան
Խմբագիր՝ Գրիգոր Պըլտեան

«Յառաջ. Միտք եւ արուեստ 1976–1987» խորագրով ու «Գրական ու վերլուծական էջեր» ենթախորագրով հատորը լոյս տեսաւ Երեւան, 2018ին, «Սարգիս Խաչենց», «Փրինթինֆօ», «Անտարես» հրատարակչական երրորդութեան կողմէ։ Հատորը կազմած է հրապարակագիր եւ «Յառաջ»ի խմբագիրներէն Արփի Թոթոյեան։ Հատորին խմբագիրն է սփիւռքահայ գրող եւ մտաւորական Գրիգոր Պըլտեանը։ Հրատարակութիւնը, որ տպագրուած է Լիզպոնի «Գալուստ Կիւլպէնկեան» հաստատութեան հովանաւորութեամբ, ձօնուած է «Յառաջ»ի բազմամեայ խմբագիր Արփիկ Միսաքեանի (1926–2015) յիշատակին։

Նորատիպ հատորը կը խմբէ «Յառաջ. Միտք եւ արուեստ»ի մէջ 1976էն մինչեւ հոկտ. 1987 տպագրուած նիւթերէն ընտրանի մը, շուրջ իննսուն յօդուած, ստորագրուած 21 հեղինակէ։

ԱՐԱ ՄԱԾՈՒՆԵԱՆ

Բեմադրիչ, շարժանկարիչ եւ անկախ արտադրիչ Արա Մածունեանը կ'ապրի եւ կը ստեղծագործէ Լոս Անճելըսի մէջ: Շարժապատկերի եւ պատկերասփիւռի մարզին մէջ ստացած է պսակաւոր արուեստից եւ մագիստրոսի վկայականներ՝ Քալիֆորնիոյ *UCLA* համալսարանէն: Հեղինակն է զանազան ֆիլմերու, ինչպէս՝ վաւերագրական ժապաւէններու, դաստիարակչական տեսերիզներու եւ պատկերասփիւռի ծանուցումներու:

Արա Մածունեանի *Վարդագոյն Փիղը* (1988), որ կը պատմէ Լիբանանի քաղաքացիական պատերազմին ընթացքին թատերախումբի մը անդամներուն միջեւ արուեստի եւ կեանքի շուրջ վէճերուն մասին, արժանացած է Panavision մրցանակին եւ պատկերասփռուած շարժապատկերի միջազգային զանազան փառատօններու ընթացքին եւ պատկերասփիւռային զանազան կայաններէ:

Ան եղած է Հայաստան Համահայկական հիմնադրամին պատկերասփռած դրամահաւաքներէն (թելեթոն) ութին արտադրիչը, ինչպէս նաեւ ֆիլմեր արտադրած է Լոս Անճելըս գաւառի գաղթականներու ծրագիրին համար եւ դասախօսած՝ ՅՕՄի կազմակերպած ամառնային ուսմանց ծրագիրներուն ընթացքին: Մածունեան նկարահանման իր վերջին գործը կատարած է «Մելթտաուն» ֆիլմին համար, որ հրապարակուեցաւ 2015ին: Որպէս դերասան բեմ բարձրացած է *Պարոն Կարպիս*, *Երկու Հարիւր*, *Աւապախրում* եւ *Վարդագոյն Փիղ* թատերախաղերուն մէջ: Ան գործակցած է նաեւ Սմիթսոնիըն հաստատութեան հետ իրականացնելու «Իմ Հայաստանը» (2018) ծրագիրը:

2016ին, հրատարակած է Birds' Nest a Photographic Essay of Bourj Hammoud լուսանըկարչական ալպոմը: